

Հրատարակվում է
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման ակադեմիայի
գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր

խմբագրական խորհուրդ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր
(նախագահ)

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ փոխվարչապետ,
ՀՀ տարածքային կառավարման
նախարար

ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ նախագահի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ

ՄԱՆՎԵԼ ԲԱԴՂԱՆՅԱՆ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհրդի նախագահ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

իրավագիտության դոկտոր

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր

ԱՂԱՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր

ԷՂՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

քաղաքագիտության դոկտոր

ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

հոգեբանական գիտությունների
դոկտոր

ԳԱՐԻԿ ՔԵՈՅԱՆ

քաղաքագիտության դոկտոր

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՋՅԱՆ

կենսաբանական գիտությունների
թեկնածու
(պատասխանատու քարտուղար)

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՂ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և
դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
Երևան

*Рекомендовано к печати
согласно решению ученого совета
Академии государственного
управления Республики Армения.*

*Published by Decision of
Scientific Council of the Public
Administration Academy of the
Republic of Armenia*

**Главный редактор:
Оганес Арутюнян**

Доктор экономических наук

Editor-in-Chief:

Hovhannes Harutyunyan

Doctor of Sciences (Economics)

Редакционный совет:

Армен Арутюнян

Доктор юридических наук
(председатель)

Армен Геворкян

Вице – премьер – министр,
Министр территориального
управления РА

Виген Саркисян

Заместитель руководителя
аппарата Президента РА

Манвел Бадалян

Председатель Совета
гражданской службы РА

Гагик Арутюнян

Доктор юридических наук

Ваге Степанян

Доктор юридических наук

Ашот Хачатрян

Доктор юридических наук

Айк Саркисян

Доктор экономических наук

Агаси Саркисян

Доктор экономических наук

Эдуард Ордян

Доктор экономических наук

Мариам Маргарян

Доктор политических наук

Грант Аванесян

Доктор психологических наук

Гарик Керян

Доктор политических наук

Хачатур Безирджян

Кандидат биологических наук
(ответственный секретарь)

Editorial Council:

Armen Harutyunyan

Doctor of Sciences (Law)
(Chairman)

Armen Gevorgyan

Vice Prime Minister,
Minister of Territorial
Administration RA

Vigen Sargsyan

Deputy Chef of Staff
President of the RA

Manvel Badalyan

President of Civil Service
Council of the RA

Vahe Stepanyan

Doctor of Sciences (Law)

Gagik Harutyunyan

Doctor of Sciences (Law)

Ashot Khachatryan

Doctor of Sciences (Law)

Hayk Sargsyan

Doctor of Sciences (Economics)

Aghasi Sargsyan

Doctor of Sciences (Economics)

Eduard Ordyan

Doctor of Sciences (Economics)

Mariam Margaryan

Doctor of Sciences (Political Sciences)

Hrant Avanesyan

Doctor of Sciences (Psychology)

Garik Keryan

Doctor of Sciences (Political Sciences)

Khachatur Bezirjyan

Doctor of Biology
(Executive Secretary)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանրային կառավարում

12

12-22 ՀՈՎՅԱՆՆԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶԱԾՈՒԹՅԱՆ ՍԵՂՄԱՑՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Հոդվածը նվիրված է աշխարհի շատ երկրներում առկա տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման զգալի անհավասարաչափության հիմնահարցերի լուսաբանմանը՝ անկախ դրանց մասշտաբից, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, պետական կառավարման կառուցվածքից և այլ բնութագրերից: Այդ անհավասարաչափության հնարավոր մեղմացման խնդիրն այդ երկրների տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակներից մեկն է: Նպատակը՝ գնահատել կիրառված միջոցառումների արդյունավետությունը, դրանք Հայաստանի Հանրապետության պայմաններում կիրառելու հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Սակայն տարբեր կարող են լինել կարգավորման մոտեցումները, կիրառվող մեխանիզմները և ֆինանսավորման աղբյուրները, որոնք էլ ուշագրավ են միջազգային փորձի ուսումնասիրության և մեր երկրի առանձնահատկություններին համապատասխան կիրառման տեսանկյունից:

23-30 ԼԱԿՐԵՆՏԻ ՄԻՐՁՈՅԱԼ

ԵՎՐԱՍԻՈՐԴՐԴԻ ԲԱԶՄԱԼԵԶՎՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԵՎ ԳԴ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզուն հասարակական երևույթ է, ուստի պաշտոնական և հրապարակային լեզվագործունեությունը հասարակության կողմից ենթակա է վերահսկողության: Այն իրականացվում է պետության կարգավորիչ գործառույթներով և, հետևաբար, լեզվական հարաբերությունների կարգավորումը պետության մենաշնորհն է և իրականացվում է օրենքով և պետական ծրագրով:

Լեզվակրթական քաղաքականությունը սերտորեն առնչվում է ժողովրդավարական քաղաքացիության արժեքների յուրացման հետ, քանզի, նրանց նպատակները փոխադարձաբար լրացնում են միմյանց. լեզուների ուսուցումը լավագույն ոլորտն է միջնակության շփման համար, որտեղ հանուն ժողովրդավարական կյանքի կրթությունն իր միջնակության չափանիշներով կարող է ընդգրկվել կրթական համակարգերում:

31-37 ՎԻԼԻԿ ԵՂԻԳԱՐՅԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱՆ ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԵԳԱՄԻՏՈՒՄՆԵՐԸ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄՊԵՐԱՏԻՎԸ

Հոդվածում բարդ համակարգերի ինքնակազմակերպման տեսության՝ սիներգետիկայի արդյունքներով հիման վրա ցույց է տրվում, որ հասարակության զարգացման էվոլյուցիոն ուղու ոլորապտույտները հաղթահարելու կարևորագույն քայլը երկրների համակարգված համագործակցությունն է քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներով:

38-47 ԱՎԵՏԻԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Պետության տարածքային կառուցվածքից են մեծապես կախված պետական և տեղական իշխանությունների կազմակերպման հարցերը, քանզի որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն իրականացվում է վարչատարածքային կառուցվածքային միավորների սահմաններում:

Հոդվածում վերլուծվում է Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման տնտեսական իրավիճակը:

Տնտեսագիտություն (Կառավարում)

48

48-58 ՀՈՎՅԱՆՆԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի ծրագրային բյուջեի կազմման գործընթացը ենթադրում է օրենքով և որոշումներով սահմանված ժամկետներում որոշակի փուլերի պարտադիր կատարում: Բազմակողմ այս գործընթացը հաջող և ժամանակին ավարտելը բավականին բարդ խնդիր է և պահանջում է համակարգել բազմաթիվ մասնակիցների՝ դերակատարների աշխատանքը: Ներկա փուլում կարևորվում է տեղական ինքնակառավարման մարմինների համար կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, կառավարման ոլորտում մեր կողմից ձեռք բերած ու արտասահմանյան փորձի փոխանակումը, տեղական ինքնակառավարման կազմակերպչի կազմակերպչական այլ ձևերի օրենսդրական ձևակերպումը և այլն: Սույն հոդվածը նվիրված է ծրագրային բյուջեի կազմման այս և նմանատիպ հիմնախնդիրների վերլուծությանը, ինչը երկրում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման կարևոր նախապայմաններից է:

**59-82 ՎԱՉԵ ԳԱՔՐԻԵԼՅԱԼ
ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱԼ**

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԸ. ՄԵԿԼԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը տալիս է տնտեսությանը կառավարության միջամտության (ինչպես կարգավորիչ, այնպես էլ ուղղակի) դրոշապատճառների, ուղղությունների և չափի մասին ընդարձակ մեկնաբանություն: Հիմնականում հիմնված լինելով շուկայի ծախողումները (մենաշնորհ, անհամաչափ տեղեկատվություն, հանրային բարիքների պակասուրդ և այլն) վերացնելու հանրային անհրաժեշտության նեոդասական վերլուծության վրա, հոդվածը քննարկում է արդի շրջանում նվազագույն պետական միջամտության անհնարինությունը՝ միաժամանակ ընթերցողին տրամադրելով այս հիմնահարցի վերաբերյալ քեյնսյան, ավստրիական, մարքսիստական և հանրային ընտրության դպրոցների հակիրճ մեկնաբանությունները:

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի չափերը քննարկելուց և այն այլ երկրների հետ համեմատելուց հետո հոդվածը քննարկում է տնտեսության մեջ կառավարության միջամտության հիմնական ուղղությունները (խաղի կանոնների պահպանում, տնտեսական ենթահամակարգերի համակարգված զարգացում, և այլն): Հոդվածն ավարտվում է կառավարության ծախողումների և արդյունավետության հարցերի քննարկմամբ:

83-93 ԳՈՂԱՐ ՄԵԼԻՔԵԿՅԱԼ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՋՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂՎԱՑՈՒՑԻՉ

Հոդվածը նվիրված է կառավարման հիմնական հասկացություններին, կազմակերպության կառավարման փիլիսոփայության մեկնաբանմանը, ինչպես նաև տարբեր ընկերություններում անձնակազմի կառավարման կայացման և արդյունավետության բարձրացման փորձի քննարկմանը: Նպատակը ոչ միայն անդրադառնալ, այլ նաև զնահատել գործոնների այն խումբը, որոնք ազդում են անձնակազմի կառավարման արդյունավետության բարձրացման վրա:

94-99 ԼԱՐԻՍԱ ՍԱԿԵԼԵՎԱ

ՄՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱՐԳՈՒՄ

Առողջապահության ժամանակակից համակարգը կանգնած է կերպափոխումների շեմին: Դա է հաստատում մինչև 2020 թվականի ՌԴ առողջապահության զարգացման հայեցակարգը: Այդ հայեցակարգում նշված կողմնորոշիչները հնարավորություն են ընձեռում հասնել զարգացման բժշկական ծառայությունների շուկայի զարգացման միջոցով: Առողջապահության համակարգում պետական մենաշնորհից ազատումը և սեփականության բոլոր ձևերի բժշկական հաստատությունների միջև բարեխիղճ մրցակցության զարգացումը կօժանդակի հասարակության շահերին, ընդհանրապես, և յուրաքանչյուր մարդուն, մասնավորապես:

100-109 ԼԵՎՈՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարգավորող անկախ պետական մարմիններն առանձնահատուկ տեղ են գրավում տարբեր երկրների, այդ թվում Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման համակարգերում: Այդ մարմինների համար առանցքային պետք է համարել այն, որ նրանք օժտված լինելով իշխանական լիազորություններով՝ միևնույն ժամանակ չեն գտնվում իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերից և ոչ մեկի միանշանակ ենթակայության ներքո և իրականացնում են օրենսդրությամբ սահմանված հատուկ գործառնություններ:

Հոդվածում ներկայացված են կարգավորող անկախ պետական մարմինների հիմնական հատկանիշները, ընդհանրությունները, կառավարման ներկա կառուցակարգերը ԱՄՆ-ում, Եվրամիությունում, Հայաստանում, մի շարք տեսաբանների մոտեցումները: Քննարկվել են պետական մարմնի անկախության երևույթի ժամանակակից դրսևորումները:

110-117 ԱԼԲԵՐՏ ԲԱՐՅԱՆ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՉԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում քննարկվում են ԱՀԿ անդամ մի շարք զարգացած երկրներում արտահանման խթանման համար տրվող պետական աջակցության ձևերն ու կառուցակարգերը, բերվում են ճապոնիայի, Չեխիայի և Թուրքիայի՝ արտահանման ֆինանսավորմամբ զբաղվող կառույցների մանրագին նկարագրությունները, բացահայտվում են դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու առավելությունները, ինչպես նաև հիմնավորվում է նմանատիպ պետական աջակցության կիրառումը Հայաստանի Հանրապետությունում:

118-125 ՀՈՎԱԵՓ ՀՈՎԱԵՓՅԱԼ

ՕՐԵՆՍՊՐԱԿԱԼ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԸ ԵՎՐՈՊԱԿԱԼ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԱԿԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Եվրոպական Հանձնաժողովը Եվրոպական Միության օրենսդրական ակտերի հիմնական նախաձեռնողն է: Եվրահանձնաժողովը նման իրավունքով է օժտված դեռևս Եվրոպական ինտեգրման սկզբնական փուլերից: ԵՄ օրենսդրական գործընթացն սկսվում է Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ առանձին բացառություններով: Միության երկու օրենսդրական մարմինները՝ Խորհուրդը և Եվրոպական Խորհրդարանը, օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չեն: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը շատ կարևոր զենք է Եվրահանձնաժողովի համար: Այս իրավունքը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս կարևոր դեր խաղալ ԵՄ ինստիտուցիոնալ համակարգում և ազդեցություն ունենալ Միության քաղաքականության վրա:

Քաղաքագիտություն

126-136 ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՐԻ ՋԱԶՆՈՅԱՆ

ՆԱՐԵԿՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՏ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՒՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայ մշակութային տեքստի քաղաքական էության ուսումնասիրությունը խիստ կարևորվում է ազգային անվտանգության հայեցակարգի դրույթների ելակետից, քանի որ այդ տեքստի բնականոն արդիականացումը հայ հասարակությանը հնարավորություն է տալիս պատասխանելու ժամանակի մարտահրավերներին՝ ինտեգրվելով գլոբալ հիմնախնդիրների լուծման գործընթացներին: Այս ամենն էլ հիմք ընդունելով՝ հողվածագիրները հայ մշակութային տեքստում անդրադարձել են Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի քննությանը որպես հայ ինքնության անվտանգության ապահովման համակարգի բաղադրիչ: Հողվածում նրանք հիմնավորել են «նարեկյան մշակույթ» հասկացությունը, որի բնույթն ու էությունը պայմանավորված է անցյալ–ներկա–ապագա եռաչափության մեջ Մարդու ինքնահաստատման և ինքնաիրացման, ինքնաարդիականացման կառուցակարգերով:

12-22 ОГАНЕС АРУТЮНЯН

МИРОВОЙ ОПЫТ ПО СОКРАЩЕНИЮ НЕРАВНОМЕРНОСТИ УРОВНЕЙ РЕГИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ

Статья посвящена вопросам существенной неравномерности социально-экономического развития территориальных единиц во многих странах мира, несмотря на их масштабы, структуру государственного управления, уровень социально-экономического развития и других характеристик. Задача возможного сокращения этой неравномерности является основной целью региональной политики этих стран. Целью является оценка эффективности используемых мероприятий, а также их целесообразность и возможность применения для Республики Армения. Но разными могут быть подходы регулирования, используемые механизмы и источники финансирования, которые достойны внимания с точки зрения международного опыта и применения в соответствии с особенностями нашей страны.

23-30 ЛАВРЕНТИЙ МИРЗОЯН

ОСОБЕННОСТИ ПРОБЛЕМЫ МНОГОЯЗЫЧНОСТИ ЕВРОСОЮЗА И ГОСУДАРСТВЕННОЙ ЯЗЫКОВОЙ ПОЛИТИКИ РА

Язык - общественное явление, следовательно, официальная и публичная языковая деятельность со стороны общества подчинено контролю. Она осуществляется функциями государственной регуляции и, следовательно, урегулирование языковых отношений является привилегией государства и осуществляется законом и государственной программой.

31-37 ВИЛИК ЕДИГАРЯН

МЕГАТRENДЫ ОБЩЕСТВЕННЫХ ТРАНСФОРМАЦИЙ. ИМПЕРАТИВ СОТРУДНИЧЕСТВА

В статье на основе результатов теории самоорганизации сложных систем - Синергетики, показывается, что важнейшим шагом преодоления извилистой эволюционной пути развития является систематизированное сотрудничество стран в политической, экономической, социальной и культурной сферах.

38-47 АВETИС ГЕВОРКЯН

ЭКОНОМИЧЕСКИЙ АНАЛИЗ АДМИНИСТРАТИВНО- ТЕРРИТОРИАЛЬНОГО ДЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Вопросы организации государственных и местных властей во многом зависят от территориального устройства государства, поскольку деятельность органов территориального управления и местного самоуправления осуществляется в границах административно-территориальных единиц.

В статье автор анализирует экономическую ситуацию административно-территориального деления Республики Армения.

Экономика (Управление)

48-58 ОГАНЕС АРУТЮНЯН

ПРОБЛЕМЫ СОСТАВЛЕНИЯ ПРОГРАММНОГО БЮДЖЕТА

Процесс составления программного бюджета общины предполагает обязательное осуществление конкретных этапов в определенные законом и соответствующими решениями сроки. Своевременное и успешное завершение этого многостороннего процесса довольно сложная задача и требует координации работы всех участников. Для органов местного самоуправления особенно важна на настоящем этапе подготовка и переподготовка кадров, обмен местного и зарубежного опытов в сфере менеджмента, законодательное обоснование других организационно-правовых форм местного самоуправления. Данная статья посвящена анализу этих и аналогичным проблемам составления программного бюджета, что немаловажная предпосылка для развития в стране местного самоуправления.

**59-82 ВАЧЕ ГАБРИЕЛЯН
ГАЙК САРГСЯН**

ГОСУДАРСТВЕННЫЙ СЕКТОР ЭКОНОМИКИ: ОБЗОР

Статья представляет широкий обзор обоснования, направлений и масштаба вовлечения правительства в экономику (как регулирующего, так и непосредственного). В основном опираясь на неоклассический анализ общественной необходимости устранения рыночных провалов, изъянов (монополия, асимметричная информация, недостаток в рынке общественных благ, и т.д.), статья обсуждает невозможность минимального государственного вмешательства в настоящее время, одновременно предоставляя читателю краткие обзоры интерпретаций этого вопроса со стороны кейнсианской, австрийской, марксистской школ и школы общественного выбора.

После обсуждения масштаба государственного сектора Республики Армения и сравнения его с другими странами, в статье обсуждаются основные направления вмешательства правительства в экономику (соблюдение правил игры, координированное развитие экономических подсистем, и т.д.).

Статья завершается обсуждением вопросов эффективности и неэффективности государственного регулирования.

83-93 ГОАР МЕЛИКБЕКЯН

*ФИЛОСОФИЯ УПРАВЛЕНИЯ КАК ОСНОВНАЯ СОСТАВНАЯ ПОВЫШЕНИЯ
ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ ПЕРСОНАЛОМ*

Статья посвящена основным понятиям управления, комментариям философии управления организации, а также в различных компаниях обсуждению опыта становления и повышения эффективности управления персоналом. Цель не только , а также оценить ряд факторов влияющие на повышения эффективности управления персоналом.

94-99 ПАРИСА САВЕЛЬЕВА

КОНКУРЕНТНАЯ ПОЛИТИКА В СИСТЕМЕ ЗДРАВООХРАНЕНИЯ

Современная система здравоохранения стоит на пороге трансформационных преобразований. Концепция развития здравоохранения Р.Ф. до 2020 года подтверждает это. Намеченные в ней ориентиры возможно достигнуть путем развития рынка медицинских услуг. Разрушение государственной монополии в системе здравоохранения и развитие добросовестной конкуренции между лечебно-профилактическими учреждениями всех форм собственности послужат интересам общества в целом, и каждого человека в отдельности.

100-109 ЛЕВОН МОВСИСЯН

*ХАРАКТЕРНЫЕ ЧЕРТЫ УПРАВЛЕНИЯ РЕГУЛИРУЮЩИХ НЕЗАВИСИМЫХ
ГОСУДАРСТВЕННЫХ ОРГАНОВ*

Независимые регулирующие государственные органы занимают специальное место в системе государственного управления многих стран, в том числе Республики Армения.

В статье представлены основные характеристики, модели управления, теоретические аспекты независимых государственных регулирующих органов. Также особое место посвящено феномену регулирующей независимости государственного органа.

110-117 АЛЬБЕРТ БАБАЯН

*МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ ЭКСПОРТА И ЕГО
ПРИМЕНЕНИЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ*

В этой статье обсуждаются механизмы и способы государственной поддержки экспорта в развитых странах которые являются членами ВТО, мельчайшим образом рассматриваются государственные органы Японии, Чехии и Турции которые занимаются экспортным финансированием, показаны преимущества и специфика каждой компании. Статя так же обосновывает внедрение государственной поддержки экспорта в Республике Армения.

Юридические науки

118

118-125 ОВСЕП ОВСЕПЯН

*ЭТАП ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ИНИЦИАТИВЫ В ЗАКОНОДАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ
ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА*

Европейская Комиссия является главным инициатором законодательных актов ЕС. Комиссия обладает этим правом еще с ранних стадий европейской интеграции. Законодательный процесс ЕС начинается с инициативы Европейской Комиссии с некоторыми исключениями из этой правлы. Две основные законодательные органы ЕС, Совет и Европейский Парламент, не обладают правом законодательной инициативы. Право законодательной инициативы очень важное оружие

в руках Европейской Комиссии. Это право дает Комиссии возможность играть важную роль в институциональной системе ЕС и влиять на политику ЕС в разных сферах общественной жизни.

**126-136 МАРИАМ МАРГАРЯН
МАРИ ЗАКАРЯН**

*НАРЕКСКАЯ КУЛЬТУРА КАК СИСТЕМА ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ
АРМЯНСКОГО САМОСОЗНАНИЯ*

Исследование политической сути армянского культурного текста приобретает огромную важность в аспекте концептуальных положений национальной безопасности, поскольку актуализация такого текста позволяет армянскому обществу находить ответы на угрозы времени и интегрироваться в процессы решения глобальных проблем современности. Исходя из этого, авторы обратились к рассмотрению поэмы Григора Нарекаци "Книга скорбных песнопений" как компонента системы обеспечения безопасности армянского самосознания. В статье обосновано понятие "нарекская культура", природа и суть которого обусловлены механизмами самоутверждения и самореализации, самоактуализации Человека в триаде прошлое – настоящее – будущее.

C O N T E N T

Public Administration

12

12-22 HOVHANNES HARUTYUNYAN

WORLD EXPERIENCE ON MINIMIZATION INEQUALITY OF LEVELS OF REGIONAL DEVELOPMENT

This article is dedicated to some issues of existing inequalities of socio-economic development of territorial units in many countries of the world in spite of their scales, public administration structures, level of socio-economic development and other features. The issue of possible minimization such inequality is the main object of regional policy of those countries. The object is the evaluation of the using acts effectiveness and appropriate and possible application for the Republic of Armenia. But it is also possible to have different ways of regulation, using mechanisms and financial support sources which are worthy of attention from the point of view of international experience and using in compliance with national features of our country.

23-30 LAVRENTI MIRZOYAN

PECULIARITIES OF MULTILINGUAL PROBLEM OF THE COUNCIL OF EUROPE AND LANGUAGE PUBLIC POLICY OF THE RA

Language is a social phenomenon, consequently official and public language activity is to be monitored by the community. It is implemented by the government regulating functions and therefore language relations' regulation is the government monopoly and is implemented by the law and government program

Language educational policy concerns to the values of the opening up of democratic citizenship since their goals supplement each other, language acquisition is the best area for intercultural relations, where for the sake of democratic life education with its intercultural criteria can be involved in educational systems

31-37 VILIK EDIGARYAN

MEGATRENDS OF PUBLIC TRANSFORMATIONS: IMPERATIVE FOR COOPERATION

In the article on the basis of results of synergy – theory of self-organization of complicated systems, it is shown that the important step for overcoming the windings of evolutionary development of society is organic cooperation in political, economic, social, and cultural fields of countries.

38-47 AVETIS GEVORGYAN

ECONOMIC ANALYSIS OF ADMINISTRATIVE-TERRITORIAL DIVISION OF THE REPUBLIC OF ARMENIA

The organizational issues of public administration and local self-government very much depend on territorial structure of the state, as the activity of territorial administration and local self-government bodies is accomplished in borders of administrative-territorial units.

In the article the author analyses economic situation of administrative-territorial division of the Republic of Armenia.

Economics (Management)

48

48-58 HOVHANNES HARUTYUNYAN

PROBLEMS OF PROGRAM BUDGET DEVELOPMENT

The program budget development process of the community supposes required realization of concrete phases at the appointed term by law and respective decisions. Timely and successful completion of this process is an intricate problem and it requires a coordination the works of all participants. At the present stage for local self-governance system are very important and virtual the training and retraining personals, exchanging long-term experience of local self-governance of our and foreign countries and legislative definition of all organizational and legal forms of local self-governance. This article is dedicated the analyses these and analogical problems of program budget development which is the important precondition for further development local self-governance in the country.

59-82 VACHE GABRIELYAN
HAYK SARGSYAN

PUBLIC SECTOR OF THE ECONOMY: AN OVERVIEW

The essay gives a broad overview of the rationale, directions and size of government involvement (both regulatory and direct) into the economy. Mostly building from neoclassical analysis of the public necessity to address market failures (monopolies, asymmetric information, lack of market for public goods, etc.), the essay discusses the impossibility of minimal state in modern age, also exposing the reader to brief interpretations of the issue from Keynesian, Austrian, Marxist and Public Choice schools.

After discussing the size of the public sector of the Republic of Armenia and comparing it internationally, the essay discusses general directions of government involvement in the economy (enforcing the rules of the game, coordinated development of economic subsystems, etc.). Finally, the essay concludes with the discussion of government failure and government efficiency.

83-93 GOHAR MELIKBEKYAN

MANAGEMENT PHILOSOPHY AS A MAIN COMPONENT OF INCREASING EFFICIENCY OF STAFF MANAGEMENT

The article is dedicated to the main conceptions of management, comments of management philosophy of organization and the discussion of experiences of establishment and increasing efficiency of staff management in different companies. The object of this article is also to analyze the group of factors influencing on increasing efficiency of staff management.

94-99 LARISA SAVELEVA

COMPETITIVE POLICY IN PUBLIC HEALTH SYSTEM

The present public health service system is on the threshold of transformations. The concept of Public Health Service Development of the Russian Federation till the year of 2020 confirms it. The lines planned in it can be achieved by developing market of medical services. The demolition of state monopoly in public health service system and developing honest competition between mediophylactic institutions of all forms of ownerships will serve public interest in general and an individual in particular.

100-109 LEVON MOVSISYAN

INDEPENDENT REGULATORY AGENCIES: THE MANAGEMENT FEATURES

Independent regulatory agencies have special place in the public administration system of many countries, included Republic of Armenia. The creation, design and consequences of independent regulatory agencies represent a classic example of delegation to non-majoritarian institutions. They are organizationally separate from governments and headed by boards. They are given powers over regulation, but are also subject to controls, inter alia by elected politicians, both in the executive and legislature.

In the article the author focuses on main features, management structure of independent agencies, analyzes the phenomenon of independence in the system of separation of powers.

110-117 ALBERT BABAYAN

INTERNATIONAL EXPERIENCE IN THE FIELD OF STATE SUPPORT INTENDED FOR EXPORTS AND ITS APPLICATION IN THE REPUBLIC OF ARMENIA

This article refers to the ways and mechanisms of the state support intended for the export promotion in a number of developed countries that are members of the WTO. The Japan's, Czech Republic's and Turkey's export financing bodies are introduced and their specificities and advantages are brought to light. The article also justifies the need of implementation of similar mechanisms in the Republic of Armenia.

Law

118

118-125 HOVSEP HOVSEPYAN

THE STAGE OF THE LEGISLATIVE INITIATIVE IN THE LEGISLATIVE PROCESS OF THE EUROPEAN UNION

The European Commission is the main initiator of the EU's legislative acts. This comes from the early stages of European integration. The legislative process of the EU begins by the initiative of the European Commission with a few exceptions. The two main legislators of the EU the - Council and the European Parliament do not have a right of a legislative initiative. The right of legislative initiative is a very important power in the hands of the European Commission. This power gives the European

Commission a possibility to play an important role in the institutional framework of the EU and to have influence on the EU politics.

**126-136 MARIAM MARGARYAN
MARI ZAKARYAN**

*NAREKYAN CULTURE AS A SYSTEM FOR PROVISION OF SECURITY OF THE
ARMENIAN IDENTITY*

The study of political essence of Armenian cultural text is important from the point of view of national security, because the natural modernization of the text for the Armenian society gives an opportunity to correspond to contemporary challenges, by integrating with the process for the global solution of the main issues.

While basing on all this, writers of the article turned to Armenian cultural text of "Anthology of the Tragic" written by Grigor Narekatsi, to the analysis of this poem, as a basic ingredient of the system for the provision of security of Armenian identity. They substantiated the notion of "Narekyan culture", the nature and essence of which is dependent on past – present – future three – dimensional notion, by the mechanisms of selfaffirmation, selfrealization and self modernization of the person as a human being.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր*

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ
ԱՆՀԱՎԱՍԱՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՄԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

Աշխարհի շատ երկրներում անկախ դրանց մասշտաբից, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, պետական կառավարման կառուցվածքից և այլ բնութագրերից առկա է տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման զգալի անհավասարաչափություն: Վերջինիս հնարավոր մեղմացման խնդիրը հանդիսանում է այդ երկրների տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը:

Ուշագրավ է, որ, ամբողջական վերցրած, երկրների բնութագրերի միջև մեծ տարբերությունների պայմաններում ևս ներերկրային տարածաշրջանային զարգացման անհամաչափությունների համահարթեցման հիմնախնդիրները շատ կողմերով զգալիորեն նման են, ուստի դրանց լուծման մոտեցումները նույնպես կունենան ընդհանուր գծեր: Այս հանգամանքը ցուցում է, որ սոցիալ-տնտեսական զարգացման տարածաշրջանային խիստ անհավասարաչափության հետազոտության և մեղմացմանն ուղղված քաղաքականության մշակմանը մեծապես կարող է օժանդակել համաշխարհային այլ երկրների փորձի իմացությունը: Հետևաբար, ցանկացած երկրում տարածաշրջանային զարգացման անհամաչափությունների հնարավորինս մեղմացման խնդրի լուծման և այդ նպատակի իրականացմանն ուղղված արդյունավետ միջոցառումների մշակման աշխատանքներում կարևոր տեղ պետք է հատկացվի այդ ասպարեզում համաշխարհային փորձի ուսումնասիրությանը: Այն նպատակ պետք է ունենա գնահատել կիրառված միջոցառումների արդյունավետությունը, դրանք Հայաստանի Հանրապետության պայմաններում կիրառելու հնարավորությունն ու նպատակահարմարությունը, ինչպես նաև նախատեսել դրանք մեր պայմաններին հարմարեցնելու համար անհրաժեշտ մոտեցումներ: Այլ երկրների փորձի օգտակար կիրառման այս հնարավորությունը նկատի ունենալով՝ ստորև համառոտակի կներկայացնենք մի շարք երկրներում ներերկրային տարածաշրջանային զարգացման անհավասարաչափության մեղմացմանն ուղղված միջոցառումների ուղղությունները՝ փորձելով գնահատել դրանք մեր երկրում ընդօրինակելու նպատակահարմարությունը:

Տարածքային զարգացման խիստ տարբերությունները հարթելու խնդրի լուծման անհրաժեշտություն ունեցել են ինչպես մեծ տարածք զբաղեցնող և զարգացման բարձր մակարդակ ունեցող պետությունները (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա), այնպես և համեմատաբար ավելի փոքր պետությունները (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա): Ավելին, հարկ է նկատել, որ խնդրի լուծումը մեծապես պայմանավորված է ոչ թե երկրի զարգացման մակարդակով կամ զբաղեցրած ամբողջական տարածքով, այլ երկրում իրականացվող տարածաշրջանային քաղաքականությամբ: Պատճառն այն է, որ տարածքային տնտեսական համակարգում գործունեությունն ու զարգացումը չի կարող ինքնակարգավորվել միայն շուկայական մեխանիզմների գործողությամբ: Անհրաժեշտ է պետության միջամտություն, որի բացակայությունը, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, կարող է բերել տարածաշրջանային ամբողջ շարք հակադրությունների, այդ թվում նաև սոցիալ-տնտեսական զարգացման անհավասարաչափության: Տարածաշրջանային զարգացմանն աջակցության ցուցաբերումը և միջտարածաշրջանային հիմնախնդիրների պետական կարգավորումը հատուկ է բոլոր երկրներին: Սակայն կարող են լինել կարգավորման տարբեր մոտեցումներ, կիրառվող մեխանիզմներ և ֆինանսավորման աղբյուրներ, որոնք էլ ուշագրավ են միջազգային փորձի ուսումնասիրության և մեր երկրի առանձնահատկություններին համապատասխան կիրառման տեսանկյունից:

Ջարգացման տարածաշրջանային անհամաչափությունների մեղմացման միջազգային փորձում կարելի է առանձնացնել երկու տարբեր մոտեցումներ՝ նպատակային ծրագրերի իրականացում և ֆինանսական համահարթեցման միջոցառումների կիրառում:

Առաջինն ուղղված է որոշակի խնդրահարույց [1] տարածաշրջանի (կամ տարածաշրջանների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ միջոցառումների մշակմանը, որի իրականացումը հիմք և հնարավորություններ է ստեղծում տարածաշրջանի հետագա զարգացման ինտենսիվացման համար և փոքրացնում այլ տարածաշրջաններից նրա հետ մնալու չափը: Ընդ որում, այսպիսի մոտեցումը ելնում է տվյալ տարածաշրջանում առկա այն ռեսուրսների առաջնահերթ օգտագործման դրույթից, որոնք զարգացման առավել մեծ թափ կարող են ապահովել:

Երկրորդ մոտեցումն օրենսդրորեն ընդունված չափով և պատկերացմամբ, որպես կանոն, տարեկան սուբվենցիայի ձևով դրա կարիքն ունեցող տարածաշրջաններին ֆինանսական աջակցությունն է: Այդ ֆինանսական միջոցների օգտագործման ուղղություններն որոշվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ հիմնականում ուղղվելով ծառայությունների ոլորտի զարգացմանը:

Առաջին մոտեցման դասական օրինակ է ԱՄՆ-ի Թեննես գետի հովտի զարգացման նպատակային ծրագիրը [1]: 1930-ական թվականներին, ԱՄՆ հանրընդհանուր ճգնաժամի պայմաններում, այդ տարածաշր-

ջանն առանձնանում էր իր էլ ավելի ոչ արդյունավետ տնտեսությամբ: Երկրի միջին բնութագրերի համեմատությամբ զգալիորեն ցածր էին բնակչության եկամուտները, աշխատողների մասնագիտական որակավորումը և աշխատանքի արտադրողականությունը, աճում էր գործազրկությունը, համարյա բացակայում էին սոցիալական ոլորտի զոնե պահպանման համար անհրաժեշտ միջոցները: Տարածաշրջանը ինչպես ներքին, այնպես էլ և արտաքին ներդրողների համար դարձել էր ձեռներեցության համար ոչ գրավիչ: Այդ պայմաններում պետական լայնածավալ աջակցությունը խիստ անհրաժեշտություն էր, և ԱՄՆ-ի կառավարությունը չհապաղեց այն ցուցաբերել:

1933 թվականին ընդունվեց «Թեննեսի հովտի ղեկավարության պետական կորպորացիայի մասին» օրենքը (TVA), որի գործունեության հիմնական ուղղություններն էին.

1. հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն և շահագործում,
2. էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում,
3. շրջակա միջավայրի որակի բարելավում,
4. տարածաշրջանային քաղաքների և բնակավայրերի զարգացում:

TVA ծրագրի իրականացումը հանգեցրեց արմատական փոփոխությունների: Տարածաշրջանի էներգահամակարգը ԱՄՆ-ում դարձավ խոշորագույնը և տարածաշրջանն այժմ ոչ միայն խնդրահարույց չէ, այլ այն իր ազդեցությունն ունի մյուս տարածաշրջանների զարգացմանը: Արտադրական, ներդրումային գործունեության և նորամուծությունների արդյունքում տարածաշրջանում նվազեց գործազրկության մակարդակը, բարելավվեց զբաղվածության կառուցվածքը, աճեցին բնակչության եկամուտները: Եթե 1930 թվականին մեկ անձին բաժին ընկնող եկամուտները 2.5 անգամ ցածր էին երկրում այդ ցուցանիշի միջին արժեքից, ապա ծրագրի իրականացումից հետո այդ ցուցանիշները հավասարվել են:

Ծրագիրը մինչև 50-ական թվականները ֆինանսավորվել է ֆեդերալ բյուջեի հատուկ հոդվածներով, իսկ 1959 թվականից անցել է ինքնաֆինանսավորման, ինչն ինքնին տարածաշրջանի մեծ զարգացման ապացույցն է: Կորպորացիայի ներկայիս նպատակներն արտահայտող փաստաթուղթն արդեն ընդունվել է 1983 թվականին, որտեղ ներդրումային գործընթացը գնահատվում է հետևյալ նպատակների տեսանկյունից.

1. ազգային տնտեսության զարգացում,
2. շրջակա միջավայրի որակի բարելավում,
3. տարածաշրջանային զարգացման խթանում,
4. առկա սոցիալական հիմնախնդիրների լուծում:

Այսպիսով՝ լուծվել են ոչ միայն տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները, այլև TVA կորպորացիան սովորական առևտրային գործառույթներից բացի այժմ արդեն ձեռք է բերել նաև համազգային նպատակների իրականացման պետական գործառույթներ կատարելու հնարավորություն:

ԱՄՆ-ի կառավարության կողմից իրականացրած տարածաշրջանային մյուս խոշոր ծրագիրը ընդունվել է 1965 թվականին «Ապալաչների զարգացման մասին» օրենքով, որն իրականացնելու համար ստեղծվել է Ապալաչյան տարածաշրջանային հանձնախումբ (ARC) [7]:

Ծրագրի հիմնական նպատակները տարածաշրջանի տնտեսության զարգացման միջոցով առողջ ապրելակերպի ձևավորումը, զբաղվածության մակարդակի բարձրացումը, եկամուտների աճը և մասնագիտական կրթության բարելավումն էին:

Ծրագիրն ընդգրկում էր 9 ենթածրագիր, որոնք ուղղված էին հետևյալ ոլորտների զարգացմանը.

- առողջապահություն,
- բնակարանաշինություն,
- կրթություն,
- անտառների օգտագործում,
- լեռնարդյունաբերության վերականգնում,
- ջրային ակունքների պահպանում,
- ջրամատակարարում, ճանապարհաշինություն,
- հողօգտագործման բարելավում:

Ծրագրի իրականացման գործընթացում ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց վերանայման նպատակահարմարությունը:

Նոր մշակումների և առաջարկությունների արդյունքում ձևավորված ծրագրում, որն ընդունվել է 1993 թվականին, առաջնային են համարվում հետևյալ նպատակ-ուղղությունները.

1. արագ երթևեկության ճանապարհների շինարարության ավարտում,
2. կրթության և վերապատրաստման ժամանակակից համակարգի ձևավորում,
3. բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուցանցի) համակարգի բարելավում,
4. օգնություն փոքր և միջին բիզնեսի զարգացմանը,
5. աջակցություն բիզնեսի նոր ձևերի ներդրմանը,
6. տարածաշրջանի առավել աղքատ կոմսություններին օգնության տրամադրում:

Ծրագիրը ֆեդերալ-նահանգային էր և դրա կառավարումը ապակենտրոնացված էր: Այն ֆինանսավորվում էր տարբեր աղբյուրների կողմից՝ ֆեդերալ բյուջեի, նահանգային բյուջեի և գործող ծրագրերի միջոցների հաշվին: Ծրագրի իրականացման արդյունքում տարածաշրջանի բնակչության կենսամակարդակը զգալիորեն բարձրացել է:

Տարածաշրջանային հիմնախնդիրների գծով համազգային գազաթափողվր, բարձր գնահատելով ARC-ի գործունեությունը, առաջարկել և երաշխավորել է այդ փորձը կիրառել նաև այլ տարածաշրջաններում: ԱՄՆ խնդրահարույց տարածաշրջաններին ֆեդերալ ծրագրային օգնություն ցուցաբերելու «Տնտեսական զարգացման և հասարակական

աշխատանքների մասին» 1965 թվականին ընդունված օրենքում [1] սահմանվում են այն չափորոշիչները և հատկանիշները, որոնցով առանձնացվելու են խնդրահարույց համարվող տարածաշրջանները: Հաշվի առնելով առաջնահերթ օգնության կարիք ունեցող տարածաշրջանների և դրանց լուծում պահանջող կարևոր հիմնախնդիրների առանձնացման և ընտրության հիմնավորելու կարևորությունը, ինչպես նաև դրանց համար միջոցների տրամադրման սկզբունքային նշանակությունը, որը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության համար, ստորև կներկայացնենք այդ խնդրի լուծման համար նշված օրենքում ընդունված մեթոդական մոտեցումը: Ըստ այդ օրենքի՝ տարածաշրջանները խնդրահարույց են համարվում, եթե դրանցում.

- գործազրկության մակարդակն էապես գերազանցում է այդ ցուցանիշի միջին ազգային մեծությունը,
 - ընտանիքի եկամուտների միջին մակարդակն էապես ցածր է այդ ցուցանիշի միջին ազգային մեծությունից,
 - բնակարանային ֆոնդի, առողջապահության, կրթության ոչ բավարար վիճակը,
 - տարածաշրջանի տնտեսության ուժեղ կախվածությունը մեկերկու դեպրեսիոն ճյուղերից,
 - աշխատուժի և (կամ) կապիտալի զգալի արտահոսքը տարածաշրջանից,
 - տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված կառուցվածքային տեղաշարժերի բացասական ազդեցությունը տարածաշրջանի տնտեսության վրա,
 - խիստ կախվածությունը ռազմական պատվերներից,
 - արդյունաբերության անկումը կամ լճացումը տարածաշրջանում:
- Բերված հատկանիշներն առավելապես որակական բնույթ ունեն և դրանց մեծ մասի համար օրենքը չի նշում ցուցանիշի այն շեմային մեծությունը, որի դեպքում միայն պետական միջամտություն կարող է ցուցաբերվել:

Ներկայումս ԱՄՆ-ում գործում են ութ միջնահանգային տարածաշրջանային հանձնաժողովներ: Դրանց հնարավորությունները, ճիշտ է, ավելի սահմանափակ են, քան ունեին Թեյնենսի և Ապալաչների հանձնաժողովները, սակայն դրանք ևս իրենց առնչվող տարածաշրջանների ելակետային բնութագրերի վերլուծության հիման վրա մշակում են տարածքային զարգացման պլաններ, գնահատում ավելի վաղ ընդունված պլանների և ծրագրերի ընթացքը, իրականացնում հիմնական ցուցանիշների փոփոխման կանխատեսումներ, կանոնակարգում պլաններն իրականացնող մարմինների փոխադարձ կապը, գնահատում պահանջվող ֆինանսական միջոցները և մշակում դրանց նպատակային բաշխումը:

Տարածաշրջանների զարգացման մակարդակների գնահատման մոտեցումը Եվրոպական երկրներում տարբերվում է ամերիկյան վերը նկարագրված մոդելից: Այստեղ ուշադրության կենտրոնում են ոչ միայն խնդրահարույց, դեպրեսիոն և հետ մնացող տարածաշրջան-

ները, այլև առանձնացվում են, այսպես կոչված, «աճի բևեռներ», «միջուկ», «միջանցք» անվանումներով այն տարածաշրջանները, որոնց հատկացված պետական աջակցությունը կարող է խիստ ազդեցություն ունենալ նաև ազգային տնտեսության զարգացման դինամիկայի և կառուցվածքային փոփոխությունների վրա:

Եվրոպական զարգացած երկրներում առավել խնդրահարույց են նախկինում արդյունաբերական զարգացում ստացած մի շարք տարածաշրջաններ, որոնց տնտեսությունը մասնագիտացված է եղել այնպիսի ճյուղերի արտադրությունում, որոնց արտադրանքը տեխնոլոգիական առաջադիմության և պահանջարկի փոփոխության պատճառով դուրս է մղվում շուկայից:

Ներկայումս Արևմտյան Եվրոպայում ձևավորվել է դեպրեսիոն տարածաշրջանների պետական կարգավորման համակարգ, որի գործունեությունը կառուցվում է հետևյալ սկզբունքային դրույթների հիմքի վրա [8].

➤ Պետական աջակցություն ստանալու անհրաժեշտ պայման է տարածաշրջանի ճգնաժամային կամ դեպրեսիոն լինելը: Ընդ որում ենթադրվում է, որ պետական միջամտությունը պետք է սկսվի մինչև ճգնաժամի խորացումը շրջաններում, նախօրոք նախատեսվի և ծրագրավորվի այդ տարածաշրջաններում նոր ճյուղերի ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

➤ Տարածաշրջանային քաղաքականության պրակտիկայում պետք է հենվել ոչ թե խոշոր տարածաշրջանների, այլ ներտարածաշրջանային արեալների, ագլոմերացիաների և բնակավայրերի վրա:

➤ Առաջնային սոցիալական հիմնախնդիրներ են համարվում տեղական կադրերի համար բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի ստեղծումը, բնակչության եկամուտների նվազման կանխումը, սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը:

➤ Ծայրամասային, հնացած արդյունաբերություն ունեցող տարածաշրջանների կայունացման հիմքը պետք է նոր գիտարար ճյուղերի զարգացումը լինի:

➤ Սկստի ունենալով, որ արտաքին (ներկրվող) ռեսուրսների հիմքի վրա տնտեսության զարգացումը համեմատաբար ավելի ռիսկային և անկայուն է, ճիշտ է համարվում տարածաշրջանային զարգացումը կողմնորոշել դեպի ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Նիդեռլանդներում դեռևս 1940-ական թվականներից վարվում էր տարածաշրջանների զարգացման անհավասարաչափության մեղմացման ուղղված քաղաքականություն: Այն կենտրոնացված էր խնդրահարույց տարածաշրջանների երկու տեսակների վրա. բարձր գործազրկությամբ ծայրամասային շրջաններ և գերբնակեցված ուրբանիզացված ագլոմերացիաներ: Առանձնացվել էին ինը զարգացող տարածաշրջաններ, իսկ դրանց ներսում 40 զարգացման միջուկներ: Համաձայն ընդունված քաղաքականության՝ կառավարությունը ընտրված տարածաշրջաններում ֆինանսավորում է ենթակառուցվածքների ստեղծումը կամ զարգացումը, այդ

տարածաշրջաններում անհատ ներդրողներին տրամադրվում էր որոշակի արտոնություններ, ձեռնարկվում էին գործազուրկների վերաբնակեցման միջոցառումներ, վարվում էր վերակառուցվածքավորման քաղաքականություն: Ծրագիրը Եվրամիությունում ճանաչվել է որպես տարածաշրջանային հաջողված ծրագիր: Նոր ենթակառուցվածքների ձևավորման, ներդրումային սուբսիդիաների տրամադրման, հանքավորների վերապատրաստման և այլ միջոցառումների իրականացմամբ կառավարությունն օժանդակեց այդ տարածաշրջանում նոր ձեռնարկությունների ստեղծմանը, համալսարանի բացմանը, պետական հիմնարկների տեղափոխությանը:

Ծրագիրը ֆինանսական աջակցություն էր ստացել նաև Եվրամիությունից: Ծրագրի իրագործման արդյունքում այդ դեպրեսիվ, քարածուխ արտահանող տարածաշրջանում ձևավորվեց առաջատար կառուցվածքով և տնտեսական ու սոցիալական բարձր ցուցանիշներ ունեցող տնտեսություն:

Խնդրահարույց տարածաշրջանների տնտեսությունների պետական կարգավորման ուսանելի օրինակ է նաև Գերմանիայի կառավարության կողմից հին արդյունաբերական Ռուրի և նոր արևելյան հողերի խնդրահարույց տարածաշրջանների զարգացման նպատակով իրականացված քաղաքականությունը: Անցյալ հարյուրամյակի 50-ական թվականների կեսերից սկսած Ռուրի տարածաշրջանում սկիզբ առավ ճգնաժամ՝ պայմանավորված հեղուկ վառելիքի ներկրումով և դրա արդյունքում տեղի ածխարդյունաբերությունում սկսված ճգնաժամով: Այն ընդգրկեց նաև ածխարդյունաբերության հետ կապված մյուս ճյուղերը, ինչը հասկանալի է, հանգեցրեց գործազրկության մակարդակի խիստ բարձրացմանը տարածաշրջանում: ԳՖՀ-ի կառավարությունը տարածաշրջանին ցուցաբերեց առանձնահատուկ տնտեսական օժանդակություն՝ ածխարդյունաբերությանը հատկացվեցին դոտացիաներ, սուբսիդիավորվեց ածխի սպառումը, ընդունվեց օրենք, որը սահմանում էր ածխի արդյունահանման նվազագույն ծավալները, դոտացիաների չափերը, աշխատանքը կորցրած հանքավորներին տրամադրվող սուբսիդիաների և նրանց վերաորակավորման համար տրամադրվող միջոցների չափերը:

Տարածաշրջանում ածխարդյունաբերության գործընթացին զուգահեռ վարվում էր տնտեսության վերակառուցվածքավորման քաղաքականություն: Որպես դրա հիմնական ուղղություններ ընդունելի էին.

- նախկինում զարգացում ստացած ճյուղերի մոդեռնացումը,
- բարձրագույն կրթության զարգացումը,
- տեխնոլոգիական զարգացման կենտրոնների ստեղծումը և այդ

հիմքի վրա տարածաշրջանում գիտատար արտադրությունների զարգացումը,

- շրջակա միջավայրի բարելավումը:

Իրականացված քաղաքականության արդյունքում, տարածաշրջանը մնալով Արևմտյան Եվրոպայի ածխի խոշորագույն արտադրողը, այդ ճյուղում զբաղված է աշխատուժի ընդամենը 4.5 %-ը, իսկ

սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափության խնդիրն արդեն հիմնականում լուծված է:

Չարգացման զգալի տարբերություններ ունեցող գերմանական երկու պետությունների միավորումը 1990 թվականին վերամիավորված պետությունում ստեղծեց տարածաշրջանային նոր հիմնախնդիրներ: Նախկին ԳԴՀ-ի մի շարք տարածաշրջաններ փաստորեն դարձան խնդրահարույց: Դրանց բնորոշ էր արտադրության կտրուկ անկումը, գործազրկության բարձր մակարդակը, կադրերի մեծ հոսունությունը, պետության արևմտյան հատվածի հետ համեմատած արտադրության ցածր արդյունավետությունը, բնակչության ցածր եկամուտները, շրջակա միջավայրի վատ վիճակը: Այդպիսի իրավիճակը թելադրում էր տարածաշրջանային հատուկ քաղաքականության անհրաժեշտություն: Ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք արևելյան հողերին տալիս էին հատուկ կարգավիճակ: Դրանց տրամադրվում էր մասշտաբային ֆինանսական օգնություն ֆեդերալ բյուջեից, իրականացվում էր տնտեսության վերակառուցման, նորանուծությունների ենթակառուցվածքների ձևավորման, կրթության և կադրերի վերապատրաստման ոլորտի զարգացման ծրագրեր: Ստեղծվեցին հողերի և համայնքների միջև ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման ուղղահայաց և հորիզոնական հատուկ սխեմաներ: Տարածաշրջանային քաղաքականությամբ բոլոր միջոցներն ուղղվում էին զարգացմանը նպաստելու նպատակին և տրվում էին հետևյալ սկզբունքների հիման վրա [2]:

➤ Հողերը, անկախ ինքնուրույնությունից և ֆինանսական անկախությունից, պարտավոր են աջակցել թույլ տարածաշրջաններին:

➤ Տարվող այդպիսի քաղաքականության պատճառով չպետք է թուլանա աջակցող հողերի կարողությունները:

➤ Ֆինանսական աջակցությունը նպաստելու է սեփական ջանքերով կրիտիկական իրավիճակից դուրս գալուն, այլ ոչ թե պարզևատրման միջոց լինի տարածաշրջանների վատ կառավարման հետևանքով ֆինանսական միջոցների բացակայության դիմաց:

➤ Աջակցությունը պետք է իրականացվի այնպիսի «սկզբունքներով», որպեսզի աջակցող տարածաշրջաններում չառաջացնի արտադրության ծավալի աճի և նոր նախաձեռնությունների նկատմամբ հետաքրքրության թուլացում:

Նշենք, որ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը միևնույն տարածաշրջանի երկարատև սուբսիդավորումը դիտում է որպես հակասահմանադրական գործողություն [3]: Տարածաշրջանային վերը ներկայացված քաղաքականության իրականացման արդյունքում անցած տարիներին նախկին ԳԴՀ-ի տարածաշրջաններում տպավորիչ դրական տեղաշարժեր են տեղի ունեցել, հատկապես սոցիալական ոլորտում:

50-60-ական թվականներին տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների լուրջ տարբերությունները նկատվել են նաև Շվեյցարիայում: Դրությունը շրջելու համար կառա-

վարությունն ընտրեց զուտ շուկայական մոտեցում անհավասարաչափության մեղմացումը հիմնականում իրականացվեց բնակչության մի մասն աղքատ տարածաշրջաններից ավելի հարուստ տարածաշրջաններ տեղափոխման ճանապարհով [7]:

Ուշագրավ է Եվրամիության (ԵՄ)՝ որպես միասնական տնտեսական կառույցի կողմից իրականացվող քաղաքականությունը՝ ուղղված միության կազմում ներառված տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման անհավասարաչափությունների մեղմացմանը: Ըստ 1987 թվականին ընդունված պայմանագրի 130^ա հոդվածի՝ «Համագործակցությունը ձգտում է կրճատել տարբեր տարածաշրջանների միջև ճեղքվածքը և ոչ բարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջանների հետ մնալը» [4]:

Ներկայումս ԵՄ-ի կազմում ընդգրկված երկրներն ըստ իրենց տնտեսական զարգացման մակարդակի պայմանականորեն բաժանվում են հետևյալ տիպատեսակների.

- «Զարգացած հյուսիս»,
- «Ավելի քիչ զարգացած հարավ»,
- «Առանձնահատուկ ծայրամաս»:

Վերջինի տարածքային միավորների մեծ մասը խնդրահարույց են համարվում [5]: Զգալի է, օրինակ, բնակչության մեկ շնչի հաշվով ԵՄ երկրների ՀՆԱ-ի ծավալների տարբերությունը: Առավելագույն մեծությունը 2.6 անգամ է (Լյուքսեմբուրգի և Հունաստանի միջև): Էլ ավելի մեծ է տարբերությունը գործազրկության մակարդակների միջև:

ԵՄ-ում սոցիալ-տնտեսական զարգացման տարածաշրջանային անհավասարաչափությունը ձևավորվում է հիմնականում երկու գործոնների ազդեցությամբ:

Առաջինն այն է, որ ԵՄ-ի կազմ են ընդգրկվում զարգացման տարբեր մակարդակ ունեցող նոր երկրներ և տարածաշրջաններ (օրինակ՝ Գերմանիայի կազմում ընդգրկված նախկին ԳԴՀ-ի ութ հողերից հինգը դասվեցին տասն ամենաթույլ զարգացած տարածաշրջանների թվին):

Այլ է երկրորդ գործոնի ազդեցությունը՝ ԵՄ-ի արդյունավետ տարածաշրջանային քաղաքականության շնորհիվ իրականացվում է հետ մնացող երկրների արագացված զարգացում, և դրանց սոցիալ-տնտեսական ցուցանիշներն աստիճանաբար մոտենում են ԵՄ-ի միջին ցուցանիշներին: Այսպես՝ չորս առավել հետ մնացող երկրներում (Իսպանիա, Պորտուգալիա, Հունաստան, Իռլանդիա) ՀՆԱ-ի աճի տարեկան տեմպը 0.75-1.75 տոկոսային կետով գերազանցում է ԵՄ-ի համար այդ ցուցանիշի միջին արժեքը [6]:

Ներկայումս ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականության կարևորագույն նպատակներից մեկը միության կազմում ընդգրկված երկրներում բնակչության կենսամակարդակի և կյանքի պայմանների տարածաշրջանային տարբերությունների կրճատումն է: Իրականացման հիմնարար են համարվել հետևյալ սկզբունքները.

- աջակցությունը հիմնականում պետք է ուղղված լինի տարածաշրջաններին, այլ ոչ թե պետություններին,
- երկրների միջև աշխատուժի մեծածավալ միգրացիան խնդրի կարգավորման հիմնական ճանապարհը չէ,
- աջակցության հիմնական նպատակը տարածաշրջաններում կայուն աճի ապահովումը, գործազրկության կրճատումը և մրցունակության բարձրացումն է, և ոչ թե սուբսիդիաների տրամադրումը,
- ԵՄ աջակցությունը պետք է զուգակցվի յուրաքանչյուր երկրի կողմից նույն ուղղությամբ իրականացվող քայլերով,
- աջակցությունը պետք է իրականացվի նպատակաճրագրային մոտեցմամբ,
- պետք է ապահովվի աջակցության գործընթացի թափանցիկությունը:

Սոցիալ-տնտեսական զարգացման տարածաշրջանային անհավասարաչափության ծրագրերի իրականացման միջազգային փորձը ներկայացված երկրներով չի սահմանափակվում, սակայն բերված վերլուծությունն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել խնդրի կարևորության հիմնական բնութագրիչների նմանության և լուծման մոտեցումների բազմազանության մասին: Այդ փորձի վերլուծությունից կարելի է անել մի շարք հետևություններ, որոնք կարծում ենք, հետաքրքրություն կարող են ներկայացնել ՀՀ իշխանությունների և գիտական հասարակության համար, մեր երկրում այդ հիմնախնդրի լուծման քաղաքականությունը ձևավորելիս և իրականացման միջոցառումների ծրագիր մշակելիս: Այդ հետևություններից են հետևյալները.

- Տարածաշրջանային անհավասարաչափության մեղմացման հիմնախնդրի լուծումը պահանջում է պետության ակտիվ միջամտություն, քանի որ միայն շուկայական մեխանիզմները և ինքնակարգավորման միջոցները չեն կարող պահանջվող ինտենսիվությամբ և խորությամբ կարգավորել այն:

- Հիմնախնդրի լուծման գործում շատ պետությունների, ինչպես և որոշ պետությունների միություններ կան միավորներ, ունեն զգալի ձեռքբերումներ, սակայն հիմնախնդիրը լուծված համարել չի կարելի:

- Տարբեր երկրներում խնդրի լուծման համար կիրառված մոտեցում-մոդելները, որպես կանոն, տարբեր են, մշակված են երկրի տնտեսության աշխարհաքաղաքական, էթնիկական և այլ բնույթի առանձնահատկությունների հաշվառումով:

- Տարածաշրջանային զարգացման անհավասարաչափությունների մեղմացման բոլոր հաջողված օրինակներն արդյունք են ոչ միայն երկրի տնտեսական ներուժի, այլև կիրառվող մոդելի տեսագործական հիմնավորվածության, կառավարման որակի, գործող իրավաօրենսդրական դաշտի բարձր մակարդակի:

➤ ՀՀ տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման զգալի անհավասարաչափության մեղմացման այժմ կիրառվող ազգային մոդելի բարելավման ժամանակ, երկրի առանձնահատկությունների հաշվառման հետ մեկտեղ, նպատակահարմար կլինի նկատի ունենալ նաև այլ երկրների, արդեն փորձարկում անցած մոդելների, որոշ տարրերի օգտագործման հնարավորությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Управление региональными программами в США и в Канаде, Экономика, Москва, 2000 г.
2. **Рудольф Курт**, Содействие экономическому развитию в Германии (на примере федеральной земли Бранденбург), международный журнал “Проблемы теории и практики управления”, №2, 2003 г.
3. **Хаузер Х. Г.**, Система финансового выравнивания между федерацией и землями в Германии, Финансы, №5, 1995 г.
4. **Дуглас Юилл**, Основные характеристики региональной политики. Европейский опыт, исследовательский центр европейской политики Старклайдского университета Шотландии.
5. Социально-экономическая география зарубежного мира, Москва, Конгресс, 1998 г.
6. Европа на службе регионального развития, Региональное развитие и сотрудничество, нулевой выпуск, 1997 г.
7. **Armstrong H., Taylor J.**, Regional Economics and Policy, 1993, Part 2.
8. **Ulrich Thieban**, Fiscal Federalism in Western Europe and Selected Other Countries' Centralization or Decentralization? What is better for Economic Growth, Berlin, 2000.

ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՁՈՅԱՆ

*ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության պետ,
մանկավարժական գիտությունների թեկնածու*

ԵՎՐԱՆՈՐՀՐԴԻ ԲԱԶՄԱԼԵԶՎՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԵՎ ՀՀ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետականության հիմքերի ամրապնդման, հասարակական կյանքում լեզվական մշակույթի նշանակալի դերի վերապահման, հայկական քաղաքակրթության հարուստ ժառանգության ներկայացման գործում իր ուրույն տեղն ունի պետական լեզվական քաղաքականության կանոնակարգված և արդյունավետ կիրառումը: Լեզվական և մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքը, ազգային փոքրամասնությունների լեզվի և մշակույթի զարգացման խրախուսումը միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության վարկն ապահովող պայմաններից է:

Լեզուն հասարակական երևույթ է, ուստի պաշտոնական և հրապարակային լեզվագործունեությունը հասարակության կողմից ենթակա է վերահսկողության: Այն իրականացվում է պետության կարգավորիչ գործառույթներով և, հետևաբար, լեզվական հարաբերությունների կարգավորումը պետության մենաշնորհն է և իրականացվում է օրենքով և պետական ծրագրով: Հայերենի` Հայաստանի Հանրապետության պետական լեզու լինելու իրողությունն արտացոլում է` ա) հոգևոր ժառանգությունը սերունդներին փոխանցելու, համայն հայության ազգային ինքնությունը և համազգային միասնականության գիտակցումը պահպանելու, բ) հայոց ազգապահպան գործոնների շարքում հայոց լեզվի վճռորոշ դերը, գ) իր պատմական հայրենիքում պետություն կերտող հայ ազգի ժողովրդագրական գերակշռության իրողությունը, դ) արդի գրական հայերենի մշակվածության և միջմշակութային մրցունակության բարձր աստիճանը:

Հայերենի` որպես պետական և կրթական լեզվի դերը վավերացված է ՀՀ Սահմանադրությամբ [1, հոդված 12], որը հետագայում ամրապնդվել է օրենսդրության համակարգում: «Լեզվի մասին» ՀՀ օրենքը հավաստում է հայերենի` որպես պետական լեզվի կարգավիճակը: Հայաստանի Հանրապետությունում հայերենը միակ պետական և պաշտոնական լեզուն է: Լեզվակրթության, լեզուների ու լեզվաքաղաքականության սկզբունքներն ամրագրված են «Լեզվի մասին» ՀՀ օրենքում, որը կարգավորում է լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները: Օրենքում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության պետա-

կան լեզուն հայերենն է, որը ապահովում է հանրային կյանքի բոլոր ոլորտները և պետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանումն ու զարգացումը: Մինևույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը [2, հոդված 1, 4-րդ ենթակետ]:

Օրենքը սահմանում է, որ ՀՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է (տե՛ս «Լեզվի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 1-ին ենթակետ), ինչը, սակայն չի ոտնահարում այլ լեզուների իրավունքները, քանի որ նույն հոդվածը սահմանում է նաև, որ Հայաստանի ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ (նույն տեղում, հոդված 2): Օրենքը սահմանափակում է օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնադրման իրավունքը՝ այն վերապահելով միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Բացի այդ, պետական լեզվի կարգավիճակից է բխում նաև օրենքի այն դրույթը, ուր ՀՀ նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր է:

Օրենքում սահմանվում են ՀՀ քաղաքացիների լեզվական պարտականությունները և հաստատությունների լեզվական իրավունքներն ու պարտականությունները:

Քաղաքացիների լեզվական պարտականությունների մասին դրույթը նախ և առաջ վերաբերում է պաշտոնատար անձանց, ինչպես նաև սպասարկման անձանց ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիներին, որոնք պարտավոր են տիրապետել հայերենին: Բացի այդ, ՀՀ-ն ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն պետք է լինի հայերենը (եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին) (նույն տեղում, հոդված 3, 2-րդ ենթակետ):

Հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները տարածվում են ՀՀ տարածքում գտնվող ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների վրա, որոնք թեև այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով, սակայն ՀՀ տարածքում պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել հայերեն, համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը, ցու-

ցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն, անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով (հոդված 4):

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմիններին, ձեռնարկություններին, հիմնարկներին ու կազմակերպություններին, ապա նրանք պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով (նույն տեղում, հոդված 4, 4-րդ ենթակետ):

Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպությունները նույնպես իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները պետք է ձևավորեն հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ (նույն տեղում, հոդված 4, 5-րդ ենթակետ):

Թեև օրենքում նշվում է, որ պետական լեզվաքաղաքականությունն իրականացվում է ՀՀ կառավարության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (նույն տեղում, հոդված 4, ա, բ, գ ենթակետեր, հոդված 5), սակայն ՀՀ լեզվաքաղաքականության մասին կոնկրետ պետական ծրագիրն ընդունվել է միայն 2002 թվականին: Այժմ լրամշակման փուլում է 2011-2015 թվականների պետական ծրագիրը:

Ծրագիրը նախատեսված է գրական հայերենի կանոնակարգման, ազգային փոքրամասնությունների լեզվական խնդիրների, կրթության համակարգի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների, օտար լեզուների ուսուցման համակարգի, պաշտոնական խոսքի, զանգվածային լրատվության միջոցների լեզվի, հրապարակային գրվածքների, մշակույթի ոլորտների համար:

Ծրագրի հիմնախնդիրներն են՝

- գրական հայերենի կանոնակարգումը,
- համակարգչային համացանցում հայերենի լիաժամանակյա ցերեկային օգտագործման ապահովում,
- պետական լեզվով կրթության և դաստիարակության ապահովում,
- հայերենի հանրային ուսուցման ապահովում ոչ հայախոսների համար,
- Աջակցություն ՋԼՄ-ների լեզվական անադարտության ապահովմանը, գործավարության և հրապարակային գրվածքների լեզվական ձևավորման օրենսդրական պահանջների կատարման ապահովում:

Լեզվի բնագավառում Հայաստանի ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովում

Ծրագրում ընդգծվում է, որ ազգային փոքրամասնությունների լեզուները ՀՀ լեզվամշակույթի անբաժան մասն են, նրա հարստությունը, և որ այդ լեզուների նկատմամբ պետական հոգածությունը մեր երկրի ժողովրդավարացման հետագա ընթացքի և քաղաքացիական հասարակության զարգացման համար հանգուցային նշանակություն ունի:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքները լեզվի բնագավառում երկբնույթ են՝ ազգային և հասարակական:

Ազգային մակարդակում ապահովվում է մայրենի լեզվի իմացության, դրանով կրթվելու և այն գործածելու իրավունքը, հասարակականում՝ պետական լեզվի՝ հայերենի իմացության և գործածության՝ ՀՀ բոլոր քաղաքացիների իրավունքն ու պարտականությունը:

Այդ իրավունքների ապահովման համար ծրագիրը նախատեսում է.

- համակողմանի աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը,
- աջակցություն ազգային փոքրամասնությունների միջև արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը՝ Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան,
- մայրենիով կրթություն և դաստիարակություն ստանալու՝ ազգային փոքրամասնությունների իրավունքի ապահովման նպատակով տվյալ ազգության մտավորականության գիտամանկավարժական ներուժի ներգրավում,
- աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին,
- ազգային փոքրամասնությունների լեզուների դասագրքերի ստեղծման հնարավորությունների վերլուծություն և հրատարակչական ծրագրի մշակում:

Աջակցություն Սփյուռքի հայապահպանմանը

Սփյուռքում իրականացվելիք լեզվական քաղաքականության հիմնական նպատակն այն է, որ հայոց պետությունը, ելնելով համայն հայության ամբողջականության գիտակցումից, ազգային շահերը ներկայացնողի իր գործոնով պետք է վճռական դերակատարություն ունենա Սփյուռքի հայապահպանման գործում:

ՀՀ-ում օտար լեզուների ուսուցման քարտեզավում

Ծրագիրը կարևորում է մեր ժամանակներում քաղաքացիների՝ օտար լեզուների իմացության հարցը՝ միաժամանակ ընդգծելով, որ միասնականացման գործընթացները պետք է ծառայեն ոչ թե ժողովուրդների միաձուլմանը, այլ սեփական արժեքների անկողմնակալ և արժանապատիվ գնահատման, համաշխարհային հոգևոր մշակույթին առնչվելու, ազգային և համամարդկային ներդաշնակ զուգակցման նպատակին:

Ծրագրում նշվում է պետական լեզվի հարաբերությամբ օտար լեզուների օրենսդրորեն համահավասար դերը՝ միևնույն ժամանակ նշելով, որ տարբեր պատճառներով հասարակության վերաբերմունքը դրանց նկատմամբ կարող է տարբեր լինել: Հայաստանում, պատմական հանգամանքների բերումով, կարևորվում է ռուսերենի դերը:

Ավանդաբար լինելով մեր տարածքում ուսուցման և շփման երկրորդ լեզուն, նպաստելով համաշխարհային գիտության և մշակույթի նվաճումներին հաղորդակից դառնալուն՝ ռուսերենը հատուկ դեր ունի Հայաստանի հասարակական կյանքում:

Ավելի քան մեկ դար ռուսերենը տեխնոլոգիաների արդյունաբերության, բժշկության, շինարարության, տրանսպորտային փոխադրումների, գիտության և բարձրագույն կրթության մասին տեղեկատվության տարածման միջոց էր: Սա պայմանավորված էր ոչ միայն կառավարության քաղաքականությամբ, որի գլխավոր նպատակն էր ամբողջ երկրում հասնել ռուսերեն միալեզվության, այլ նաև հատուկ բառապաշարի առկայությամբ (լեզու՝ հատուկ նպատակների համար): ԽՍՀՄ շատ այլ լեզուների համապատասխան ենթահամակարգերը բավականաչափ զարգացած և միասնական չէին, չնայած խորհրդային ժամանակ հետևողական աշխատանք էր տարվում ազգային լեզուներում տերմինաբանական համակարգերի մշակման ուղղությամբ:

Չնայած դրան, Հայաստանում հայերենի՝ որպես պետական լեզվի, հիմնավոր և կայուն ավանդույթներ կան: Խորհրդային տարիներին հայերենը գիտության, կրթական համակարգում լայնորեն կիրառվող դասագրքերի լեզուն էր: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ տերմինաբանական համակարգերի կիրառումը մասնագիտական հաղորդակցության ոլորտում գործնականում լիովին մշակված չէր, և անկախությունից հետո էլ այնքան արագ չի զարգացել, որքան կարելի էր ակնկալել: Այս երևույթի ամենաակնհայտ օրինակները կարելի է գտնել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ բժշկությունը, օրենսդրությունը և ռազմական ոլորտը, որտեղ դեռ լայնորեն կիրառվում է ռուսերենը: Բժիշկների մեծ մասը դեղատոմսերը ռուսերեն են գրում, և որ կան առարկաներ, որոնք բժշկական համալսարանում դեռ ռուսերեն են դասավանդվում: Տեխնիկական և բժշկական համալսարաններում համապատասխան մասնագիտական գրականության էական մասը (ըստ ոմանց՝ մինչև 95%-ը) ռուսերեն է: Այսօր դա վերաբերում է ոչ միայն ռուսերենից փոխառություններին, այլ նաև այլ լեզուներից, հիմնականում՝ անգլերենից: Հետևաբար՝ տեխնիկական և գիտական տերմինաբանությունը հայերենի փոխակերպելու վերահսկվող գործընթացի շարունակական կարիք կա:

Բացի այդ, վերջին տարիներին միջազգային հարաճուն շփումների հետևանքով անգլերենը, ակնհայտորեն ընդլայնելով իր գործառության սահմանները, ՀՀ-ում վայելում է հասարակական բարձր առաջարկ: Կրթական համակարգում դա հաճախ տեղի է ունենում մյուս օտար լեզուների հաշվին: Ուստի ծրագիրը կարևորում է կրթության համակարգում բոլոր օտար լեզուների հավասար բաշխվածությունն ապահովելը:

Անկախության հռչակումից (1991) հետո Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականին դարձել է ՄԱԿ-ի անդամ պետություն: ՀՀ-ն ակտիվորեն անդամակցում է նաև մի շարք միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ, ՅՈՒՆԵՍԿՕ և այլն): 2001 թվականի հունվարի 25-ից Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ:

ՀՀ-ն ստորագրել է մարդու իրավունքների պաշտպանության մասին մի շարք միջազգային համաձայնագրեր և հռչակագրեր, որտեղ նշվում են նաև մարդու լեզվական ու մշակութային իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունն ու պետության պարտավորությունները:

Հայաստանի Հանրապետությունը Եվրախորհրդին իր անդամակցության արարողության պահին ստորագրեց «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի Եվրոպական կոնվենցիան և նրա հմ.հմ. 1, 4, 6, 7 արձանագրությունները [3]:

Հայաստանը ստորագրել է նաև «Եվրախորհրդի մշակութային համաձայնագիրը», «Ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին» շրջանակային կոնվենցիան [4] (1997թ. հունիսի 25-ին, երբ ՀՀ-ն դեռևս Եվրոպայի խորհրդի անդամ չէր), «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիան», Եվրախորհրդի ժամանակակից լեզուների Եվրոպական կենտրոնի մասին «Ընդլայնված մասնակի համաձայնագիրը»:

Հայաստանը, լինելով Եվրախորհրդի «Ընդլայնված մասնակի համաձայնագրի» անդամ, ակտիվորեն մասնակցում է ժամանակակից լեզուների Եվրոպական կենտրոնի (ԺԼԵԿ) աշխատանքներին:

Ակնհայտ է, որ Եվրախորհրդի լեզվաքաղաքականությունը հիմնվում է անհատի բազմալեզվության առանցքային հասկացության վրա: Սա անհրաժեշտ է տարբերակել հասարակության կամ աշխարհագրական տարածաշրջանների բազմալեզվությունից:

Ըստ այդմ, Եվրախորհրդի սկզբունքների համաձայն՝

- հասարակության բազմալեզվությունն առնչվում է տվյալ աշխարհագրական տարածքում, մեկից ավելի մեծ թե փոքր լեզուների առկայությանը, այսինքն՝ որևէ սոցիալական խմբի հաղորդակցության լեզվին, լինի դա պաշտոնապես ճանաչված լեզու, թե ոչ: Նման տարածքում անհատները կարող են միալեզու լինել՝ խոսելով միայն իրենց սեփական լեզվով,

- անհատի բազմալեզվությունը վերաբերում է անհատների կողմից օգտագործվող լեզուների բազմազանությանը, և հենց այդ իմաստով այն միալեզվության հակառակն է: Այս դեպքում այն ներառում է անհատի կողմից օգտագործվող լեզուների բազմազանությունը՝ «մայրենի կամ առաջին լեզուն» և այլ տարբեր լեզուներ (իմացության ցանկացած մակարդակով): Ըստ այդմ էլ բազմալեզու որոշ տարածքներում կարող են լինել և՛ միալեզու, և՛ բազմալեզու անհատներ:

Եվրոպան՝ որպես աշխարհագրական տարածք, բազմալեզու է, ինչպես նաև Եվրախորհրդի անդամ-պետությունները: Եվրախորհուրդը համաձայնության է եկել լեզվակրթական քաղաքականության միջազգային սկզբունքների մասին, որպես այդ քաղաքականության մշակման ուղեցույց: Այդ սկզբունքները խթանում են անհատի բազմալեզ-

վությունը՝ որպես լեզվակրթական քաղաքականության առանցքային նպատակ:

Լեզուների իմացության համաեվրոպական համակարգում անհատի բազմալեզվությունը սահմանված է հետևյալ կերպ. «Բազմալեզվությունը հաղորդակցական նպատակով լեզուների օգտագործման և միջնակութային փոխներգործությանը մասնակցելու կարողությունն է, որտեղ անհատը, որպես հասարակության անդամ, ունի մի քանի լեզուների տիրապետման տարբեր մակարդակներ և բազմազան մշակութային հետ շփման փորձ: Սա առանձին կարողությունների վերադրություն կամ զուգադրություն չէ, ավելի շուտ՝ բարդ, նույնիսկ բաղադրյալ կարողությունների առկայություն, որոնք կարող է կիրառել լեզուներ օգտագործողը»:

Այսպիսով բազմալեզվությունն առնչվում է անհատի ամբողջական լեզվացանկին՝ ներառյալ նայրենի կամ առաջին լեզուն:

Այս տեսակետը լեզվաքաղաքականության կենտրոնում դնում է ոչ թե լեզուները, այլ դրանցով խոսող մարդկանց: Շեշտը դրվում է բոլոր անհատների կողմից մի քանի լեզու սովորելու և օգտագործելու կարևորության արժևորման և զարգացման վրա՝ պատշաճ ուսուցման և բազմալեզու կրթության միջոցով այս կարողությունն ընդլայնելու համար: Նման ուսուցման նպատակն է սովորողների մոտ ձևավորել լեզվական «հոտառություն» և մշակութային ըմբռնում՝ որպես ժողովրդավարական քաղաքացիության հիմք:

Եվրախորհրդի և անդամ պետությունների համար գերակա համարելով «Կրթություն՝ հանուն ժողովրդավարական հասարակության» գաղափարը՝ 1997-ին պետությունների և կառավարությունների ղեկավարները կարևորեցին լեզուների առանցքային դերը Եվրոպայում ժողովրդավարական քաղաքացիության իրականացման գործում: Ժողովրդավարության պայմաններում քաղաքական որոշումների կայացմանը և հասարակության կյանքին քաղաքացիների ակտիվ մասնակցության կարիքը ենթադրում է, որ լեզվական պատշաճ հմտությունների սակավությունը չպետք է անհնար դարձնի այդ մասնակցությունը: Եվրոպայի քաղաքական և հասարակական կյանքին մասնակցության հնարավորությունը, ընդ որում՝ ոչ միայն իր սեփական երկրում, ենթադրում է բազմալեզվության կարողություններ, այլ կերպ ասած՝ Եվրոպայի քաղաքացիների հետ արդյունավետ և պատշաճ շփվելու կարողություն:

Բազմալեզվության զարգացումը ոչ միայն սոսկ գործառութային անհրաժեշտություն է, այլ ժողովրդավարական վարվելակերպի կարևոր բաղադրիչ: Մարդկանց բազմալեզու հաղորդակցության «լեզվացանկի» ճանաչումը հանգեցնում է լեզվական հանդուրժողականության և լեզվական տարբերությունների նկատմամբ հարգանքի, որը ենթադրում է հարգանք պետության և լեզվական մեծամասնության հետ հարաբերություններում անհատների և խմբերի լեզվական իրավունքների

նկատմամբ, հարգանք խոսքի ազատության նկատմամբ, հարգանք ամենաքիչն օգտագործվող և ուսուցանվող ազգային լեզուների նկատմամբ, հարգանք միջտարածաշրջանային և միջազգային հաղորդակցմանը նպաստող լեզվական բազմազանության նկատմամբ:

Լեզվակրթական քաղաքականությունը սերտորեն առնչվում է ժողովրդավարական քաղաքացիության արժեքների յուրացման հետ, քանզի նրանց նպատակները փոխադարձաբար լրացնում են միմյանց. լեզուների ուսուցումը լավագույն ոլորտն է միջնակութային շփման համար, որտեղ, հանուն ժողովրդավարական կյանքի կրթությունն իր միջնակութային չափանիշներով կարող է ընդգրկվել կրթական համակարգերում:

Հարկ է նշել, որ թեև բազմալեզվության զարգացումը լեզվակրթության համընդհանուր նպատակն է, այդուհանդերձ դրա իրագործումը շատ երկրներում դեռ նոր է սկսվում: Ձեռնարկվող քայլերը կարող են ավել կամ պակաս պարտադրող լինել, օրինակ՝ ուսումնական ծրագրերի կանոնակարգումը նախարարության կողմից, կամ ուսուցման կազմակերպման նոր ձևերը, որոնք կարող են հատուկ ֆինանսական միջոցներ պահանջել, կամ քաղաքական որոշումները, որոնք ենթադրում են ընդլայնված քննարկումներ բոլոր մակարդակներում:

Բազմալեզվության զարգացման քաղաքականությունը կարելի է իրականացնել տարբեր ուղիներով, և ամենևին էլ պարտադիր չէ, որ այն լուծվի «ամեն ինչ, կամ՝ ոչինչ» սկզբունքով:

Ակնկալվում է, որ բազմալեզվության լեզվաքաղաքականության իրականացումը չպետք է կատարվի պետական լեզվի՝ հայերենի հաշվին. պետք է իրականացվի այն փուլ առ փուլ, իսկ հանրակրթության և հանրային կյանքի ոլորտներում հայերենը մշտապես պետք է լինի գերակա դերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ.:
2. «Լեզվի մասին» ՀՀ օրենք, 17 ապրիլի 1993 թ.:
3. «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիա:
4. «Ազգային փոքրամասնությունների մասին» շրջանակային կոնվենցիա:
5. «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա», դեկտեմբերի 28, 2001 թ.:

ՎԻԼԻԿ ԵՂԻՉԱՐՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի դասախոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԵՉԱՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄՊԵՐԱՏԻՎԸ**

Ցանկացած պատմական պահի ուսումնասիրությանը կարելի է մոտենալ առնվազն երեք տեսանկյունով՝

- յուրաքանչյուր հասարակայնորեն նշանակալի երևույթ կարելի է դիտարկել որպես անցյալում տեղի ունեցած երևույթների հետևանք և նախորդող հաջորդական վիճակների ավարտական փուլ,
- այն կարելի է ընկալել որպես նոր երևույթների բացահայտող, ապագայի նախապատկեր, համարել ոչ այնքան նախկին երևույթների հետևանք, որքան հետագայի պատճառ,
- հնարավոր է համալիր մոտեցում, որն անկասկած նախընտրելի է, այն է. յուրաքանչյուր պատմական երևույթ դիտարկել և՛ որպես նախորդների հետևանք, և՛ որպես միաժամանակ հետագայի պատճառ:

Վերջին տասնամյակներում համաշխարհային գիտության մեջ իմացաբանական իրադրությունը բնութագրվում է գիտական պարադիգմայի¹ փոփոխմամբ: Նոր պարադիգման ձևավորվեց մի շարք գիտական ուղղությունների շրջանակներում. առաջին հերթին բոյոսելյան դպրոցի՝ Ի. Պրիգոժինի [1] ղեկավարությամբ: Գիտական պարադիգմաների փոփոխման գործընթացը թափանցել է նաև հասարակական գիտությունների մեջ:

Լավագույն սոցիալական կարգի որոշումը հասարակական կառույցների համար միշտ էլ եղել է հրատապ խնդիր: Այդ ոլորտի կարևոր խնդիրներն ունեցել են իրենց ենթատեքստերը. ի՞նչ սոցիալական կարգ կամ սոցիալական զարգացման ի՞նչ ուղղություն ընտրել հասարակական կյանքի քառսը² հաղթահարելու համար:

Կարգի և քառսի հարաբերակցությունը սոցիալական կառույցի հիմնարար հարցն է: Նկատենք, որ կարգի ոչ բանական կերպարները, որոնք որսում և «քամոցում» են իրականության մեր ըմբռնումը, ընդու-

¹ Պարադիգմա-մտքերի, ընկալումների և արժեքների համախումբ, որոնք ստեղծում են իրական տեսունակություն: Լայն իմաստով պարադիգման սահմանվում է որպես համոզմունքների, արժեքների և տեխնիկաների հավաքածու, որն ընդունվում է տվյալ գիտական հասարակության կողմից: Պարադիգմաներից որոշներն ունեն փիլիսոփայական բնույթ, դրանք ամեն ինչ ընդգրկող են և ընդհանուր, մյուսները ղեկավարում են գիտական մտածողությունը միայն որոշակի բնագավառներում: Պարադիգման նույնքան կարևոր է գիտության համար, որքան դիտարկումներն ու փորձը: Սակայն ոչ մի պարադիգմա չի կարող լինել իրականության բոլոր փաստերի բացատրության բանալին:

² Քառս-բարդ և անկանխատեսելի կարգի տեսակ:

նակ են ոչ միայն թեթևացնել և կարգավորել մեր կյանքը, այլև ստեղծել հիմնախնդիրներ: Այդ առաջին հերթին վերաբերում է «սոցիալական կարգի» հաստատման հիմնախնդրին:

Կարգի և քառսի հարաբերակցության հիմնախնդրում տեսական և մեթոդաբանական ճեղքումը կապված է XX դարի 70-ական թվականներին ստեղծված սիներգետիկայի հետ, որը միջառարկայական գիտական ոլորտ է, որի նպատակն է ուսումնասիրել համընդհանուր, կամայական բնույթի համակարգերին յուրահատուկ (այդ թվում նաև սոցիալական) ինքնակազմակերպական ու ինքնակարգավորման օրինաչափությունները: Ուսումնասիրելով «քառսից կարգի առաջացումը»՝ գիտնականներն եկան եզրակացության, որ քառսը խաղում է տարբեր դերեր (ինչպես կործանիչ, այնպես էլ կառուցողական) կարգի կազմակերպման և ձևավորման տարբեր փուլերում: Ավելին, «կարգի կառույցների» առաջացման դեպքում քառսը չի անհետանում, այն ներկա է որպես դրանց գոյատևման ու զարգացման անհրաժեշտ բաղադրիչ [2]:

Ամենատարբեր բնույթի կառույցների ստեղծումը սիներգետիկական կապում է համակարգի գոյատևման այնպիսի պայմանների հետ, ինչպիսիք են՝ բացությունը, ոչ գծայնությունը և անհավասարակշռվածությունը: Համակարգը բաց է, եթե ընդունակ է մշտապես էներգիա և/կամ տեղեկատվություն փոխանակել (*համագործակցել*) *շրջակա միջավայրի հետ*, ունի «աղբյուրներ» (որոնց գործողությունը օժանդակում է տվյալ համակարգի կառույցային անհամասեռության ուժեղացմանը), ինչպես նաև «կլանիչներ» (էներգիայի ցրման, կլանման տիրույթներ, որոնց գործունեության միջոցով համակարգում *տեղի է ունենում կառույցային անհամասեռությունների հարթեցում*):

Սիներգետիկական աշխարհընկալումը փորձ է կառուցելու իռացիոնալ աշխարհի խոհամիտ ձևաչափը: Սիներգետիկական իմացաբանական աշխարհում տեղ է տրվում և՛ քառսին, և՛ կարգին, և՛ հավասարակշռվածությանը, և՛ անհավասարակշռվածությանը, և՛ կայունությանը, և՛ անկայունությանը, և՛ կանխատեսելիին, և՛ անկանխատեսելիին:

Սիներգետիկայում առաջնահերթ նշանակություն է տրվում կառավարման հասկացությանը՝ փոփոխելով կառավարման պարամետրերը շատ թե քիչ կանխատեսելի ձևով, ուսումնասիրում են համակարգի ինքնակազմակերպումը: Ոչ պակաս կարևոր են որակական «հասկացող» մեթոդները.

- աշխարհի նկարագրման մեջ դետերմինիզմը պատահականության բացառումը չէ, դրանք փոխլրացնում են միմյանց,
- զարգացումը բազմատարբերակ է և այլընտրանքային: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ այդպես կոչված «փակուղային» միջանկյալ զարգացման ուղիները կարող են լինել կատարյալ և հեռանկարային, քան ընտրված զարգացման ուղին,

- զարգացումը տեղի է ունենում անկայունության զուգակցմամբ: Դետևաբար պետք է անտեսել քառսի շեղումը (ֆլուկտուացիա)¹ զարգացման մեջ,

- շեղումները կարող են լինել այնքան ուժեղ, որ անկայունության դեպքում կարող է առաջ գալ զարգացման անհետադարձելիություն [3]: Նախկին համակարգը կամ որակապես փոխվում է (ծնվում է նոր կարգ, կառույց), կամ քայքայվում է: Ապագայի զարգացման այդպիսի բեկումնային, անորոշ վճռական պահը կոչվում է բիֆուրկացիոն² կետ (տիրույթ) կամ համակարգի փոփոխման հնարավոր ուղիների «ճյուղավորման» կետ: Բիֆուրկացիոն տիրույթը բնութագրվում է սկզբունքային անկանխատեսելիությամբ: Գործընթացի ելքը որոշվում է կոնկրետ տվյալ պահին նրանում գործող աղբյուրների, կլանիչների և ատրակտորների հարաբերակցությամբ,

- աշխարհի զարգացումն ընթանում է ոչ գծային օրենքով, այսինքն՝ այն չի կարելի հանգեցնել համընթացության. զարգացման աճը և ուղղությունը միարժեք տրված չեն, որտեղից էլ առաջ է գալիս բարդ կառուցվածք ունեցող համակարգերի կառավարման հիմնախնդրի նոր ըմբռնման անհրաժեշտությունը: Այն պետք է կողմնորոշվի ոչ այնքան դեկավարողի ցանկությունը, որքան այդ համակարգի զարգացման ներքին միտումներին, ինչպես նաև ենթադրել գոտիների գոյություն, որոնք ազատ են վերահսկողությունից և անկանխատեսելի են,

- իրական աշխարհը դեկավարվում է ոչ դետերմինիստական օրենքով, հավասարապես նաև ոչ բացարձակ պատահականությամբ:

Սիներգետիկական զարգացման գործընթացի հետազոտումը տեղափոխելով «կարգի և քառսի» կատեգորիական շարքը, բնագիտական գիտությունների նորագույն նվաճումների միջոցով հետաքրքրություն է ստեղծում աշխարհակարգավորման հիմնախնդրի (մասնավորապես գլոբալացման) նկատմամբ: Ընդ որում համակողմանիացնելով աշխարհակարգավորումը, հռչակելով բնության, մարդու և հասարակության մակարդակով ինքնակազմակերպական օրենքների ընդհանրությունը, սիներգետիկական դուրս է գալիս աշխարհահայացքային մի կարևոր հիմնախնդրի՝ ինքնազարգացող աշխարհում մարդու կողմից իր տեղի փնտրման հիմնախնդրի վրա: Կարելի է ասել, որ եթե մինչ այդ մարդը ձգտում էր «կերտել աշխարհը իր կերպարին և նմանությանը համապատասխան», ապա սիներգետիկական ցույց է տալիս այլ աշխարհահայացքային ուղի. **մարդը պետք է ձգտի «կերտել իրեն աշխարհի կերպին և նմանությանը համապատասխան»**, ինքնակամ չփոր-

¹ Ֆլուկտուացիա-պատահական շեղում, թեթում:

² Բիֆուրկացիա-ճյուղավորում, բարդ համակարգերի վարքի հիմնարար բնութագրիչ, որը բարձր լարվածություն է կրում: Բիֆուրկացիան տեղի է ունենում, երբ համակարգն իր միջավայրում կորցնում է կայունությունը: Բիֆուրկացիոն կետը համակարգի կայունությունից դեպի քառս տանող շեմն է:

ծի վերակառուցել աշխարհակառույցը, այլ **համաչափվել ինքնակարգավորվող աշխարհակառույցում:**

Սիներգետիկան օժանդակում է աշխարհի նոր տեսունակության, գաղափարախոսության կայացմանը, որը կարող է հիմնավոր մեթոդաբանական հիմք ծառայել պետական կառավարման ձևաչափեր կիրառելիս, առանձնապես գլոբալացման ներկա փուլում: Առաջին գաղափարն այն է, որ բարդ կազմակերպվածություն ունեցող սոցիոբնական համակարգերին (մասնավորաբար մարդկային հասարակություններին, պետություններին) չի կարելի պարտադրել նրանց զարգացման կամայական ուղիներ: Անհրաժեշտ է ըմբռնել, թե ինչպես օժանդակել դրանց սեփական զարգացման միտումներին և ինչպես դուրս բերել դրանց այդ ուղու վրա: Համագործակցությունը չպետք է համահարթեցնի մասնակիցներին կոշտ իրավական-տնտեսական նորմատիվ ակտերով: Յուրաքանչյուր բարդ կառույց ունեցող համակարգ, որպես կանոն, ունի ոչ միակ, այլ բազմաթիվ սեփական բնույթին համապատասխան զարգացման ուղիներ: Սակայն իրականացնելի են ոչ բոլոր ուղիությունները, որոնք ցանկալի են: Յուրաքանչյուր իրադրություն ունի հնարավոր որոշակի կազմակերպական ձևերի սպեկտր և այդ անհրաժեշտ է հաշվի առնել համագործակցության գործընթացում: Սահմանափակումների իմացությունը, այսինքն՝ ինչը սկզբունքորեն հնարավոր չէ իրականացնել տվյալ միջավայրում, արգելքները, արդեն իրենցից ներկայացնում են արժեքավոր գիտելիքներ:

Համաձայն բարդ համակարգերի ինքնակազմակերպման և բարեշրջության [4], [5] օրենքների, շուկայական տիպի կառուցակարգերի կուրորեն և կոշտ ընտրությունը միակ հնարավոր ուղին չէ: Գոյություն ունի նաև ժամանակի ու նյութական ծիզերի բազմակի կրճատման ուղի, որը համակարգի կառույցների, մասնավորապես, նրա ակտիվ տարրերի (մարդկանց, անձնակազմի, ընտանիքների) արձագանքման գրգռման ուղին է: Նշանակետ ունենալով ապագայի ցանկալի վիճակը և հետևելով այդ համակարգի ինքնակազմակերպման բնական միտումներին՝ կարելի է կրճատել կազմակերպման հետագա ձևերին օժանդակող ատրակտորների¹ վրա դուրս գալու ժամանակը: Այս ձևով կարելի է շրջանցել համընթաց բարեշրջության ուղու ոլորապտույտները և արագացնելու այն: Համագործակցությունն այդ ուղու վրա դուրս գալու առաջին քայլն է:

Սիներգետիկան ցույց է տալիս, որ որոշ պայմաններում փոքր շեղումը կարող է էական լինել (առանձին մարդկանց գործողությունները կարող են որոշել վարքի մակրոսոցիալ մոնոչի կայացմանը): Այդ տեղի ունի սոցիալական միջավայրի հատուկ վիճակներում (անկայուն), երբ գործընթացի մեջ են մտնում ոչ գծային դրական հետադարձ կապի կառուցակարգերը՝ արագ ինքնախթանող աճի կառուցակարգերը:

¹ Ատրակտոր-ուժեր, որոնք ուղղորդում են համակարգի զարգացումն ըստ որոշակի հետագծի:

Ոչ գծային մտածողությունն այն է, որ նորն առաջանում է շեղման օժանդակությամբ, այսինքն՝ անկանխատեսելի և եղածից դուրս չբերվող (տրամաբանությամբ) ու միևնույն ժամանակ նորը «ծրագրավորված է» զարգացման հնարավոր ուղիների լուսակրի, բարեշրջության համեմատաբար կայուն ատրակտորների տարրապատկերի մեջ:

Բարդ համակարգերի կառավարման դասական, ավանդական մոտեցումը հիմնվում է դրանց գործառության պատկերացման վրա: Համաձայն այդ պատկերացման՝ արտաքին կառավարչական ազդեցության արդյունքը միարժեք է, կանխատեսելի և գծային: Եվ որքան շատ է ներգրիա է գործադրվում, այնքան մեծ է արդյունքը:

Սակայն պարզվում է, որ գործադրված շատ ճիգեր լինում են իզուր կամ էլ վնասում են, եթե դրանք հակասում են ինքնակազմակերպվող համակարգի ինքնազարգացման միտումներին: Հետևաբար բարեփոխումների գործունեությունն անհրաժեշտ է հասկանալ ոչ թե որպես չեզոք սոցիալական նյութի կամայական զուգակցումներ ու վերաբաշխում որևէ մի մտածված նախագծով, այլ անձի կողմից միջավայրի կառույցի ըստ միջավայրի ներքին հնարավորությունների հետագա ինքնակարգավորման, մակրոսոցիալ կայուն վիճակին հանգեցնող ատրակտորներին բերման համապատասխան քայլեր:

Կառավարման գործընթացում կարևորվում են երկու հասկացություն՝ կարգը և անկարգապահությունը: Ավտորիտար հասարակական կարգը հիմնվում է, օրինակ՝ հասարակության համընդհանուր հսկողության վրա և առաջանում է սոցիալական գործընթացների ինքնակազմակերպման ու ինքնազարգացման անբնական իրագործման հետևանքով: Մակրոսոցիալ մակարդակում կարգը կարող է հիմնվել առավելագույն ազատության, ինքնաբացահայտող գործունեության, շահերի բազմազանության և միկրոմակարդակում դրանց իրականացման (համայնքների, երկրների, տարածաշրջանների համագործակցությամբ) միջոցով: Սոցիալական կարգի հենց այս տիպը հնարավորություն կտա հասարակությանը շարժընթաց գործառել ու զարգանալ:

Ինքնակազմակերպման տեսությունը ցույց է տալիս կառավարող անձի կողմից սոցիալական գործընթացների կառավարման և բարեփոխման կարգավորման ու հսկման գաղափարի հնարավորության լիովին անկայանելիությունը: Անձի կողմից յուրաքանչյուր կառավարչական ազդեցություն ներառելով սոցիալական ինքնակազմակերպման գործընթացի մեջ, առաջացնում է որոշակի գրգիռ սոցիալական գործընթացում, սակայն երբեք իրեն չի ենթարկում այդ գործընթացը: Այդ կապակցությամբ տեղին է մտաբերել Հեգելի հետևյալ միտքը. «Համաշխարհային պատմության մեջ մարդկանց գործողությունների շնորհիվ ընդհանրապես ստացվում են նաև որոշ այլ արդյունքներ,

քան որոնց նրանք ձգտում են և որոնց նրանք ցանկանում են: Նրանք հասնում են իրենց շահերի բավարարմանը, սակայն դրա շնորհիվ իրականացվում է ևս ինչ-որ հետագա բան, այնպիսի բան, որը թաքնված է դրանց մեջ, սակայն չի գիտակցված նրանց կողմից և չի եղել նրանց մտադրությունների մեջ» [6]:

Ավելին, սուբյեկտիվ կառավարչական ազդեցության ներմուծումը սոցիալական գործընթացի մեջ կարող է առաջ բերել անհավասարակշռվածություն, բնական կապերի, ինչպես նաև ինքնակազմակերպման մեջ կարգավորվածության խախտում: Նույնիսկ ինչ-որ մեկ կամ մի քանի ընտրված ցուցանիշով (պարամետրով) հաջող ազդեցությունը կարող է միառժամանակ մեծացնել անկառավարելիության և անկազմակերպվածության աստիճանը՝ ըստ այդ պարամետրերի:

Ինքնակազմակերպման տեսությունը ցույց է տալիս, որ քառսի մի որոշ չափը, տարերայնության, ներքին անորոշության որոշ բաժինը չարիք չէ: Անհրաժեշտ է հակասական անհատական և խմբային շահերի ու գործողությունների մշտական ցրում, ենթահամակարգերի բազմազանություն, որոնք ունակ են հարմարվել ապագայի տարբերակներին: Դրան կարելի է հասնել մշտական, անընդհատ համագործակցության միջոցով: Համակարգի տարրերի (ենթահամակարգերի) բազմազանությունը նրան կայուն է դարձնում ապագայի հանդեպ: Հասարակության տարրական կառույցներն էական ազդեցություն ունեն մակրոսոցիալ գործընթացների վրա: Մարդկանց միջավայրը, բարոյական կարգավորիչները, որոնց նրանք հետևում են ամեն օրվա սովորական կյանքում, նույնպես ազդում են առաջացող մակրոսոցիալ կառույցների կայունության վրա:

Այսպիսով, համաձայն ինքնակազմակերպման և բարեշրջության կառուցակարգերի նոր ըմբռնման, շուկային այլընտրանք կարող է լինել ոչ գծային աճի ոչ այնքան ազդեցության մեծությունը, որքան դրա բաշխումը և տարածաժամանակային գործընթացների ու կառույցների անդրադարձման գրգռումը, որը կարելի է իրականացվել համագործակցության միջոցով:

Գոյություն ունեն մի ամբողջականության մեջ տարբեր տարիքի կառույցները միավորելու ճարտարագիտական օրենքներ և, ըստ երևույթին, նաև միավորման (համագործակցման) լավագույն ձև: Բարդ համակարգի ձևավորման ու կայացման սկզբնական փուլում կարևոր է նրա ճշգրիտ տոպոլոգիական կազմակերպումը: Տարբեր տարիքի և ձևի կառույցները մի բարդ ոչ գծային կառույցի մեջ ինտեգրման ժամանակ տեղի է ունենում «հզորության էֆեկտ»՝ միավորման սկզբնական փուլում գործընթացների զարգացումը որոշ ժամանակ թուլանում է: Կառույցների տոպոլոգիական ճիշտ կազմակերպումը հանգեցնում է

կառույցի առավելագույն զարգացման փուլի (տե՛ս ԵՄ-ի օրինակը): Հաստատվում է նոր, ավելի բարձր զարգացման աճ: Ամբողջը զարգացնում է ավելի արագ, քան՝ մասերը:

Գ. Խակեցիցի [7] է պատկանում ինքնակազմակերպման հիմնական սկզբունքներից ընդհանուր ենթարկվելության սկզբունքը: Հիմնվելով այդ սկզբունքի վրա՝ բարդ համակարգերում կարելի է հաշվի չառնել մեծ թվով պարամետրեր (փոփոխականներ) և կառավարման խնդիրը հանգեցնել փոքր թվով պարամետրերի (ակտիվ վարքի դեր խաղացող) հետազոտմանը, վերհանմանն ու կառավարմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Пригожин И., Стингерс И.,** Порядок из хаоса. Новый диалог человека с природой, М., 1981.
2. **Князева Е. Н., Курдюмов С. П.,** Синергетика как новое мировидение // Вопр. фил., 1992, N 12, с. 3-20.
3. **Князева Е. Н.,** Случайность, которая творит мир // в поисках нового мировидения, М., 1996.
4. **Кузьмин М.В.,** Самоорганизация и самозволюция // философская и социологическая мысль, Киев, 1994, N 9-10.
5. **Курдюмов С. П.,** Законы эволюции в сложных системах, М., 1990.
6. **Гегель Г.,** Философия истории, М., 1935, Т. 8, с. 27.
7. **Хакен Г.,** Синергетика. Иерхии неустойчивостей в самоорганизующихся системах и устройствах. М. 1985.

ԱՎԵՏԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺԱՆՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Պետության տարածքային կազմակերպման համակարգը՝ վարչատարածքային բաժանումը, նախատեսում է երկրի տարածքի բաժանում վարչական առանձին մասերի՝ վարչատարածքային միավորների, որոնց հիման վրա էլ ձևավորում և գործում են ինչպես պետական կամ տարածքային կառավարման, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները: Վարչատարածքային բաժանումը վճռորոշ նշանակություն ունի դրանց փոխհարաբերությունների արդյունավետ կազմակերպման համար:

Պետության տարածքային կառուցվածքից են մեծապես կախված պետական և տեղական իշխանությունների կազմակերպման հարցերը, քանի որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն իրականացվում է վարչատարածքային կառուցվածքային միավորների սահմաններում:

Արդյունավետ տարածքային կառավարման նպատակով և երկրի վարչատարածքային կառուցվածքի ձևավորման համար վարչատարածքային բաժանման սկզբունքներն ելակետային, հիմնարար ու որոշիչ նշանակություն ունեցող կազմակերպական և գործառնության օրինաչափությունների ամբողջություն են [4, էջ 83]:

Այս կամ այն երկրի վարչատարածքային բաժանման սահմանման ժամանակ պետք է հաշվի առնել աշխարհագրական և ժողովրդագրական գործոնները (մասնավորապես երկրի տարածքի մեծությունը, բնակչության էթնիկական կառուցվածքը, բնակչության թվաքանակն ու խտությունը, բնակավայրերի թիվն ու չափերը, դրանց տեղաբաշխվածությունը տարածքում և այլն):

Յուրաքանչյուր վարչատարածքային միավոր պետք է ներառի տարածք, որի վրա տեղաբաշխված են իր գործունեության և գործառույթների իրականացումն ապահովող համակարգեր: Նման համակարգի բաղադրատարրեր կարող են լինել ժողովրդական ներուժը, այսինքն՝ բնակչության այն թվաքանակը, որը բավարար է դպրոցների, հիվանդանոցների, մանկապարտեզների ու այլ հաստատությունների գործունեության համար, ենթակառուցվածքային հիմնարկների և հաստատությունների առկայությունը:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վարչատարածքային միավորներն էին վարչական շրջանները, քաղաքները, քաղաքային շրջանները, քաղաքատիպ ավանները, ավանները, գյուղերը:

Բնակավայրերը կարգավիճակ էին ստանում ըստ զարգացման հեռանկարների, պետական նշանակության և այլն: Դրանից կախված՝ կենտրոնացված կառավարման և ֆինանսավորման պայմաններում կիրառվում էր ֆինանսավորման և ռեսուրսների բաշխման տարբերակված մոտեցում՝ կապված բնակավայրերի կարգավիճակի հետ: Շրջաններում գործում էին ժողովրդական պատգամավորների խորհուրդներ և դրանց գործադիր կոմիտեներ: Ընդ որում, վերջիններս հանդիսանում էին կառավարման տեղական մարմիններ և նտնում էին պետական կառավարման համակարգի մեջ: Յուրաքանչյուր խորհուրդ իր տարածքում դիտվում էր որպես պետական իշխանության տեղական մարմին [5, էջ 25]:

1995-1996 թվականներին տնտեսական հարաբերությունների ազատականացմանն ուղղված արմատական քայլերի անհրաժեշտությամբ պայմանավորվեց պետական կառավարման համակարգի ժողովրդավարացմանն ուղղված քայլերի իրականացումը: Կառավարության առաջարկությամբ ՀՀ Ազգային ժողովը պետական կառավարման համակարգի ժողովրդավարացմանն ուղղված օրենքների շարքում 1995 թվականի նոյեմբերի 7-ին առաջնահերթ ընդունեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը:

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներ են սահմանվել մարզերը և համայնքները: Հայաստանի Հանրապետության վարչատարածքային այսպիսի կառուցվածքը երկակի դեր է խաղում: Մի կողմից՝ դրան համապատասխան կազմավորվում են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, որոնք տեղերում իրականացնում են գործադիր իշխանության գործառնություններ, իսկ մյուս կողմից՝ վարչատարածքային կառուցվածքը նախատեսում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների առկայություն:

Կարելի է նշել, որ ՀՀ մարզերը ձևավորվել են նախկին խորհրդային շրջանների վերամիավորման ճանապարհով: Սահմանվել է «մարզի տարածք» հասկացությունը, որը ներառում է ընդգրկված համայնքների տարածքները և պետական սեփականություն հանդիսացող հողային և ջրային տարածքները:

ՀՀ-ում գործող բնակավայրերի հիմքի վրա ձևավորվել է վարչատարածքային բաժանման երկրորդ մակարդակը՝ համայնքայինը: Բնակավայրերը մշտական բնակչություն ունեցող, կառուցապատված, տարածքային ամբողջություն կազմող և այլ բնակավայրերից տարածքային, տնտեսական կամ պատմական առումով տարանջատված տարածքային միավորներն են [6, էջ 39]: Բոլոր բնակավայրերը՝ առանձին կամ այլ բնակավայրի/բնակավայրերի հետ միասին, ընդգրկված են համայնքների մեջ, իսկ վերջիններս կարող են կազմված լինել մեկ կամ մի քանի բնակավայրերից: Տնտեսական, աշխարհագրական, պատմական և այլ գործոններ, հատկապես, ենթակառուցվածքների հնարավոր-

րինս հավասարաչափ տեղաբաշխումը ՀՀ վարչատարածքային բաժանման մեջ որոշակիորեն հաշվի են առնված:

Հանդերձ տնտեսական առավելություններով և բնական հարստություններով՝ յուրաքանչյուր պետություն պետք է ապահովի իր վարչատարածքային միավորների անքակտելի միասնությունը ինչպես քաղաքական, տնտեսական, սոցիալական կայուն զարգացման համար, այնպես էլ պետական կառավարման (տարածքային կառավարման) և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների արդյունավետ կազմակերպման առումով, որը յուրաքանչյուր միավորի կտրվածքով կարտահայտվի նյութական ու սոցիալական բարիքների մատչելիությամբ և դրանց ապահովման հնարավորությամբ: Այս իմաստով Հայաստանում տասնամյակներ շարունակ առկա են եղել տարածքային զարգացման անհավասարաչափ դրսևորումներ, բեռնացումներ: 1988 թվականի երկրաշարժը, դարաբաղյան հակամարտությունը և նախկին տնտեսական կապերի խզումը ոչ միայն բերեցին երկրում տնտեսական զարգացման մակարդակի և բնակչության կենսամակարդակի կտրուկ անկման, այլև պատճառ դարձան վերոնշյալ երևույթների էլ ավելի խորացմանը:

Ըստ տնտեսության առանձին ոլորտների՝ մասամբ կարելի է գնահատել մարզերի տնտեսական զարգացման մակարդակները:

Աղյուսակ 1

Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2001-2007թթ.

Ընթացիկ գներով մլն. դրամ

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| Երևան | 152490 | 159719 | 209634 | 239126 | 307689 | 287530.0 | 347399.6 |
| Արագածոտն | 3160 | 5002 | 7779 | 6324 | 7973 | 7278.0 | 9574.9 |
| Արարատ | 15723 | 31305 | 38029 | 41784 | 46278 | 54015.8 | 52450.6 |
| Արմավիր | 21902 | 24231 | 21000 | 26792 | 28274 | 28914.1 | 29826.6 |
| Գեղարքունիք | 5268 | 8248 | 13255 | 19370 | 14835 | 11810.0 | 9503.4 |
| Լոռի | 15322 | 16580 | 18756 | 32246 | 36160 | 45997.5 | 42646.5 |
| Կոտայք | 55101 | 49294 | 57369 | 58294 | 67161 | 65390.6 | 75585.5 |
| Շիրակ | 9549 | 10825 | 11638 | 13000 | 13438 | 13385.0 | 16172.5 |
| Սյունիք | 25121 | 29402 | 41517 | 89246 | 120357 | 121270.0 | 123270.0 |
| Վայոց ձոր | 2882 | 3196 | 3497 | 4715 | 5059 | 5066.0 | 5466.3 |
| Տավուշ | 2792 | 3262 | 3579 | 4367 | 4696 | 4205.5 | 4653.4 |
| Ընդ. ՀՀ | 309310.9 | 341065.4 | 426053.5 | 525363.7 | 651919.6 | 644862.5 | 716549.3 |

Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2001-2007 թվականներին արդյունաբերական արտադրանքի աճ է նկատվել Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում (տե՛ս Աղյուսակ 1): Երևանում այդ աճն ապահովվել է հիմնականում ի հաշիվ քիմիական արդյունաբերության, ռե-

տինե և պլաստմասե իրերի արտադրության, պատրաստի մետաղյա արտադրատեսակների արտադրության, ոչ մետաղական այլ հանքային արտադրատեսակների և հրատարակչական ու տպագրական գործունեության: Արմավիրում աճն ապահովվել է էլեկտրաէներգիայի արտադրության, ինչպես նաև ոչ մետաղական այլ հանքային արտադրատեսակների և պատրաստի մետաղյա արտադրատեսակների արտադրության հաշվին: Վայոց ձորի մարզում աճը տեղի է ունեցել հիմնականում ի հաշիվ սննդամթերքի՝ ներառյալ խմիչքների, և էլեկտրաէներգիայի արտադրության: Կոտայքի մարզում աճը տեղի է ունեցել ի հաշիվ մեքենաների և սարքավորումների արտադրության, հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի, պատրաստի մետաղյա արտադրատեսակների, ոչ մետաղական այլ հանքային արտադրատեսակների, էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, այդ թվում խմիչքների, ինչպես նաև ադամանդների արտադրության, իսկ Արարատի մարզում՝ հիմնականում ի հաշիվ ծխախոտային արտադրատեսակների, ոչ մետաղական այլ հանքային արտադրատեսակների արտադրության և քիմիական արդյունաբերության:

Աղյուսակ 2

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

2001-2007թթ.

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|------|------|------|------|------|------|------|
| Ք. Երևան | 49.3 | 46.8 | 49.2 | 44.7 | 47.2 | 44.6 | 48.5 |
| Արագածոտն | 1.0 | 1.5 | 1.8 | 1.2 | 1.2 | 1.1 | 1.3 |
| Արարատ | 5.1 | 9.2 | 8.9 | 7.8 | 7.1 | 8.4 | 7.3 |
| Արմավիր | 7.1 | 7.1 | 4.9 | 5.0 | 4.3 | 4.5 | 4.2 |
| Գեղարքունիք | 1.7 | 2.4 | 3.1 | 3.6 | 2.3 | 1.8 | 1.3 |
| Լոռի | 5.0 | 4.9 | 4.4 | 6.0 | 5.5 | 7.1 | 6.0 |
| Կոտայք | 17.8 | 14.4 | 13.5 | 10.9 | 10.3 | 10.1 | 10.5 |
| Շիրակ | 3.1 | 3.2 | 2.7 | 2.4 | 2.1 | 2.1 | 2.3 |
| Սյունիք | 8.1 | 8.6 | 9.8 | 16.7 | 18.5 | 18.8 | 17.2 |
| Վայոց ձոր | 0.9 | 0.9 | 0.8 | 0.9 | 0.8 | 0.8 | 0.8 |
| Տավուշ | 0.9 | 1.0 | 0.9 | 0.8 | 0.7 | 0.7 | 0.6 |
| Ընդամենը ՀՀ | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2001-2007 թվականներին թողարկված արդյունաբերական արտադրանքը մարզերում առավելագույնը եղել է 2006-ին՝ 55.4%, այսինքն՝ արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացված է մայրաքաղաք Երևանում, ինչը վկայում է արտադրական կարողությունների անհավասարաչափ տեղաբաշխման և արդյունաբերական ներուժի անարդյունավետ օգտագործման մասին: Դա ավելի ակնհայտ է դառնում արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների, արդյունաբերական արտադրանքի ֆիզի-

կական ծավալի դասիչներն ըստ արտադրության բաժինների, արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների դիտարկելիս, ինչպես նաև սպառողական ապրանքների արտադրության ծավալն ու արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների դիտարկելիս:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը վերլուծելիս (տե՛ս Աղյուսակ 3) նկատում ենք, որ գյուղատնտեսական արտադրության հնարավորությունները Երևանում սահմանափակ են, այդ իսկ պատճառով էլ 2002-2007 թվականներին նրան բաժին է հասնում գյուղատնտեսական արտադրանքի առավելագույնը 1.4%-ը (2003թ):

Աղյուսակ 3

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

2002-2007 թթ.

| | Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ընթացիկ գներով (մլրդ դրամ) | | | | | | Տեսակարար կշիռը (%) | | | | | |
|-------------|--|-------|-------|-------|-------|-------|---------------------|------|------|------|------|------|
| | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
| Ք. Երևան | 4.9 | 5.7 | 6.5 | 5.9 | 5.5 | 5.7 | 1.3 | 1.4 | 1.3 | 1.2 | 1.0 | 0.9 |
| Արագածոտն | 26.2 | 30.3 | 38.3 | 35.5 | 41.1 | 48.1 | 6.9 | 7.4 | 7.2 | 7.2 | 7.4 | 7.6 |
| Արարատ | 48.6 | 52.2 | 66.1 | 64.7 | 72.3 | 82.4 | 12.9 | 12.8 | 13.1 | 13.1 | 13.0 | 13.0 |
| Արմավիր | 60.4 | 60.5 | 72.6 | 74.9 | 83.5 | 96.4 | 15.9 | 14.7 | 14.8 | 15.2 | 15.0 | 15.2 |
| Գեղարքունիք | 53.6 | 59.1 | 71.6 | 69.5 | 80 | 90 | 14.2 | 14.4 | 14.2 | 14.1 | 14.4 | 14.2 |
| Լոռի | 39.6 | 43.9 | 55.4 | 51.8 | 58.4 | 64 | 10.5 | 10.7 | 11 | 10.5 | 10.5 | 10.1 |
| Կոտայք | 33.7 | 36.9 | 44.4 | 45.3 | 50 | 63.4 | 8.9 | 9 | 8.8 | 9.2 | 9.0 | 10.0 |
| Շիրակ | 37.8 | 40.2 | 48.4 | 49.3 | 56.7 | 63.4 | 10 | 9.8 | 9.6 | 10 | 10.2 | 10.0 |
| Սյունիք | 34.3 | 39.4 | 49.4 | 46.8 | 53.4 | 57.7 | 9.2 | 9.6 | 9.8 | 9.5 | 9.6 | 9.1 |
| Վայոց ձոր | 16.6 | 18.4 | 23.7 | 22.2 | 24.4 | 27.3 | 4.4 | 4.5 | 4.7 | 4.5 | 4.4 | 4.3 |
| Տավուշ | 21.9 | 23.5 | 27.7 | 27.1 | 30.6 | 35.5 | 5.8 | 5.7 | 5.5 | 5.5 | 5.5 | 5.6 |
| Ընդ. ՀՀ | 377.6 | 410.1 | 504.1 | 493.0 | 555.9 | 633.9 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտում առավելագույն ծավալ է ապահովում Արմավիրի մարզը, որը մասնագիտացված է հացահատիկի, բանջարեղենի, պտուղների, բանջարաբոստանային մշակաբույսերի, խաղողի արտադրության մեջ: Գեղարքունիքի մարզը, որը երկրորդ տեղում է, մասնագիտացված է հացահատիկի, կարտոֆիլի արտադրության, անասնաբուծության, կաթնամթերքի արտադրության մեջ: Երրորդ տեղում պտուղ-բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի և խաղողի արտադրության մեջ մասնագիտացված Արարատի մարզն է: Հայաստանում հացահատիկի շուրջ 66 %-ն արտադրվում է Շիրակի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի մարզերի տնտեսություններում, կարտոֆիլի ավելի քան 63%-ը՝ Գեղարքունիքի և Լոռու, բանջարեղենի

ավելի քան 65%-ը, բոստանային մշակաբույսերի 95%-ը և խաղողի 80%-ը՝ Արմավիրի և Արարատի, պտղի ավելի քան 70%-ը՝ Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերի տնտեսություններում:

Աղյուսակ 4

Շինարարության հիմնական ցուցանիշները՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

2001-2007 թթ.

| | Շինարարության համախառն արտադրանք (մլն դրամ) | | | | | | | Շինարարության համախառն արտադրանքի կառուցվածքը (%) | | | | | | |
|-------------|--|--------|--------|--------|--------|--------|--------|--|------|------|------|------|------|------|
| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
| Երևան | 62409 | 110888 | 163795 | 221536 | 354802 | 531115 | 585026 | 57 | 66 | 69 | 80 | 81 | 82 | 87 |
| Արագածոտն | 1956 | 6909 | 3270 | 3355 | 3648 | 11955 | 6508 | 2 | 4 | 1 | 1 | 1 | 2 | 1 |
| Արարատ | 1337 | 4048 | 1678 | 2615 | 3609 | 3995 | 7039 | 1 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Արմավիր | 1621 | 1731 | 2634 | 3999 | 8509 | 5031 | 6376 | 1 | 1 | 1 | 2 | 2 | 1 | 1 |
| Գեղարքունիք | 4047 | 4465 | 9472 | 2439 | 5133 | 11488 | 5368 | 4 | 3 | 4 | 1 | 1 | 2 | 1 |
| Լոռի | 6967 | 7558 | 9978 | 6534 | 7674 | 19327 | 7663 | 6 | 5 | 4 | 2 | 2 | 3 | 1 |
| Կոտայք | 8940 | 4107 | 15388 | 8803 | 16713 | 17720 | 8346 | 8 | 2 | 7 | 3 | 4 | 3 | 1 |
| Շիրակ | 6658 | 12844 | 17133 | 6368 | 4645 | 8279 | 9880 | 6 | 8 | 7 | 2 | 1 | 1 | 1 |
| Սյունիք | 5500 | 4346 | 6939 | 12437 | 21083 | 24010 | 23995 | 5 | 3 | 3 | 5 | 5 | 4 | 4 |
| Վայոց ձոր | 9238 | 2054 | 3272 | 3185 | 4513 | 4563 | 6076 | 8 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Տավուշ | 1721 | 7678 | 4285 | 5132 | 4796 | 6345 | 4752 | 2 | 5 | 2 | 2 | 1 | 1 | 1 |
| Ընդ. ՀՀ | 110394 | 166628 | 237844 | 276403 | 435125 | 643828 | 671029 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Աղյուսակ 4-ից երևում է, որ այս տարիների ընթացքում շինարարության ծավալներով բացահայտ առաջատարը Երևան քաղաքն է, որը 2001-2007-ի ընթացքում ապահովել է հանրապետության շինարարական արտադրանքի նվազագույնը 57%-ը 2001 թվականին, իսկ 2007-ին այդ ցուցանիշը հասել է մինչև 87%: Լրիվ հակառակ պատկերն է Արարատի և Արմավիրի մարզերում, որոնք ապահովել են շինարարական արտադրանքի առավելագույնը 2%-ը: Շինարարության համեմատաբար մեծ ծավալներ են ապահովում Սյունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու մարզերը:

Աղյուսակ 5

Չգրադված քաղաքացիների և գործազուրկների թվաքանակի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի

2002-2007 թթ.

| | Չգրադված քաղաքացիներ (հազ. մարդ) | | | | | | նրանցից՝ գործազուրկներ (մարդ) | | | | | |
|-------------|----------------------------------|-------|-------|-------|------|-------|-------------------------------|--------|--------|-------|-------|-------|
| | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
| Երևան | 37.5 | 33.8 | 29.0 | 25.8 | 18.9 | 17066 | 33700 | 30130 | 25231 | 22443 | 17832 | 16736 |
| Արագածոտն | 1.8 | 2.1 | 1.9 | 1.8 | 1.5 | 1337 | 1400 | 1429 | 1336 | 1257 | 1437 | 1310 |
| Արարատ | 8.56 | 5.4 | 4.8 | 4.0 | 2.8 | 2910 | 5002 | 4149 | 3594 | 3086 | 2674 | 2860 |
| Արմավիր | 9.2 | 8.1 | 7.8 | 5.1 | 3.8 | 3234 | 5900 | 5388 | 4996 | 3422 | 2902 | 3158 |
| Գեղարքունիք | 10.2 | 8.3 | 7.5 | 6.7 | 5.9 | 5760 | 6200 | 6007 | 4955 | 4471 | 5414 | 5454 |
| Լոռի | 25.0 | 26.8 | 27.2 | 24.2 | 18.8 | 11102 | 21400 | 21727 | 21576 | 19000 | 17670 | 10673 |
| Կոտայք | 11.0 | 7.7 | 7.1 | 6.4 | 4.9 | 5806 | 7000 | 5640 | 5046 | 4872 | 4723 | 5676 |
| Շիրակ | 30.0 | 30.8 | 30.7 | 19.9 | 18.6 | 16306 | 27400 | 25248 | 24353 | 16071 | 16321 | 15422 |
| Սյունիք | 17.2 | 16.7 | 15.5 | 11.5 | 10.0 | 8495 | 13800 | 13770 | 12693 | 9745 | 9829 | 8341 |
| Վայոց ձոր | 2.3 | 2.2 | 2.1 | 1.8 | 1.4 | 1104 | 1600 | 1600 | 1560 | 1298 | 1321 | 1050 |
| Տավուշ | 4.7 | 4.9 | 4.8 | 4.6 | 4.7 | 4460 | 3500 | 3498 | 3282 | 3326 | 4448 | 4370 |
| Ընդ. ՀՀ | 157.6 | 147.0 | 138.5 | 111.9 | 91.3 | 77580 | 126900 | 118646 | 108622 | 88991 | 84571 | 75050 |

Վիճակագրական տվյալները վկայում են, որ գործազուրկների թիվը տարեցտարի կրճատվում է. մասնավորապես, 2007 թվականին նրանց թիվը 2002 թվի համեմատ կրճատվել է շուրջ 40%-ով: ՀՀ առումով գործազուրկների թիվն ամենաբարձրը Երևան քաղաքում է, որտեղ սակայն զբաղվածության մակարդակը նույնպես ամենաբարձրն է, որը բնակչության կենտրոնացվածության պայմաններում բնական է: Իսկ մարզերի կտրվածքով այս տարիների ընթացքում առավելագույն թվով գործազուրկներ են գրանցվել Լոռու մարզում, Երկրորդ տեղում է Շիրակի մարզը, երրորդը՝ Սյունիքի (տե՛ս Աղյուսակ 5):

Գիտարկելով ծառայությունների ոլորտի մասին 2001-2007 թվականների ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները (տե՛ս Աղյուսակ 6)՝ տեսնում ենք, որ այստեղ նույնպես բացահայտ առաջատարը Երևանն է: Համեմատաբար բարձր ցուցանիշներ են ունեն Կոտայքի և Շիրակի մարզերը: Հանրապետության առումով նշված տարիների ընթացքում ծառայությունների ոլորտներից ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է տրանսպորտային ծառայությունների ոլորտում, իսկ ամենաանմխիթար վիճակում գտնվում է կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի ծառայությունների ոլորտը:

Աղյուսակ 6

Ծառայությունների ծավալը՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի
2001-2007 թթ. մլն. դրամ

| | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| Երևան | 125791.2 | 143166.9 | 212964.4 | 270923.0 | 313722.3 | 438526.1 | 542112.2 |
| Արագածոտն | 1553.9 | 1875.1 | 2006.0 | 1740.7 | 2155.2 | 3298.0 | 2902.9 |
| Արարատ | 2939.4 | 4020.2 | 4347.0 | 4978.4 | 5160.3 | 5429.2 | 5678.1 |
| Արմավիր | 2637.4 | 3217.2 | 3527.8 | 4743.0 | 5359.3 | 6580.4 | 5293.1 |
| Գեղարքունիք | 2157.2 | 2705.0 | 5027.9 | 5191.9 | 4919.8 | 5406.3 | 4630.2 |
| Լոռի | 3608.6 | 4521.8 | 4959.8 | 5357.7 | 6579.3 | 9074.9 | 9295.1 |
| Կոտայք | 4362.8 | 5704.2 | 6062.5 | 6897.4 | 9005.8 | 10145.0 | 8949.7 |
| Շիրակ | 5234.5 | 7137.9 | 8296.3 | 9183.4 | 8923.6 | 10793.8 | 11109.3 |
| Սյունիք | 2042.1 | 2563.8 | 2752.2 | 2770.0 | 3210.4 | 4169.0 | 4661.3 |
| Վայոց ձոր | 674.1 | 909.7 | 923.1 | 939.3 | 1258.6 | 1831.4 | 1725.9 |
| Տավուշ | 1767.8 | 1925.20 | 2170.5 | 2621.2 | 2524.7 | 3214.6 | 3077.8 |
| ԸՆդ. ՀՀ | 152769. | 177747.0 | 253037.5 | 315346.0 | 362819.3 | 498468.7 | 599435.6 |

Վերը քննարկված տնտեսական և սոցիալական ցուցանիշները վկայում են, որ մարզերի միջև առկա են սոցիալ-տնտեսական խիստ տարբերություններ և բևեռվածություն մարզերի ու մայրաքաղաքի միջև:

Մարզի կազմի մեջ մտնող համայնքների ուսումնասիրության ժամանակ նույնպես բացահայտվում են նման տարբերություններ:

Ինչպես «Վարչատարածքային բաժանման մասին», այնպես էլ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով տրված չեն քաղաքային և գյուղական համայնքների սահմանումները, նշված չեն դրանց տարբերակման հիմքերը, տարբերություններն ու ընդհանրությունները, որի հետևանքով տարբեր կարգավիճակ ունեցող համայնքների միջև տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների, փոխհարաբերությունների և կառավարման կառուցվածքների առումով նույնպես տարբերակում չի իրականացվում: Մինչ համայնքին քաղաքային կամ գյուղական կարգավիճակ տալը պետք է հաշվի առնել այնպիսի կարևորագույն գործոններ, ինչպիսիք են բնակչության թվաքանակը, բնակավայրի տնտեսական մասնագիտացվածությունը (արդյունաբերական, գյուղատնտեսական):

ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N 713 և նոյեմբերի 27-ի «ՀՀ բնակավայրերն ըստ բարձունքային միջերի դասակարգելու մասին» N 756 որոշումներով որոշ համայնքներ ստացել են լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների հատուկ կարգավիճակներ:

Լեռնային են համարվում ծովի մակարդակից 1700-2000 մետր բարձրությամբ գտնվող բնակավայրերը, բարձր լեռնայինը՝ 2000 և ավելի մետր գտնվողները: Լեռնային բնակավայրի կարգավիճակ են

ստացել 8 քաղաքային և 187 գյուղական համայնքներ, բարձր լեռնային բնակավայրի՝ 4 քաղաքային և 139 գյուղական համայնքներ:

Հայաստանի Հանրապետության պետական սահմանագծից Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը մինչև 5կմ լայնությամբ ծավալվող տարածքում տեղակայված համայնքները ստացել են սահմանամերձի կարգավիճակ (9 քաղաքային և 164 գյուղական համայնքներ): Ամենաշատ սահմանամերձ համայնքներ ունի Սյունիքի մարզը, իսկ Կոտայքի մարզը միակն է, որը նման կարգավիճակով համայնք չունի [6, էջ 45]:

ՀՀ սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի առաջնահերթ հիմնախնդիրների լուծման հայեցակարգային ծրագրով և ժամանակացույցով նախատեսվել են սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի հիմնախնդիրները, դրանց ֆինանսավորման աղբյուրներն ու ծավալները, ժամկետներն ու պատասխանատուները:

Այս ծրագրով 2001 թվականին ընդունվեց «Սահմանամերձ տարածաշրջանների մասին» ՀՀ օրենքը, որը նախատեսում է ՀՀ սահմանամերձ տարածաշրջանների պաշտպանունակության բարձրացում, համայնքների սոցիալ-տնտեսական կայուն հիմքերի ստեղծում, համալիր միջոցառումների իրականացման միջոցով դրանց ամրապնդում և կայուն զարգացման ապահովում: Նախարարությունները, գերատեսչությունները, մարզպետարաններն ու տեղական ինքնակառավարման մարմինները ծրագրում ընդգրկված միջոցառումների հիմնական կատարողներն են, որոնք իրականացվում են ՀՀ պետական բյուջեի, համապատասխան համայնքային բյուջեների, նախարարությունների և գերատեսչությունների ֆինանսական և այլ ռեսուրսների հաշվին: Միջազգային մի շարք ծրագրերով զգալի ներդրումներ են կատարվել սահմանամերձ համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար:

Այսպիսով՝ կարելի է ամփոփել ՀՀ վարչատարածքային բաժանման վերլուծությունը: Կարելի է նշել ՀՀ վարչատարածքային բաժանման ինչպես առավելությունները, այնպես էլ՝ թերությունները: Նախկին 37 շրջանի փոխարեն 10 մարզերի ստեղծման արդյունքում մի քանի անգամ կրճատվեց կառավարվող օբյեկտների թիվը, կրճատվեցին տարածքային կառավարման ապարատները (պետական հաստիքային տեղերը)՝ կրճատելով պետական բյուջեի ծախսերը: Ինչպես նաև հնարավորություն տրվեց ձևավորելու կառավարման առավել պարզ կազմակերպական կառուցվածքներ: Սակայն նշված առավելությունների կողքին առկա են մի շարք թերություններ:

Նոր վարչատարածքային բաժանման պայմաններում անհամապատասխանություններ ի հայտ եկան տնտեսական շրջանների և վարչատարածքային միավորների միջև (տարբերություններ ի հայտ եկան ինչպես առանձին մարզերի, այնպես էլ համայնքների միջև): Ինչպես նաև ստեղծվեցին մեծ թվով համայնքներ, որոնց մի մասը ֆինանսական, աշխատանքային, հողային և այլ ռեսուրսների անբավարար լի-

նելու պատճառով դժվարանում են կազմակերպել իրենց բնականոն գործունեությունն ու զարգացումը:

Կարելի է ենթադրել, որ ՀՀ վարչատարածքային բաժանումն սկզբունքային վերանայման կարիք ունի. նախ հարկավոր է պահպանել տարբեր ցուցանիշների գծով մարզերի և համայնքների ընդհանրությունները, և նոր կազմավորվող միավորների մեջ ներառել սոցիալ-տնտեսական ընդհանրություններ ունեցող տարածքներ և շրջաններ, յուրաքանչյուր վարչական միավորի համար սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային ուղղությունները՝ հաշվի առնելով տարածքային, դեմոգրաֆիկ և այլ ռեսուրսային հնարավորություններն ու առանձնահատկությունները, այնուհետև համայնքների թվաքանակի կրճատման և խոշորացման տեսանկյունից կարևոր է բնակչության թվաքանակի այն նվազագույն քանակի սահմանումը, որից սկսած միայն բնակավայրերին կտրվի համայնքի կարգավիճակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002 թ.:
2. Հայաստանի Հանրապետություն Սահմանադրություն (փոփոխություններով), 2005 թ.:
3. «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք:
4. «Հանրային կառավարում», ձեռնարկ, **Դ. Կ. Հարությունյանի և Ա. Ա. Չևորգյանի ընդ. խմբ.**, «Պետական ծառայություն» հր., Երևան, 2008 թ.:
5. **Է. Ֆ. Ղազարյան**, «ՀՀ վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները», Եր., «Ռար» հր., 2006 թ.:
6. «Տեղական ինքնակառավարման հիմունքներ», ուսումնական ձեռնարկ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆ. **Է. Գ. Օրդյանի** ընդհանուր խմբագրությամբ, Երևան, «Պետական ծառայություն» հր., 2000 թ.:
7. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում. Ջարգացման հրամայականները, **Դավիթ Թումանյանի** խմբ., Եր., «Նոյյան տապան» հր., 2005 թ.:
8. «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. քաղաքականության տարբերակներ և ուղիներ», Եր., «Երևանի համալս. հրատ.», 2004 թ.:
9. Վիճակագրական տվյալները www.armstat.am կայքից:


ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ՊԿ ակադեմիայի ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի հեռանկարային զարգացման հաստատված ծրագիրը (ինչը պահանջվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով), այնուհետև ծրագրային բյուջեի կազմման աշխատանքները, կազմակերպման տեսանկյունից, ենթադրում են հետևյալ հաջորդական փուլերի իրականացում (տես Գծապատկեր 1-ը):

Գծապատկեր 1

Ծրագրային բյուջեով առաջնորդվող համայնքներում բյուջեի նախագծի կազմման գործընթացը



Համայնքի ծրագրային բյուջեի նախագծի կազմման գործընթացը ենթադրում է օրենքով և որոշումներով սահմանված ժամկետներում նշված փուլերի պարտադիր կատարում:

Ի՞նչն է կարևորվում, առանձնանում այս փուլերում, որ բացակայում կամ թերի էր դրսևորվում այլ տիպի բյուջեների նախագծերի կազմման դեպքում: Քննարկենք դրանցից հիմնականները:

Նախ՝ բյուջետային քաղաքականությունն այս գործընթացում լիարժեք իմաստ է ստանում, քանի որ բյուջեի նախագծում դրա իրականացման և, հետևաբար, դրա հետագա կատարման արդյունքում ամեն մի նոր բյուջետային տարի որոշակի քայլ է դառնում դեպի այն ռազմավարական նպատակների կենսագործումը, որոնք նախանշված են հատկապես այդ համայնքի համար՝ որպես զարգացման հեռանկար: Համայնքի ղեկավարությունն ու հատկապես ներկայացուցչական մարմինն է որոշակի բյուջետային քաղաքականության ընդունման պատասխանատուն, և դրա համար քիչ ջանքեր չեն պահանջվելու: Նախ և առաջ մանրամասն պետք է ուսումնասիրվեն համայնքի նախորդ և ընթացիկ (կանխատեսման-կատարման տարբերակով) բյուջետային տարիների ֆինանսատնտեսական ցուցանիշները (եկամուտների ու ծախսերի փոփոխման միտումները, պարտքերի կառուցվածքը, կապիտալ միջոցների վիճակը, համայնքի կարիքներն ու ռեսուրսները, արտաքին տնտեսական պայմանները, միջիշխանական փոխազդեցությունները, օրենսդրական քաղաքականության դրսևորումները և այլն) և ապա, նոր պլանային տարվա որոշ կանխատեսումներից և առանձնահատկություններից ելնելով (սղաճ, եկամուտների հնարավոր տեղաշարժ և այլն), սահմանվի ընդունելի քաղաքականությունը: Քաղաքականության այլընտրանքների քննարկման արդյունքում պետք է ստեղծվի համայնքի աշխատակազմի ստորաբաժանումներին, կազմակերպություններին և ձեռնարկություններին հասցեագրված մի փաստաթուղթ (սովորաբար այն համայնքի ղեկավարի կողմից նախապատրաստված մամակի տեսք ունի), որտեղ արձանագրված լինեն բյուջետային տարվա ընդհանուր և որոշակի նպատակները, կապիտալ հատկացումների քաղաքականությունը, կրճատման ռազմավարությունը, եկամտային քաղաքականությունը, հիմնական և առաջնահերթ ծառայությունները, առաջնայնությունները:

Գործնականում դա նշանակում է, որ պլանային տարվա բյուջեի նախագծում կընդգրկվեն մրցակցող բյուջետային այն հայտերը, որոնք առավելագույնս մոտ են, համահունչ այս փաստաթղթում տեղ գտած մոտեցումներին:

Բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանման աշխատանքների լրջությունը պահանջում է հատուկ ուշադրություն դարձնել դրա կազմակերպմանը: Ծրագրային բյուջե մշակող ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի աշխատակազմի ծրագրերի և ֆինանսական բաժիններին զուգահեռ, ավագանու անդամներից և համայնքի նախաձեռնող և գիտակ մարդկանցից (հետագայում սրանցից ոմանք ցանկության դեպքում կարող են առաջադրվել որպես համայնքի ավագանու կամ ղեկավարի թեկնածու) արդյունավետ կլինի ձևավորել, այսպես կոչված՝ «Ծրագրերի առաջադրման և

զնահատման հանձնաժողով», որը յուրատեսակ կամուրջ կարող է լինել բնակչության, համայնքում գործող ձեռնարկությունների, գործարարների և տեղական մարմինների միջև՝ համայնքի ընդհանուր շահերի տեսանկյունից զնահատելու համար առաջարկված ծրագրերը և համայնքի կողմից իրականացվող քաղաքականությունը:

Երկրորդ՝ ծրագրային բյուջեի նախագծի գործընթացը, ի տարբերություն այլ տիպի բյուջեների գործընթացի, խորապես ժողովրդավարական է: Այս դեպքում համայնքի ղեկավարությունը բնակչության հետ հասկանալի ձևակերպված կոնկրետ նպատակների և խնդիրների լեզվով է երկխոսության մեջ մտնում, ինչը թույլ է տալիս մի կողմից՝ իր գործողությունների առումով լինել հասկանալի՝ բնակչության համար, մյուս կողմից՝ լսել, ընկալել նրանց կարծիքները, պատկերացումները, որոնք նույն լեզվով են արտահայտվում:

Ծրագրային բյուջեի նախագծի կազմման գործընթացում բնակչության մասնակցության հարցում շահագրգռվածությունը երկուստեք է: Տեղական պաշտոնյաներն անհրաժեշտաբար պետք է համայնքի բնակչությանը ներգրավեն բյուջեի մշակման գործընթացում, որպեսզի բյուջեի տեսքով ակնհայտ իրողություն դառնա համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը և ստանան համայնքի բնակչության աջակցությունը: Այս աշխատանքը համայնքի պաշտոնյաները կարող են կատարել երկխոսության մեջ մտնելով, ծանոթանալով դիմումներին, հարցաթերթիկների և հարցազրույցների միջոցով նրանց պահանջմունքները հետազոտելով, համայնքի բնակչությունից ակտիվ տեսչական խմբեր ստեղծելով, առանձին կարևոր հարցերի շուրջ բնակչության հավաքներ կազմակերպելով, բյուջեի և դրա կատարման մասին հրապարակային տեղեկատվություն ապահովելով և այլն: Նման աշխատանքների իրականացման հարցում կարևորվում է հատկապես ներկայացուցչական մարմինների դերը:

Միաժամանակ, համայնքի բնակիչները ևս ցանկանում են բյուջեի նախագծի մեջ տեսնել իրենց կոնկրետ խնդիրների լուծումը: Բնակչության մասնակցային գործընթացի ակտիվացման շնորհիվ կարելի է հասնել նրան, որ բյուջետային գործընթացի հենց սկզբից բնակիչները ներկայացնեն առաջարկություններ, հարցեր, որոնք հետո հրապարակային և բյուջեի նախագծի բաց քննարկումներում կարողանան պաշտպանել: Այս երկու մոտեցումներն էլ հաշվի են առնվում ծրագրային բյուջեի նախագծի վերը նշված գործընթացի գծապատկերում, և ՀՀ օրենսդրական դաշտը չի բացառում դրանց իրականացման հնարավորությունը:

Այս ամենով հանդերձ՝ համայնքի հիմնախնդիրների շուրջ բնակչության կարծիքը հաշվի առնելու հարցում կան լուրջ բացեր, որոնք լրացման կարիք ունեն: Խնդիրն այն է, որ ընդհանուր առմամբ, համայնքի բնակչության կարծիքի հետ արմատական կարգով հաշվի են նստում միայն տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընտրության դեպքում, իսկ այ-

նուհետև, համայնքի համեմատաբար կարևոր խնդիրների առնչությամբ, հրապարակայնության և թափանցիկության ցածր մակարդակի պայմաններում, կարծիքի արտահայտման հնարավորություն բնակչությանը գրեթե չի տրվում:

Երրորդ` ծրագրային բյուջեի նախագծի կազմման գործընթացում էապես փոխվում է համայնքի աշխատակազմի բաժինների և հատկապես ֆինանսական ու ծրագրերի բաժինների դերը: Համայնքի ներկայացուցչական մարմինները, պլանային բյուջեի հաստատողի դերից բացի, այստեղ հանդես են գալու բյուջեի նախագծի հիմքում դրված հեռանկարային զարգացման ծրագրին համապատասխան պլանային բյուջետային տարվա բյուջետային քաղաքականությունը սահմանողի (համայնքի ղեկավարի հետ) դերում: Դա բյուջեի բովանդակությունը կանխորոշող մի աշխատանք է, որ ավագանու անդամներից պահանջելու է ունենալ գիտելիքների և հմտությունների որոշակի մակարդակ ու փորձ:

Էապես փոխվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական և ծրագրերի հարցով զբաղվող ստորաբաժանումների (բաժին, վարչություն) դերը: Ֆինանսական բաժինը, բյուջեի հաշվառման, հաշվապահական ապահովման աշխատանքներն իրականացնելու հետ մեկտեղ, դառնում է նաև այն ակտիվ օղակը, որի միջոցով ձևավորվում և բյուջեի նախագծում իրացվում է բյուջետային քաղաքականությունը` սկսած նախորդ տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների գնահատումից, բյուջեի նախագծի կազմման մեթոդական ցուցումների մշակմանը մասնակցելուց, եկամուտների կանխատեսումից և ծախսերի հիմնական ուղղությունները որոշելուց մինչև համայնքի ղեկավարի հետ բյուջեի նախագծի նախնական և վերջնական տարբերակների մշակումն ու կատարումը: Իր հերթին, ծրագրերի բաժինը դառնում է համայնքն ամբողջության մեջ բոլոր կողմերով ուսումնասիրող, համայնքի ռազմավարությունը մշակող, բյուջեով լուծվող հիմնախնդիրներն առանձնացնող, ծրագրային զարգացման ընթացքը ձևավորող, բյուջետային քաղաքականությունը մշակող և ծրագրերի կատարման ընթացքը ուսումնասիրող մի օղակ, առանց որի անհնարին է իրականացնել ծրագրային բյուջետավորումը:

Վերափոխվում է նաև համայնքի ղեկավարի աշխատակազմի մյուս բաժինների գործելակերպը: Խնդիրն այստեղ, իրենց ոլորտի առումով, բյուջեի նախագծի մեջ ընդգրկելու համար ծրագրային բնույթ ունեցող այնպիսի հայտերի ներկայացումն է, որոնք համապատասխանեն սահմանված բյուջետային քաղաքականությանը և մրցակցող հայտերի մեջ ունենան առաջնություն: Այս հանգամանքը յուրատեսակ մրցակցություն է մտցնում համայնքային ստորաբաժանումների աշխատանքի մեջ, որից շահում է և՛ բյուջեն, և՛ համայնքի բնակչությունը:

Վերն ասվածից մեր եզրակացությունն այն է, որ համայնքները, որոնք որդեգրել կամ որդեգրում են ծրագրային բյուջեով աշխատանքի ընթացքը, անհրաժեշտաբար պետք է համապատասխան փաստաթղթերում կանոնակարգեն, վերանայեն աշխատակազմի ստորաբաժա-

նումների և համայնքային կազմակերպությունների ու ձեռնարկությունների գործառույթները, իրավունքները և պարտականությունները:

Չորրորդ` ծրագրային բյուջեի կազմման գործընթացի կարևոր և առանձնահատուկ կողմերից է բյուջետային ֆինանսավորման հայտերի ձևակերպումն ու մրցակցող հայտերից բյուջեի նախագծի կազմումը: Նախ պետք է նշել, որ ծրագրային բյուջեի դեպքում խիստ ընդլայնվում է ծախսային հայտեր ներկայացնողների շրջանակը: Այդպիսիք կարող են լինել ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների առանձին ստորաբաժանումները և համայնքային ձեռնարկություններն ու կազմակերպությունները, այլև անհատ քաղաքացիները, գործարար շրջանակները, համայնքի տարածքում գործող ձեռնարկություններն ու կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները:

Ծրագրային բյուջեի իրագործումը պահանջում է նաև, որ ներկայացվող ծախսային հայտերը, լինելով տեղական իշխանության գործառույթների շրջանակներում, համապատասխանեն դրա կողմից վարվող քաղաքականությանը, բխեն առաջադրված նպատակներից և հանդիսանան որոշակի նպատակի իրականացման փաստաթուղթ՝ պարունակելով դրա լուծման խնդիրները: Ծախսերի հայտերը կազմելիս պետք է նկատի ունենալ, որ դրանց մասին, ցանկության դեպքում, կարող է իմանալ համայնքի յուրաքանչյուր անդամ, և որ դրանք վերահսկվելու են հասարակության կողմից: Իր հերթին, յուրաքանչյուր հայտ ներկայացնող պետք է իմանա, որ իր ներկայացրածը սահմանափակ բյուջետային միջոցների համար մրցակցող բազմաթիվ հայտերից մեկն է, ու դրանցից ընտրվելու են միայն առավել հիմնավորված և առաջնահերթ լուծում պահանջող հայտերը:

Վերջին հաշվով, այս կամ այն հայտը բյուջեի նախագծի մեջ մտցնելու որոշումը կայացնում է համայնքի ղեկավարը, սակայն աշխատանքի ընդհանրական արդյունքն արդեն կանխորոշված է այն հունով, որ սահմանվել էր բյուջետային գործընթացի սկզբում բյուջետային քաղաքականության դրույթներով և աշխատանքների, գործունեության տեսակների առաջնայնությունների գնահատմամբ:

Բյուջետային հայտերն ուսումնասիրելիս համայնքի ղեկավարը պարզում է.

- հայտի համապատասխանությունը իր կողմից սահմանված առաջնահերթությանը,
- հայտի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը, դրանց կրճատման հնարավորությունները, և արդյո՞ք ներկայացված տարբերակը տվյալ ծառայության մատուցման առավել արդյունավետ տարբերակն է, թե՛ ոչ,
- այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ մասնավոր կառույցների կողմից նման ծառայություններն առավել արդյունավետ կատարելու հնարավորությունները,
- հայտի մերժման դեպքում առաջացող բացասական հետևանքները:

Համայնքի ղեկավարը և ֆինբաժնի պետը բյուջետային հայտերը գնահատելու, որոշում կայացնելու համար անհրաժեշտաբար պետք է անհատական և կոլեկտիվ քննարկումներ կազմակերպեն հայտատուների հետ: Ընդունված չափանիշները իրական հիմք են տալիս բյուջետային հայտերը ներկայացնողներին՝ պաշտպանելու իրենց առաջարկները բյուջեի ծրագրի նախագծի քննարկման բոլոր փուլերում: Այլընտրանքային ծրագրերի և համապատասխան հայտերի առկայությունը համայնքի ավագանուն ևս լայն հնարավորություն է տալու բյուջեի նախագծի քննարկումը կառուցողական հունով տանելու և անհրաժեշտ ճշգրտումներ անելու համար՝ իր կողմից սահմանված քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով:

Հայտերի քննարկման, ամփոփման արդյունքում ֆինանսական բաժնում պատրաստվում է բյուջեի նախագծի նախնական տարբերակը և ներկայացվում համայնքի ղեկավարին՝ դրա բաց քննարկումը կազմակերպելու համար: Ներկայացված փաստաթղթերի մեջ պետք է լինեն գալիք տարվա ընթացիկ և կապիտալ ծախսերի նախահաշիվները և եկամուտների նախահաշիվները՝ ըստ աղբյուրների:

Իսկ Գծապատկեր 2-ն ակներև պատկերացում է տալիս, թե ծրագրային բյուջեի կատարման գործընթացում ինչ դեր է հատկացվելու համայնքի բյուջեն մշակողներին:

Համայնքի ծրագրային բյուջեի կազմման գործընթացը ներկայացուցչական մարմնում քննարկումների ավարտական փուլ է մտնում համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի ձևով: Վերջինս՝ որպես փաստաթուղթ, պետք է ներառի բոլոր այն անհրաժեշտ և հանգուցային նյութերը, տվյալները, որից ելնելով՝ կարելի է իրականացնել դրա քննարկումն ու կայացնել համապատասխան որոշում:

Ներկայացվող բյուջեի նախագիծը՝ որպես քաղաքականություն սահմանող փաստաթուղթ, պետք է արտացոլի բյուջետային առաջնահերթություններն ու նպատակները, պետական բյուջեի հետ համաձայնեցված փոխհարաբերությունները, բյուջեի կապն անցյալի և ապագայի հետ, որպես ֆինանսական գործունեության ամփոփագիր՝ պետք է պարունակի տվյալներ եկամուտների և ծախսերի գնահատման ու կանխատեսման, ըստ գործառնական և տնտեսական դասակարգման ծախսերի ուղղությունների, ընթացիկ և կապիտալ բյուջետավորման, նպատակային ծրագրերի, պարտքերի կառուցվածքի, պահուստային ֆոնդի ձևավորման, օրենքով սահմանված՝ պետական բյուջեից տրվող հատկացումների մասին, որպես կազմակերպության ու համայնքի նկարագիր և ընթացիկ գործունեության ուղեցույց՝ պետք է ներառի անհրաժեշտ նյութեր կազմակերպական կառուցվածքի, ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների և միտումների, համայնքի պատմական անցյալի, քաղաքական արդի կացության, բնակչության ժողովրդագրական, սոցիալական, զբաղվածության վիճակի, ենթակառուցների, բնակարանային ֆոնդի, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի, համայնքային ձեռնարկությունների մասին և այլն:

Գծապատկեր 2

Ծրագրային բյուջեի կազմման գործընթացը՝ ըստ համայնքային դերակատարների հիմնական գործողությունների

| | | | | |
|----|---|--|---|----|
| ↑↑ | <ul style="list-style-type: none"> - վերահսկում են բյուջեի կատարումը - մասնակցում են բյուջեի նախագծի քննարկմանը | քաղաքացիներ | <ul style="list-style-type: none"> - ներկայացնում են ծրագրային պատկերացումներ, բյուջետային հայտեր | ↓↓ |
| ↑↑ | <ul style="list-style-type: none"> - քննարկում է բյուջեի նախագիծը և համապատասխան որոշում կայացնում (հաստատում, մերժում) | համայնքի ավագանի | <ul style="list-style-type: none"> - հավանություն է տալիս համայնքի զարգացման եռամյա (տարեկան) ծրագրին - սահմանում է բյուջետային քաղաքականությունը | ↓↓ |
| ↑↑ | <ul style="list-style-type: none"> - կազմակերպում է բյուջեի նախագծի քննարկումն ավագանու նիստում և պաշտպանում այն - գլխավորում է բյուջեի նախագծի պատրաստման աշխատանքները - որոշում է ընդունում ներկայացված հայտերի վերաբերյալ | համայնքի ղեկավար | <ul style="list-style-type: none"> - կազմակերպում է բյուջետային գործընթացը - սահմանում է առաջնահերթությունները | ↓↓ |
| ↑↑ | <ul style="list-style-type: none"> - կազմակերպում է բյուջեի նախագծի նախնական տարբերակի հրապարակային քննարկումը - օգնում է համայնքի ղեկավարին՝ կազմելու բյուջեի նախագծի նախնական տարբերակը - վերլուծում է ներկայացված հայտերը | ֆինանսական բաժին (վարչություն), ծրագրերի բաժնի համագործակցությամբ | <ul style="list-style-type: none"> - կատարում է պլանային տարվա եկամուտների կանխատեսումը և որոշում է ծախսերի ուղղությունները - մշակում է մեթոդական ցուցումներ, բյուջետային ձևեր և հրահանգներ | ↓↓ |
| ↑↑ | <ul style="list-style-type: none"> - պաշտպանում են ներկայացրած հայտերը - ներկայացնում են բյուջետային հայտեր | համայնքի ղեկավարի աշխատակազմի բաժիններ, համայնքային հիմնարկներ և կազմակերպություններ | <ul style="list-style-type: none"> - մշակում են բյուջետային հայտեր | ↓↓ |

Բյուջեն տեսանելի և մատչելի դարձնելու համար կարելի է լրացնել զանազան նյութերով՝ աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ, լուսանկարներ, տերմինաբանական բառարան և այլն:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը բավարար մանրամասնությամբ անդրադարձել է համայնքի բյուջեի մասին ավագա-

նու որոշման նախագծի բովանդակությանը, սակայն իրողությունն այն է, որ ՀՀ համայնքների գերակշիռ մասն ավագանու քննարկմանն է ներկայացնում բյուջեի որոշման նախագիծը՝ կազմված միայն մի քանի աղյուսակային նյութերից, որոնք բովանդակում են չորս տարվա կտրվածքով համայնքի վարչական և ֆոնդային բյուջեները, ծախսերի ուղղությունները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, լավագույն դեպքում՝ նաև համայնքի ղեկավարի խիստ համառոտ ուղերձը և բյուջետային հիմնարկների ֆինանսական ցուցանիշները:

Ինչ վերաբերում է նպատակային ծրագրերին, կամ ինչպես պահանջում է վերը նշված օրենքը՝ նպատակային ծրագրերի համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորմանը, ապա այդպիսիք, որպես կանոն, բացակայում են:

Համայնքի բյուջեի նախագծի մասին ավագանու որոշման նախագծին ներկայացվող պահանջների պահանջատերը համայնքի ավագանին է, ինստիտուտ, որը ՀՀ համայնքներում դեռևս չի կայացել և ուսուցման ծրագրերը, որ նախատեսվում են համայնքների ղեկավար աշխատողների որակական մակարդակը բարձրացնելու համար, ըստ երևույթին պետք է տարածել նաև համայնքների ավագանու անդամների վրա:

Համայնքի ծրագրային բյուջեի նախագծի կազմման գործընթացը ենթադրում է օրենքով և որոշումներով սահմանված ժամկետներում ներկայացված փուլերի պարտադիր կատարում: Բազմակողմ այս գործընթացը հաջող և ժամանակին ավարտելու խնդիրը բավականին բարդ է և պահանջում է կոորդինացնել դրա բազմաթիվ մասնակիցների (գծապատկերում նշված բյուջետային գործընթացի մասնակիցների, ինչպես արտահամայնքային մասնակիցների՝ ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների, պետական եկամուտների կոմիտեի, մարզպետարանների, զանազան հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և այլն), ասել է թե՛ դերակատարների աշխատանքը: Նման աշխատանքի իրագործումը համայնքներում պահանջում է գործընթացի հենց սկզբում կազմել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հետ համաձայնեցված բյուջետային ժամանակացույց, որտեղ պարտադիր պետք է արտացոլվեն բյուջեի մշակման և ընդունման բոլոր փուլերի աշխատանքները (օրինակ՝ բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ուղղությամբ մեթոդական ցուցումների մշակման և դրանք համայնքների համապատասխան ծառայություններին և բյուջետային հիմնարկներին տրամադրման, եկամուտների նախահաշիվների կազմման, բյուջետային հայտերի ստացման, քննարկման, դրանց վերամշակման և ամփոփման, բյուջեի նախագիծը համայնքի ավագանուն ներկայացման և այլն)՝ ըստ կատարման հաջորդականության, կատարման ժամկետի, պատասխանատուների: Ընդ որում, ժամանակացույցում նշված իրադարձությունների կատար-

ման ժամկետները պետք է համապատասխանեն օրենսդրորեն սահմանված հանգուցային օրերին:

Ծրագրային բյուջեի նախագծի մշակման՝ մեր կողմից ներկայացված մեթոդական կազմակերպման մոտեցումները, չհավակնելով լինել ամբողջական (դրանք, գործնական կիրառման տեսանկյունից, կարիք ունեն բազում այլ լրացումների, օրինակ՝ ինչպիսին պետք է լինեն մեթոդական ցուցումները, ինչ ձևերով են մշակվելու փաստաթղթերը, հայտերը, նախահաշիվները և այլն), լիովին համապատասխանում են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և աշխատանքների կատարման սահմանված ժամանակացույցին: Օրենքում կան դրույթներ, օրինակ՝ համայնքի բյուջեի նախագծի կառուցվածքի վերաբերյալ (հոդված 31, կետ 7), որոնք լիովին բավարարում են ծրագրային բյուջեի նախագծին ներկայացվող պահանջները: Այս ամենը վկայում է, որ ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների համար կան բավարար օրենսդրական հիմքեր՝ ծրագրային բյուջեի կազմման, հետևաբար և կատարման համար: Իսկ այն, որ նման բյուջեների մշակմամբ իրականում սահմանափակ թվով համայնքներ են քիչ թե շատ լրջությամբ զբաղվում, խոսում է այն մասին, որ այստեղ կան այդ գործընթացին խոչընդոտող պատճառներ: Դրանցից կարևորներն են կազմակերպական, մեթոդական ապահովման բացերը, սովորույթների բացակայությունը, հնուտ կադրերի սակավությունը, ավագանու դերի ոչ լրիվ բացահայտումը, բյուջեի սահմանափակ հնարավորությունները (նպատակային բյուջե կազմելը «թանկ հաճույք» է, և բոլոր համայնքները չէ, որ կարող են նման ճանապարհով ընթանալ), երկրի և համայնքային տնտեսության ճգնաժամային կացությունը, պետություն-համայնք բյուջետային փոխհարաբերությունների ոչ հստակ նկարագիրը: Սրանք խնդիրներ են, որ ժամանակի ընթացքում պետք է հաղթահարվեն, եթե ուզում ենք առաջընթաց արձանագրել:

Ներկա փուլում հատկապես կարևորվում է տեղական ինքնակառավարման մարմինների համար կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, կառավարման ոլորտում մեր ձեռք բերած և արտասահմանյան փորձի փոխանակումը, համայնքի աշխատանքային ապարատն ամեն մի ընտրությունից հետո ցնցումներից՝ կադրերի զանգվածային փոփոխություններից հեռու պահելը, ավագանու դերի ուժեղացումը, բնակչության և հասարակական կազմակերպությունների մասնակցության գործընթացի խթանումը, տեղական ինքնակառավարման կազմակերպատիրավական այլ ձևերի օրենսդրական ձևակերպումը և դրանց մեջ ընտրության հնարավորության ընձեռումը համայնքներին, նպատակաուղղված մեթոդական օգնությունը և տեղեկատվական համակարգերի ներդրման գծով օժանդակությունն այն համայնքներին, որոնք ծրագրային բյուջեների մշակման ուղին են ընտրել:

Ծրագրային բյուջեի և այդ գործընթացի արդիականացման հաջորդ փուլը ՀՀ համայնքների համար լինելու է բազմամյա (երկամյա, եռամյա) պլանով բյուջեի ներդրումը, այսինքն՝ ֆինանսների գծով հե-

ռանկարային ծրագրի կազմումը: Տեղական ինքնակառավարման մարմինները նման փորձ ունեն կապիտալ ծախսերի պլանավորման գործում, և արտերկրի շատ համայնքների փորձը ևս ցույց է տալիս, որ ընթացիկ ծախսերի բազմամյա պլանի կազմումը պետք է որ մեծ դժվարություններ չառաջացնի: Բազմամյա բյուջեն ունի հետևյալ առավելությունները.

1. Ժամանակի տնտեսումը, որովհետև նույն ժամանակաշրջանում մեկ տարվա բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքը զուգակցվելու է երկամյա կամ եռամյա բյուջեի նախագծի մշակման հետ՝ թույլ տալով հետագայում հսկայական ժամանակ տնտեսել,
 2. բյուջեի մշակման աշխատատար գործընթացը մեկ անգամ կատարելով՝ երկու-երեք տարվա կտրվածքով համայնքի ղեկավարի աշխատակազմը, բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները հնարավորություն կունենան առավելագույնս կենտրոնանալու ընթացիկ աշխատանքների կատարման վրա,
 3. հնարավորություն է տալիս ծրագրելու առավելապես ծախսատար և տևական աշխատանքները բազմամյա ծրագրով,
 4. ներկայացուցչական մարմնին ավելի լայն հնարավորություն է տալիս գործադիր մարմնի աշխատանքները գնահատելու համար:
- Երկամյա (եռամյա) բյուջետավորման ներդրումն աննշան փոփոխություններ կպահանջի կատարել բյուջետային ժամանակացույցում և բյուջեի կառուցվածքում: Կմեծանա ֆինանսական բաժնի աշխատանքների ծավալը, քանի որ ընթացիկ ծախսերի հաշվարկման հետ կապված լրացուցիչ աշխատանքները (օրինակ՝ ապարատի պահպանման, նյութատեխնիկական սպասարկման և այլ ծախսեր) հիմնականում նորովի են կատարվելու: Համայնքապետարանի ստորաբաժանումները, համայնքի բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները հանձնարարություն են ստանալու երկրորդ (երրորդ) տարվա համար պատրաստել միայն չկանխատեսվող ծախսերի նախահաշիվներ, խորանալու այն ծախսերի հաշվարկման մեջ, որոնք առաջանալու են ծրագրային փոփոխությունների արդյունքում:

Համայնքը բազմամյա բյուջեում յուրաքանչյուր տարին ներկայացվելու է առանձին-առանձին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 2005 թ.:
2. ՀՀ օրենքը «ՀՀ բյուջետային համակարգի մասին», 1997 թ.:
3. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 2002 թ.:
4. *Հարությունյան Հ.*, «Համայնքի բյուջե. Ձևավորման և օգտագործման հիմնահարցեր», Երևան, 2003 թ.:
5. *Հարությունյան Հ.*, «Բյուջետային գործընթացի և ֆինանսական կայունության գնահատման հիմնահարցերը տեղական ինքնակառավարման համակարգում», Երևան, 2007 թ.:
6. *Любшин Н. П., Лещева В. Б., Дьякова Б. Г.*, Анализ финансово-экономической деятельности предприятия. Москва, 2001 г., ст. 58-61.
7. *Подпорина И.*, Современные проблемы бюджетного регулирования, Экономист, № 7, 1998 г.
8. *Берг О.*, О программе развития бюджетного федерализма в Российской Федерации на период до 2005 года, Вопросы экономики, № 5, 2002 г.
9. *Марченко Г. В., Мачульская О. В.*, Финансовые механизмы межрегионального выравнивания., Финансы и кредит., 2000 г.
10. *Лексин В., Швецов А.*, Бюджетный федерализм в период кризиса и реформ, Вопросы экономики, № 3, 1998 г.
11. *Игудин А. Г., Попанова Н. А.*, Некоторые проблемы межбюджетных отношений в Германии и России, Финансы, 1999 г.

ՎԱՉԵ ԳԱՐԻԵԼՅԱՆ

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ,
տնտեսագիտության թեկնածու*

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պետությունը մարդկային պատմության մշտնջենական ուղեկիցն է: Մարդկանց ներհատուկ է խմբերով, կամ որպես հասարակություն ապրելը: զուր չէ, որ դեռևս Արիստոտելը մարդուն անվանում էր հասարակական կենդանի: Հասարակությունը, իր զանազան անդամների և խմբերի փոխգործունեության և մրցակցության արդյունքում, առաջադրում է թե՛ շուկայի և թե՛ շուկան հնարավոր դարձնող ոչ շուկայական ինստիտուտների պահանջ: Հաճախ այդպիսի ինստիտուտները հիերարխիկ ձևով խմբային որոշումներ ընդունող և դրանք խմբի համար հարկադրաբար կիրառող կազմակերպություններ են՝ այսինքն՝ այն, ինչ մենք սովորաբար նույնացնում ենք «պետություն» հասկացության հետ:

Պետության անհրաժեշտությունը տնտեսագիտության տեսակետից

Մարդկային գործունեության մեջ արդյունավետության ձգտումը առաջ է բերում մասնագիտացում, ինչն էլ իր հերթին բերում է գործունեության արդյունքների փոխանակման և այդ փոխանակումը կարգավորող ինստիտուտների՝ շուկաների անհրաժեշտության: Նոբելյան մրցանակի դափնեկիր Դազլաս Նորթը բնութագրում է. *ինստիտուտները* որպես «հասարակությունում խաղի կանոններ» կամ «մարդկանց կողմից հնարված՝ իրենց իսկ փոխգործունեությունը ձևավորող սահմանափակումներ»: Բնականաբար, հասարակությունը սահմանափակումներ նտցնում է միայն այն ժամանակ, երբ դրանցով ձևավորված փոխգործունեությունը կլինի ավելի օգտավետ: Արդյունքում գոյատևում են միայն արդյունավետ ինստիտուտները: Քանի որ ինստիտուտները ոչ թե փոխարինում են մարկային որոշակի փոխհարաբերությանը, այլ կարգավորում կամ ձևավորում են այն, ապա դրանց արդյունավետությունը, իր հերթին, պետք է պայմանավորվի փոխհարաբերությունների խթանումով: Այլ կերպ՝ որքանով են դրանք նվազեցնում ինստիտուտներից օգտվողների, կամ դրանց մասնակիցների գործարքային ծախսերը (այսինքն՝ գործարքի զնի մեջ անմիջապես չնտնող, սակայն առևտրի մասնակիցների կողմից վճարվող ծախսերը):

սերը): Օրինակ՝ առավել կենսունակ և արդյունավետ (միասնական գին ձևավորող) կլինի այն առևտրային հրապարակը, որը մոտ է ավելի մեծ քանակությամբ բնավայրերի՝ դրանով իսկ կրճատելով առավել մեծ քանակությամբ գնորդների տրանսպորտային ծախսերը:

Միաժամանակ, դա ճշմարիտ է նաև փոխհարաբերության հակառակ կողմից՝ եթե կոնկրետ վայրից արստրահված, առավել լայն տարածաշրջան ընդգրկող շուկան արդյունավետ կերպով ձևավորում է որևէ ապրանքի միասնական գին, ապա դա ոչ միայն էապես կրճատում է տեղեկատվական ծախսերը, այլև ինքնաբերաբար նաև՝ տրանսպորտայինը, քանի որ գնորդներն ու վաճառողներն առևտուրը կատարում են առավել լայն տարածաշրջանի իրենց մերձակա մասից:

Հասարակությունը, սակայն, ավելի բարդ փոխհարաբերությունների ամբողջություն է, քան անհատների՝ տրանսպորտային ծախսերը կրճատող համաձայնեցված գործողությունների միասնությունը: Հաջող կենսագործունեության համար այն հաճախ պահանջում է մի շարք ինստիտուտների սերտ համագործակցություն: Շուկան, մասնավորապես, պահանջում է պայմանագրերի իրագործում, ինչն առաջին հերթին սեփականության իրավունքի գրանցում և պաշտպանություն է՝ այդ թվում, թե՛ գործարքի կնքումից առաջ, թե՛ հետո: Ընդ որում, թե՛ որևէ գործարքի պայմանագիրը, թե՛ դրա արդյունքում ծագող սեփականատիրական իրավունքները կարող են լինել թե՛ լռելյայն համաձայնությամբ հասկացվող, թե՛ բանավոր և հակիրճ, թե՛ գրավոր և մանրամասն:

Հասարակության զարգացման նախնական փուլերում տիրապետում են լռելյայն հասկացվող գործարքները, որոնք, հաճախ, իրագործվում են ամբողջովին չգիտակցված տիրապետող բարոյական և սոցիալական նորմերի միջոցով: Հասարակության զարգացմանը զուգընթաց այս պայմանագրերը դառնում են ավելի ու ավելի ֆորմալ, և դրանց իրագործումը սկսվում է իրականացվել ավելի տեսանելի և կանոնակարգված պաշտոնական ինստիտուտների կողմից: Ակնհայտ է, որ շուկաների գոյության համար որոշ ինստիտուտների և դրանց գործառույթների գոնե պարզագույն տարբերակն անհրաժեշտ է: Հաճախ, սա էլ հենց պետության էական դերակատարումն է պրիմիտիվ հասարակություններում, և *պետության նվազագույն գործառույթների* ամբողջությունը ցանկացած հասարակությունում:

Մինիմալ պետության անհնարիությունը ժամանակակից պայմաններում

Թեև աշխարհի և ոչ մի երկրում նվազագույն պետություն գոյություն չունի, որոշ հեղինակներ շարունակում են պնդել, որ պետությունը պետք է իրականացնի հենց այս՝ նվազագույն գործառույթները (բնականաբար, պաշտպանելով ոչ միայն շուկայական գործարքներով ամրագրվող անձի սեփականությունը, այլև՝ կյանքը) և ոչ ավելին: Սակայն եթե քաղաքականության տեսաբանները դա բխեցնում են մարդու բնական և անկասելի իրավունքներից, որոնք ոտնահարվում են ցանկացած վերաբաշխման ժամանակ (ինչպես, օրինակ, դա նկատում է

փիլիսոփա Ռոբերտ Նոզիկը), ապա նվազագույն պետության ջատագով տնտեսագետների հիմնական փաստարկը, սպառողներին ընտրելու հնարավորություն ընձեռելու հետ մեկտեղ, շուկայի առավել բարձր արդյունավետությունն է պետության հանդեպ:

Որպեսզի հասկանանք, թե ինչու նվազագույն պետություններ գոյություն չունեն, նախ քննենք, թե ինչ կառուցակարգով են իրականացվում նվազագույն պետության գործառույթները: Իրենց բարեկեցությունը բարձրացնելու նպատակով հասարակության անդամները (որպես սեփականատերեր և իրենց աշխատանքն առաջարկող անձինք) միմյանց հետ համաձայնությունների են գալիս և գործարքներ կնքում (լռելյայն կամ ֆորմալ պայմանագրերի միջոցով): Հաճախ անհրաժեշտ է այդպիսի համաձայնության գալ մեծ քանակությամբ մարդկանց հետ (օրինակ՝ մեծաքանակ պարտատոմսեր թողարկելիս), որոնք, դեռ ավելին, կարող են անգամ այդ պահին անհայտ լինել (եթե անգամ պարտատոմսերն ամբողջովին և անմիջապես տեղաբաշխվեն, դրանք դեռևս կարող են վերավաճառվել անձանց, որոնց գոյության մասին այդ պահին թողարկողը չի էլ կասկածում): Ըստ էության՝ գոյություն չունի սեփականության իրավունքների որևէ համակարգ, որը հնարավորություն կընձեռի նախօրոք համաձայնության գալ բոլոր հնարավոր գործընկերների հետ: Եթե անգամ բոլոր կողմերը հայտնի են, ապա բազմամիլիոն գործընկերների հետ տարերային շուկայական գործընթացով համաձայնության գալը (օրինակ՝ մեծ քաղաքում ոստիկանության վերաբերյալ) խիստ ծախսատար է (գոյություն ունեն տարբեր նախասիրություններով բազմահազար խմբեր): Այսպիսի դեպքերում (հատկապես, երբ խոսքը վերաբերում է խմբային սպառման ապրանքների վճարների մասին) գործառական տեսակետից ամենաքիչ ծախսատար, այն է՝ ինստիտուցիոնալ տեսակետից օպտիմալ տարբերակը ոչ թե շուկայական բազմակողմ և բազմափուլ սակարկություններն են (որոնք կարող են անգամ երկարատև բանակցություններից հետո արդյունքի չհասնել), այլ խմբի անունից կամ խմբի համար ներկայացուցչական կամ այլ կառուցակարգով որոշումների ընդունումն է: Որոշումից հետո, արդեն, դրանց իրագործումն է: Երկու փուլում էլ հնարավոր է որևէ կողմի անհամաձայնություն, սակայն պետությունն ստիպողաբար իրականացնում է դրանք: Այդ իսկ պատճառով էլ հաճախ պետությունը բնութագրվում է որպես հարկադրելու իրավունքով (մենաշնորհով) օժտված հասարակական ինստիտուտ: Այս պայմաններում հարկադրումը, պարտադրանքը տնտեսագիտորեն շահավետ է այն իմաստով, որ ապահովում է անհատների ու հասարակության համար ավելի բարձր բարեկեցություն՝ թեկուզ հենց սեփականության իրավունքների ամրագրմամբ և դրանից բխող գործարքների արդյունավետության պատճառով: Այսպիսով, շուկայի կենսագործունեության ապահովման համար ոչ շուկայական ինստիտուտները դառնում են անհրաժեշտություն, թեև դրանց պարտադրանքը նվազագույնի հասցնելու ձգտումը մշտապես հասարակության օրակարգում է:

Հասարակությունների զարգացման հետ, երբ դրանք դառնում են ավելի մեծ և տարասեռ, բացի սեփականության իրավունքների գրանցման, գործարքների իրագործման և անվտանգության պաշտպանությունից, իր քաղաքացիների բարեկեցության ապահովման նպատակով, պետությունը շատ հաճախ ստանձնում է այլ պարտականություններ՝ այս անգամ արդեն միջամտելով շուկային: Եթե նվազագույն պետության գործառույթները, այդուհանդերձ, շուկաներին գործունեության հնարավորություն են ընձեռում, ապա **ընդլայնված պետության գործառույթները** ձգտում են շտկել **շուկայի ծախողումները**, կամ **բացերը** (օրինակ՝ մենատիրությունը, տեղեկատվության բացակայությունը, և այլն): Այլ կերպ, երբ շուկաներն արդյունավետորեն չեն կարողանում ապրանքներ և ծառայություններ տեղաբաշխել, այդ բացերը շտկվում են պետության կողմից:

Հաճախ ընդլայնված պետության գործառույթները գնում են հեռուն՝ ձգտելով ոչ միայն շտկել շուկայի ծախողումները, այլև ավելի արագ հասնել մի շարք արդյունքների և արժեքների (օրինակ՝ տնտեսական հնարավորությունների, ունեցվածքի և եկամուտների վերաբաշխում, զբաղվածության աճ, ռեսուրսների վերատեղաբաշխում, որոշակի ճյուղերի խրախուսմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն), քան դա հնարավոր կլիներ շուկայի բարաշրջության զարգացման դեպքում: Վերաբաշխումը նորմատիվ տեսակետից առաջադրում է նոր խնդիրներ պետական կարգավորման համար: Եթե շուկայի ծախողումների շտկման համար կարելի է առաջնորդվել արդյունավետության հիմնարար արժեքից բխող տեխնիկական վերլուծությամբ (արդյոք շուկան ապահովում է ապրանքների և ծառայությունների լավագույն տեղաբաշխում), ապա վերաբաշխման ցանկալի մակարդակը (օրինակ՝ եկամուտների բևեռացման Ջինիի գործակցի լավագույն մակարդակը) քաղաքական գործընթացներով որոշվող արժեք է, որը հնարավոր չէ միարժեքորեն բխեցնել տնտեսագիտական արդյունավետության արժեքից: Նմանատիպ խնդիրներ է առաջացնում նաև բնակչությանը պարտադիր ապրանքներով և ծառայություններով ապահովելը (օրինակ՝ կրթություն, հիվանդություններից պատվաստում), քանի որ անհատների փոխարեն ընտրվող ապրանքների ցանկի որոշումը ևս դժվար է սահմանել տնտեսական արդյունավետության նպատակից ելնելով: Այս անգամ պետությունը կարող է ոչ միայն միջամտել շուկային՝ կարգավորման կամ ընդհանուր միջավայրի ստեղծման առումով, այլև գնալ մեկ քայլ առաջ, և ակտիվորեն մասնակցել շուկային: Եթե նման գործառույթները հաճախ քննարկվում են տնտեսագետների կողմից ոչ միայն տվյալ արժեքների (օրինակ, եկամուտների էական վերաբաշխում) ցանկալիության, այլ դրանց հասնելու արդյունավետության և այլընտրանքային ծախսերի տեսակետից, ապա շուկայի ծախողումների շտկումը կամ մակրոտնտեսական միջավայրի կարգավորումը տնտեսագետների մեծամասնության կողմից ընդունվում է որպես պետության լեգիտիմ գործառույթ:


ՇՈՒԿԱՅԻ ԶԱՆՈՂՈՒՄՆԵՐԸ

• Տնտեսագետները **շուկայի ծախողումներ** կամ **շուկայի բացեր** են անվանում այն իրավիճակները, երբ շուկաներն արդյունավետորեն չեն տեղաբաշխում ապրանքներն ու ծառայությունները: Ընդհանրապես, տնտեսագետները համարում են, որ շուկայի կամ մրցակցության «անտեսանելի ձեռքը» բազմաթիվ սեփական շահերը հետաանդող անձանց ջանքերն ուղղորդում է հանրային օգտավետությանը: Հաճախ այս գաղափարը ձևակերպում են օգտագործելով իտալացի ակադավոր տնտեսագետ և սոցիոլոգ Վիլֆրեդո Պարետոյի եզրաբանությունը, ըստ որի գնահատվում են, թե որքանով է բարձրանում բարեկեցությունն առաջարկվող տնտեսական քաղաքականության արդյունքում ձևավորվող փոխզիջումների շնորհիվ:

Պարետոյի փոխզիջումները քննարկելու համար ենթադրենք, որ ոչ թե անհատներն են ընտրում իրենց սպառողական բարիքները, այլ ինչ-որ մեկն իր «անտեսանելի ձեռքով» որոշել է բոլոր անհատներին տրամադրել սպառողական բարիքների նույն $\bar{x}^* = (x_1, x_2, \dots, x_n)$ վեկտորը: Ենթադրենք նաև, որ գոյություն ունի մեկ այլ \bar{x} վեկտոր, որի դեպքում բոլոր անհատների համար օգտակարության ֆունկցիան բավարարում է $u_i(\bar{x}) \geq u_i(\bar{x}^*)$ պայմանին: Ակնհայտ է, որ բոլոր անհատները \bar{x} կգերադասեն \bar{x}^* - ից, ուստի այն բոլոր \bar{x}^* վեկտորները, որոնք բավարարում են վերը նշված անհավասարությանը, ընդունելի չեն ոչ մեկի համար: Սակայն այն \bar{x}^* վեկտորները, որոնց համար գոյություն չունի անհավասարությանը բավարարող \bar{x} բոլոր $u_i(\bar{x})$ չափանիշների համար, չդիտարկել չի կարելի, որովհետև կանտեսվի առնվազն մեկի շահը: \bar{x} վեկտորի բոլոր այդպիսի արժեքների բազմությունը անվանվում է **Պարետոյի բազմություն**: Պարզության համար դիտարկենք երկու սպառողների համար որոշված օգտակարության ֆունկցիայի $u = (u_1, u_2)$ դեպքը, որի ժամանակ`

$$u_1(\mathcal{R}) \rightarrow \max, u_2(\mathcal{R}) \rightarrow \max$$


Պարզ է, որ x փոփոխականի ամեն մի թույլատրելի արժեքի համապատասխանում է (u_1, u_2) հարթության մեկ կետ (տե՛ս նկ. 1) և $u_1 = u_1(\mathcal{R}), u_2 = u_2(\mathcal{R})$ պարամետրական հավասարումները որոշում են ինչ-որ abcd կոր:



Ոկ. 1

Պարետոյի բազմությանը կատկանեն կորի ab և cd մասերը: bc կտորը ակնհայտորեն չի պատկանում Պարետոյի բազմությանը, որովհետև u_1 -ի աճին համընթաց մեծանում է նաև u_2 -ը: Որոշումների կայացման խնդիրներում **Պարետոյի լուծում** ասելով նկատի է առնվում այնպիսի \bar{x} վեկտորների ընտրությունը, որոնք պատկանում են Պարետոյի բազմություններին: Դժվար չէ տեսնել, որ Պարետոյի լուծումը չի առանձնացնում միակ լուծում, այլ սոսկ նեղացնում է այլընտրանքների բազմությունը, որը համեմատաբար դյուրինացնում է որոշում կայացնելը:

Նկար 2- ում պատկերված են օգտակարության U տիրույթի այն կետերը, որոնք Պարետոյի եզրագծին չեն կարող բավարարել, քանի որ կարելի է բավարարել նրանցից գոնե մեկի վիճակը (հիշենք, որ նրանցից ամեն մեկը ձգտում էր $u_2(x^2)$ օգտակարության ֆունկցիայի առավելագույն արժեքին), չվատացնելով մյուսների վիճակը:



Ոկ.2

Պետք է, իհարկե, նկատել, որ Պարետոյի օպտիմալության բոլոր կետերը չէ, որ ձեռնտու կարող են լինել այդ անհատների հասարակությանը: Հասարակությունը սովորաբար չի համակերպվում և «դուրս կնդի» բաշխման այնպիսի եղանակը, որի դեպքում իր բոլոր անդամ-

ներն աշխատում են մեկ մարդու համար՝ ապահովելով նրա օգտակարության ֆունկցիայի առավելագույն արժեքը:

Այսպիսին է Պարետոյի լուծումների կամ օպտիմալության մեկնաբանությունը, որի բազմազան կիրառություններն արդյունավետ են տնտեսագիտական և ընդհանրապես մարդկային հասարակության մեջ ընթացող նպատակամետ գործողություններն ու գործընթացները նկարագրելիս:

Պարետոյի սկզբունքը կամ հայտանիշը պնդում է, որ որևէ մեկին վնաս չպատճառող և որոշ մարդկանց օգուտ բերող (իրենց սեփական սուբյեկտիվ գնահատմամբ) ամեն մի քաղաքականություն ինքնին բարելավում է: Որպես **Պարետո -բարելավման** օրինակ կարելի է նշել կառավարության կողմից նորամուծությունների հովանավորումը կամ բնակչության առողջապահական միջոցառումները (օրինակ՝ պոլիոմելիտի դեմ պատվաստումը):

Պարետոյի հայտանիշի կիրառություններն որոշումների կայացման տնտեսագիտական հիմնախնդիրների վերլուծություններում բազմազան են: Երբ խոսքը վերաբերում է որոշակի ընդհանրացումներին, մասնավորապես տնտեսական քաղաքականությանը, ապա չի կարելի շատ ակնկալիք ունենալ օպտիմալության՝ Պարետոյի հայտանիշի կիրառություններից: Այն հատկապես կիրառելի չէ այնպիսի հանձնարարականների նկատմամբ, որոնք շահույթ են բերում ինչ-որ մարդկանց և վնաս՝ ուրիշներին: Այլ կերպ ասած՝ Պարետոյի հայտանիշն օգտակար է միայն այն դեպքում, երբ այն բացառում է առանձին անձանց օգտակարության համադրման կարևոր հիմնախնդիրը, այսինքն՝ դիտարկվում են միայն այն դեպքերը, երբ որևէ մեկին վնաս չի պատճառվում, այնպես որ այդ հիմնախնդիրը չի էլ առաջանում:

Բարելավում ըստ Պարետոյի անվանում են այն իրավիճակը, երբ անհատն ավելացնում է իր բարեկեցությունը՝ առանց նվազեցնելու որևէ այլ անհատին: Միաժամանակ, **արդյունավետություն ըստ Պարետոյի** անվանում են այն իրավիճակը, երբ բոլոր Պարետո-բարելավումներն արդեն իրականացվել են, և նոր Պարետո-բարելավումներ անհնար են:

Շուկայի ձախողումները, ըստ էության, այն դեպքերն են, երբ շուկայում կա հավասարակշիռ իրավիճակ, սակայն դեռևս հնարավոր են Պարետո-բարելավումներ՝ այսինքն, շուկան ինքնաբերաբար չի հանգել Պարետո-արդյունավետ հավասարակշռության: Այս դեպքերն այնքան շատ չեն, որպեսզի ընդհանրապես հերքվի «անտեսանելի ձեռքի» միջոցով հանրային բարեկեցության հասնելու օրինաչափությունը, սակայն հստակորեն ցույց են տալիս դրա սահմանափակումները: Քննարկենք շուկայի ձախողման հիմնական դեպքերը:

- **Մենաշնորհների գոյացումը**, երբ մրցակցության բացակայությունը բերում է շուկայի արդյունավետության կորստի և շուկայի մասնակիցների (թե՛ գնորդների, թե՛ վաճառողների) շահերի հաճախ կոպիտ ոտնահարման: Շուկայում հավասարակշռությունը հաստատվում է սահ-

մանային ծախսերի և սահմանային եկամտի հավասարակշռության կետում: Մենաշնորհի պայմաններում գինը, սակայն, գերազանցում է սահմանային եկամտին (բնականաբար, նաև սահմանային ծախսերին): Արդյունքում, կատարյալ մրցակցության համեմատ թե՛ ապրանքի գինն է ավելի բարձր, թե՛ այդ գնին համապատասխանող թողարկման ծավալն է ավելի քիչ, ինչն էլ բերում է մրցակցության համեմատ հասարակության բարեկեցության նվազման: Այստեղ շուկան, ըստ Պարետոյի, արդյունավետ չէ՝ հավասարակշռության կետում ակնհայտորեն հնարավոր է բարելավում՝ օրինակ, ավելի շատ թողարկումը կարող է մեծացնել կողմերի օգտակարությունն առանց վնասելու միմյանց:

- Գոյություն ունի երեք տեսակի մենաշնորհ՝ իրավիճակային, բնական և լեզալ: **Լեզալ մենաշնորհը** սահմանվում է պետության կողմից՝ հաճախ ոչ տնտեսական (օրինակ՝ հասարակական անվտանգության) դրդապատճառներով: Լեզալ մենաշնորհի տնտեսական պատճառներ կարող են լինել, օրինակ՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը: Բարձր ներդրումներ պահանջող մի շարք ոլորտներում, ինչպիսին ասենք դեղագործությունն է: Արտոնագրերի մենաշնորհի պահպանումն անհրաժեշտ է ոլորտի զարգացում ապահովելու համար: Սակայն, որպես կանոն, թե՛ հեղինակային իրավունքի, թե՛ արտոնագրերի ժամկետները սահմանափակ են՝ դրանք պետք է ապահովեն ներդրումների վերադարձ, սակայն չպետք է խաթարեն ազատ մրցակցության հիման վրա զարգացող առաջընթացը՝ մենաշնորհային կերպով օգտագործելով հանրությանը հասանելի գիտելիքները:

- **Իրավիճակային մենաշնորհը** ծագում է բարիքի արտադրության համար անհրաժեշտ որևէ ռեսուրսի (այդ թվում՝ արտադրական հզորությունների, հանքային պաշարների) էական մասին տիրապետելուց: Պետությունն այս պայմաններում կարող է հարկադրաբար մասնատել ձեռնարկությունը (օրինակ՝ Ռոկֆելլերի հայտնի «Ստանդարտ Օյլ» ձեռնարկությունը քսաներորդ դարի սկզբում ԱՄՆ-ում), ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսել արգելանքներ (նախապես) և պատժամիջոցներ (արդեն փաստի հայտնաբերումից հետո) նմանատիպ իրավիճակ ստեղծել ձգտող ջանքերի (ձեռնարկությունների պաշտոնական միաձուլումներ, կարտելային համաձայնագրեր, գնագցում և այլն) համար: Վերջերս ամենահաճախ քննարկվող հարցերից մեկն, այսպես կոչված, ցանցային ապրանքների արտադրության ժամանակ նման քաղաքականության կիրառումն է: Ցանցային ապրանքներ են հանդիսանում, օրինակ՝ համատեղելիության բարձր պահանջարկ ունեցող որոշակի համակարգչային ծրագրերը (օրինակ՝ Մայքրոսոֆթ ընկերության ծրագրերն են), երբ, ինչպես բնական մենաշնորհների դեպքում, դրանց օգտակարությունը բարձրանում է օգտագործողների թվի աճի հետ, սակայն, ի տարբերություն բնական մենաշնորհների, դա բխում է

ոչ թե արտադրողի ծախսերի, այլ օգտագործողի գործառական ծախսերի կառուցվածքից:

- **Բնական մենաշնորհ** առաջանում է այն ժամանակ, երբ տվյալ ապրանքի կամ ծառայության ծախսերի կառուցվածքում հաստատուն ծախսերը մի քանի անգամ գերազանցում են փոփոխական ծախսերին: Այս դեպքում առաջանում է մասշտաբի էֆեկտ, երբ ծավալների մեծացման հետ նոր ապրանքի ավելացման սահմանային ծախսերն էապես նվազում են: Օրինակ՝ շատ ավելի էժան է եղած ջրատարին նոր սպառող միացնել, քան ամեն նոր սպառողի համար նոր ջրատար կառուցելը: Այս պայմաններում անհմաստ է արտադրողին մասնատելը՝ դա բերում է արդյունավետության կորստի: Բնական մենաշնորհները պետությունը կարգավորում է հիմնականում երկու եղանակով՝ սահմանելով շահութաբերության որոշակի մակարդակ ապահովող սակագներ և պարտադրելով այդ սակագնով որոշակի տարածքում բոլոր պահանջարկ ներկայացնողներին սպասարկել: Պետք է հիշել, որ բնական մենաշնորհները հավերժական չեն՝ տեխնոլոգիայի զարգացումը կարող է բերել բնական մենաշնորհի վերացման (օրինակ՝ բջջային հեռախոսների դեպքում) կամ վերափոխման (օրինակ՝ միջքաղաքային հեռախոսակապը տեղական լարային կապից առանձնացումը):

- Շուկայի ձախողման դեպքերից է **ասիմետրիկ տեղեկատվությունը**: Երբ գործարք կնքող մեկ կողմն ունի անհամեմատ ավելի մեծ տեղեկատվություն (թե՛ մասնագիտական, թե՛ իրավիճակի իմացության), կամ ավելի բարձր շահագրգռություն, **ասիմետրիկ տեղեկատվությունը** և ռեսուրսների արդյունավետ բաշխման խնդիրներ է առաջացնում: Սա կարող է հանգեցնել **հակառակ ընտրություն** (adverse selection), երբ, ասենք ապահովագրություն գնելու ցանկություն ցուցաբերում է ոչ թե ռիսկերի հավասարաչափ բաշխում ունեցող մարդկանց պատահական ընտրանք, այլ առավել ռիսկային կյանք վարող անձինք: Մյուս կողմից, գոյություն ունի **անբարեխիղճ վարքի ռիսկ** (moral hazard), երբ, ապահովագրված լինելու փաստն արդեն ապահովագրվող անձին խթանում է առավել ռիսկային վարքի, իսկ ապահովագրողին՝ առավել պահպանողական քաղաքականության (բարձր սակագներ, խիստ պայմաններ, և այլն), ինչը, կրճատելով առաջարկը, կրկին բերում է շուկայի ոչ օպտիմալ իրավիճակի, քանի որ առաջարկի մեծացման դեպքում կավելանա թե՛ սպառողների, թե՛ արտադրողների բարեկեցությունը: Պետական կարգավորումն այս ոլորտում հիմնականում ընթանում է երկու ուղղությամբ՝ սահմանափակելով ծառայություն մատուցողների մուտքը շուկա (օրինակ՝ պահանջելով մասնագիտական որակավորում) և պարտադրելով տեղեկատվության բացահայտում (օրինակ՝ անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվություն փոխառության արդյունավետ տոկոսադրույքի վերաբերյալ):

- **Արտաքին արդյունքներն** (axternalities) առաջանում են, երբ շուկայական գործարքը լիովին օգտակար և նախընտրելի է գործարքի մասնակիցների համար, սակայն ունի անցանկալի ազդեցություն գործարքի հետ որևէ կապ չունեցող երրորդ կողմի վրա: Օրինակ՝ երբ անվադողեր արտադրող ընկերությունն աղտոտում է շրջակա միջավայրը, ձեռնարկությունը և անվադողերի գնորդները կարող են էապես բարելավել իրենց բարեկեցությունը, սակայն վատթարացնեն այն ընկերության հետ որևէ կապ չունեցող շրջակայքի բնակչության բարեկեցությունը: **Արտաքին արդյունքները** կարող են նաև դրական լինել՝ երբ, ասենք, այդ նույն ընկերության համար կառուցված նոր ջրատարն էապես նվազեցնի բնակչության ջրի ստացման ծախսերը: Բացասական արտաքին արդյունքերի կարգավորումը պետությունն իրականացնում է երկու հիմնական ձևով՝ սահմանելով անցանկալի արդյունքների նորմեր (օրինակ՝ արգելելով որոշակի քանակից ավելի շատ ածխաթթու գազ արտանետող շարժիչներ ունեցող ավտոմոբիլների վաճառքն ու շահագործումը) կամ դրանց համար բարձր կամ պատժիչ գներ սահմանելով:

- **Շուկաների սահմանափակությունը** նույնպես բերում է ռեսուրսների ոչ օպտիմալ տեղաբաշխման՝ հաճախ շուկան ի վիճակի չէ ապահովելու մի շարք ապրանքների կամ ծառայությունների արտադրությունը, թեև գոյություն ունի դրանց հստակ պահանջ, անգամ որոշակի պահանջարկ:

- Շուկան անկարող է ապահովելու **հանրային բարիքներ** անվանվող մի շարք ապրանքներ և ծառայությունների արտադրությունը (դրանց հանրայնորեն արտադրելու պահանջն էլ հենց տվել է դրանց սահմանումը որպես հանրային): **Չանրային բարիքները** (օրինակ՝ երկրի պաշտպանությունը, փարոսի լույսը և այլն) իրենց բնույթով **ոչ մրցակցելի** են և ոչ **բացառելի** (*non-rivalry and non-excludability*): Չանրային բարիքներն այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք պետք է տրամադրի պետությունն այն դեպքում, երբ ենթադրվում է սպառման անբացառելիություն և (կամ) համատեղ սպառում: Այսինքն, այդ բարիքները կարող են սպառվել միաժամանակ բոլորի կողմից՝ առանց որևէ սպառողին հասանելիք օգտակարությունը կրճատելու, և գործնականում հնարավոր չէ սահմանափակել տվյալ բարիքի մատչելիությունը սպառողին՝ անկախ այն փաստից, թե նրանք դրա համար վճարել են թե ոչ: Օրինակ՝ փարոսի լույսով կարող են ուղղորդվել բոլոր նավերը՝ առանց որևէ նավի համար լույսի սահմանափակման, կամ դրա համար վճար գանձելու: Քանի որ կարելի է այդ բարիքներն սպառել առանց վճարելու, սպառողները միշտ ձգտում են չվճարել, իսկ արտադրողները չեն ստանում համապատասխան ռեսուրսներ և խթաններ՝ դրանք արտադրելու համար: Այս բարիքների արտադրության

խնդիրը, որպես կանոն, լուծվում է դրա համար պետական (այսինքն՝ ամբողջ հասարակության կողմից) վճարով՝ հիմնականում բյուջետային ֆինանսավորմամբ: Սակայն, միշտ չէ, որ հանրային բարիքները «զուտ» են. կան բարիքներ, որոնք ոչ բացառելի են, սակայն մրցակցելի (օրինակ՝ ավտոմեքենաներով խցանված ճանապարհը), և ընդհակառակը: Ավելին, թե՛ բացառելիությունը, թե՛ մրցակցելիությունը բացարձակ կատեգորիաներ չեն. դրանք ունեն սանդղակային չափողականություն: Որոշ հեղինակներ առանձնացնում են «ոչ մաքուր» հանրային բարիքների մինչև տասը տարատեսակներ: Անմիջական պետական ֆինանսավորմամբ և պետական գործունեությամբ այդ բարիքների ապահովման կառուցակարգերից բացի, սեփականության իրավունքների և ծառայությունների չափման հստակ կարգավորման դեպքում հնարավոր են նաև այլ լուծումներ, երբ այս ծառայությունները մատուցելիս մասնավոր հատվածը համապատասխանորեն կարգավորվում, ֆինանսավորվում և վերահսկողության է ենթարկվում պետական հատվածի կողմից:

- **Հաճախ շուկաները լրիվ չեն՝** դրանք ապահովում են ապրանքների և ծառայությունների որոշակի մակարդակ, սակայն չեն կարողանում բավարարել ամբողջ պահանջարկը (օրինակ՝ ապահովագրության կամ կապիտալի շուկայի որոշակի ծառայություններ, կամ էլ բարդ կորդինացիա պահանջող փոխլրացնող ապրանքների արտադրությունը): Այստեղ պետությունը հիմնականում կամ մասնակցում է ծառայությունների մատուցմանը, կամ ստեղծում դրանց երաշխավորման մեխանիզմներ:

- Շատերը, հատկապես քայնասական դպրոցի հետևորդները, շուկայի ձախողումների ամենավառ արտահայտությունը տեսնում են տնտեսության պարբերաշրջանային բնույթով պայմանավորված **գործազրկության, զնաճի և անհավասարակշռության** պարբերական, երբեմն բավականին վառ արտահայտման մեջ: Թեև այս դրսևորումները վաղ կապիտալիզմի շրջանում առավել ուժգին էին, հետխորհրդային տարիների զանգվածային գործազրկությունը վկայում է, որ դրանք շարունակում են արդիական մնալ: Սակայն խնդրի արդիականությունը տնտեսագետների շրջանում չի վերացրել այն լուծելու պետության արդյունավետության մասին բանավեճը: Վերը նշված երևույթների պետական կարգավորման մեկ այլ ասպեկտ՝ միջամտության անուղղակի ձևը, կարծես, ստացել է տնտեսագետների ճնշող մեծամասնության հավանությունը:

Պետության կողմից տնտեսավարող սուբյեկտների գործունեության կարգավորումը միշտ էլ եղել է բուռն բանավեճի առարկա: Այս առումով առանձնահատուկ սրություն ունի ձեռնարկատիրական գոր-

ծուներության **ուղղակի** կամ անմիջական կարգավորումը: Մակրոտնտեսական (հարկաբյուջետային և դրամավարկային) կարգավորման **ա-մուղղակի** մեթոդներ գործադրելիս պետությունն անմիջական սահմանափակումներ չի դնում ձեռնարկությունների և անհատների տնտեսական գործունեության վրա: Հարկերը, օրինակ, թեև ազդում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդունած որոշումների վրա, սակայն անմիջականորեն կիրառվում են արդյունքի ստացումից հետո միայն, մինչդեռ դրամավարկային կարգավորման դեպքում պետությունն ազդում է տնտեսավարող սուբյեկտների վրա միայն անուղղակիորեն ներգործելով տնտեսական միջավայրի վրա: Անգամ բանկերի հետ հարաբերություններում, կենտրոնական բանկը դրամավարկային նպատակների ձգտում է հասնել առավելապես շուկայական գործառնությունների և ոչ պարտադիր նորմերի միջոցով¹:

Ամփոփելով՝ նշենք, որ շուկայի ձախողումները պետական կարգավորման նորմատիվ տեսության հիմքն են՝ հիմնավորելով թե ինչու է անհրաժեշտ պետության ուղղակի կամ անուղղակի միջամտությունը: Սակայն հաճախ գոյություն ունի պետության միջամտություն, որ դժվար է բացատրել շուկայի ձախողումներով: Պետության միջամտության այլ՝ պոզիտիվիստական կամ էմպիրիկ տեսությունները² հաճախ այս կամ այն ոլորտում պետության միջամտության դինամիկան բացատրում են խմբային շահերի և որոշ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների կոնկրետ համադրմամբ: Այստեղ, սակայն կարևոր է հետևել ոչ միայն կարգավորող-կարգավորվող հարաբերությունների զարգացմանը, այլև պատասխանել այն հարցերին, թե ինչու է այդ ոլորտում առաջացել կարգավորում: Լավագույն մոտեցում ապահովում են այն տեսությունները, որոնք կարողանում են ներառել թե՛ նորմատիվ, թե՛ պոզիտիվ վերլուծության տարրեր:³

Շուկայի ձախողումների տնտեսագիտական մեկնաբանությունները

• Շուկայի ձախողումների վերաբերյալ **նոր դասական** մոտեցումները շարադրված են վերևում և հենվում են շուկաների՝ ըստ Պարետոյի օպտիմալության գաղափարի վրա: Նման դիրքորոշման դեպքում

¹ Դրամավարկային քաղաքականությունը միշտ չէ, որ կարգավորվել է անուղղակի մեթոդներով: Մինչև անցյալ դարի 70-ական թվականները անգամ զարգացած երկրներում կիրառվում էին դրամավարկային կարգավորման այնպիսի ուղղակի մեթոդներ, ինչպես տոկոսադրույքների և արտարժույթային գործառնությունների սահմանափակումը: Սակայն այժմ անգամ զարգացող երկրներում նման սահմանափակումներ հազվադեպ են կիրառվում, հիմնականում՝ կիրառման ցածր արդյունավետության և տնտեսական աճին չնպաստելու համար:

² Մասնավորապես, խոսքը Ջորջ Ստիգլցերի կողմից առաջադրված կարգավորողների՝ կարգավորվող բիզնեսի շահերին ծառայելու կամ դրանց «զերի ընկնելու» տեսության մասին է:

³ Այդպիսին են համարվում, օրինակ, Գարի Բեկերի կամ Պելցմանի և Ստիգլցերի տնտեսության կարգավորման մոտեցումները:

բնականաբար, եկամուտների վերաբաշխման հիմնավորումը պետք է տնտեսագիտական հարցապնդումից դուրս լինի, քանի որ վերջինս միանշանակորեն կրթի ըստ Պարետոյի օպտիմալության կորստի: Սակայն, երբ նույն հարցին նայում ենք առավել երկարատև և դինամիկ զարգացման տեսակետից, եկամուտների ցածր վերաբաշխումը կարող է խնդրահարույց դառնալ երկարաժամկետ օպտիմալության տեսակետից: Նոր դասական ուղղության բազմաթիվ տնտեսագետներ, թեև խնդրի ստատիկ կամ պահային դրվածքի դեպքում վերաբաշխման անարդյունավետությունը չեն համարում շուկայի ձախողում, երկարաժամկետ հատվածում կարող են ունենալ այլ կարծիք:

- **Քեյնսականների** համար առավել կարևոր է մակրոտնտեսական կարգավորումը, որտեղ պետությունն ունի ակտիվ դերակատարում լրիվ զբաղվածության հասնելու համար, որից շեղումը համարվում է շուկայի ձախողում: **Նոր քեյնսականներն** առավել կենտրոնանում են գների կոշտությունների վրա, երբ շուկայի գնային ճշգրտումը միանգամից և սահուն չէ, սակայն դա չեն համարում շուկայի ձախողում, որ պետք է պետության կողմից շտկվի: Դա ավելի շատ դիտվում է որպես մակրոտնտեսական կարգավորման ժամանակ առկա օբյեկտիվ պայման, որը պետք է անպայմանորեն հաշվի առնել:

- **Չանրային ընտրության** տնտեսագիտությունը կիրառում է տնտեսագիտության մոտեցումները քաղաքականության մեջ, որն այն դիտարկում է հիմնականում որպես հասարակությանը հանրային բարիքների ապահովման նպատակով խմբային որոշումներ ընդունելու համակարգ: Այս դպրոցի ներկայացուցիչները, ընդունելով հանդերձ շուկայի ձախողումները, ունեն նմանատիպ մտավախություն պետության ձախողման վերաբերյալ՝ այսինքն, երբ կառավարությունը ևս ի վիճակի չէ արդյունավետորեն բաշխել ռեսուրսները (զանազան պատճառներով, այդ թվում՝ ժողովրդավարական գործընթացների անկատարության, հատուկ շահերի խմբերի գործունեության մոտիվների և այլն): Լուծումը հաճախ փնտրվում է պետությանն այլընտրանքային տարբեր մասնակիցների շահերը հաշվի առնող մեխանիզմների մեջ, որոնք կարող են համակցել մասնավոր և պետական գործողությունները, սակայն նպատակ ունեն վերաստեղծել շուկայական մեխանիզմները:

- **Մարքսիստները** խնդրո առարկան դիտարկում են հակառակ ծայրից՝ շուկան իր տարերայնությամբ, պարբերաշրջանային բնույթով և արդյունքների անհամաչափ բաշխումով ինքնին ձախողում է, որը չի կարելի շտկել մանր-մուկ միջամտություններով. այն կարելի է միայն

հիմնովին վերափոխել՝ մասնավոր սեփականության վերացմամբ և համընդհանուր պլանավորմամբ:

- **Ավստրիական դպրոցի** ներկայացուցիչների համար շուկայի ծախողումների գոյությունն արդեն իսկ վիճահարույց է՝ կատարյալ մրցակցության բացակայությունը դեռևս չի նշանակում ծախողում: Ըստ ավստրիական դպրոցի, կարևորագույն գործոնը անհատի ազատ ընտրությունն է, որի լավագույն չափանիշը հենց շուկայի գոյությունն է: Ըստ այսպիսի մոտեցման, անգամ եթե շուկան չի ապահովում որոշակի ապրանքներ, ապա դա անհատների ընտրության արդյունքն է. շուկան չի կարող ունենալ ծախողումներ, քանի որ շուկան հենց անհատների ազատ ընտրության արդյունավետության չափանիշն է:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՉԱՓԵՐԸ

Պետության կամ պետական հատվածի չափերի մասին դատողությունները հաճախ կարող են տարբեր լինել: Հաճախ դա կախված է քննարկման նպատակից կամ համատեքստից: Նայած թե ինչ խնդիր ենք քննարկում՝ համախառն թողարկում, աշխատանքի շուկա, ներդրումներ և այլն, մենք պետությունը չափելու ենք կոնկրետ այդ նպատակին համապատասխան: Բերվող աղյուսակը թվարկում է պետության չափի մի շարք լայնորեն տարածված ցուցանիշներ:

Աղյուսակ 1

ՀՀ պետական հատվածի մեծության մի շարք ցուցանիշներ, 2008 թ.

| Ցուցանիշը | % |
|---|------|
| Հանրային իշխանությունների մասնաբաժինը ընդհանուր ավելացված արժեքի մեջ* | 6.3 |
| Պետական հատվածի սպառումը ՀՆԱ-ում | 11.6 |
| Պետական հատվածի ներդրումները ՀՆԱ-ում | 4.5 |
| Պետական հատվածի զբաղվածության տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ | 18.9 |
| Պետական բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում | 22.2 |
| Պետական բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում | 21.5 |

* 2007 թ.

Աղյուսակից երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում պետությունը մեծ չէ, շատերի համար, անգամ ավելի փոքր է, քան անհրաժեշտ է: Սակայն դրա մասին առավել լրիվ պատկերացում կազմելու համար հարկավոր է Հայաստանի Հանրապետության պետական հատ-

վածը չափել այլ երկրների հետ: Այս համեմատությունը ևս վկայում է, որ Հայաստանում պետությունը բնութագրի տեսանկյունից փոքր է, և պետական հատվածի ազդեցությունը տնտեսության վրա ևս չի կարող մեծ լինել:

Աղյուսակ 2

Պետական հատվածի չափը մի շարք երկրներում, 2004 թ.,
ՀՆԱ մեջ տոկոս

| | Ավելացված արժեք | Եկամուտներ | Ծախսեր | Սպառում |
|-----------------------|-----------------|------------|--------|---------|
| Հայաստան* | 6 | 15 | 17 | 11 |
| Շվեդիա | 19 | 58 | 57 | 27 |
| Դանիա | 20 | 57 | 55 | 27 |
| Ֆրանսիա | 16 | 50 | 53 | 24 |
| Նորվեգիա | 16 | 58 | 46 | 22 |
| Ֆինլանդիա | 16 | 53 | 51 | 23 |
| Մեծ Բրիտանիա | 11 | 41 | 44 | 21 |
| Գերմանիա | 9 | 43 | 47 | 19 |
| Եվրամիության 15 երկիր | 13 | 45 | 47 | 21 |
| ԱՄՆ | 11 | 32 | 36 | 16 |
| Ճապոնիա | 9 | 30 | 38 | 18 |
| Ռուսաստան | 9 | 37 | 34 | 16 |
| Ուկրաինա | 11 | 36 | 40 | 18 |
| Չեխիա | 12 | 41 | 44 | 22 |

*Սոցիալական ապահովագրության վճարներն այսուհետ պետական բյուջեի միջոցով ստանալու և վերաբաշխելու քաղաքականությունն է հիմա, որ բերել է 2004 և 2008 թթ. Հայաստանի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի զգալի տարբերությունը: Արդեն իսկ կայուն տնտեսություն ունեցող երկրներում մնան մասշտաբի փոփոխություններ, որպես կանոն, չկան:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐՆ ՈՒ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսությունում պետության գործառույթների դասակարգումը հենվում է պետության՝ որպես առանձնակի հասարակական համակարգի հայեցակարգային պատկերացումների վրա: Պետությունն առաջացել և պահպանում է իր գոյությունը, նախևառաջ, որոշակի տարածքում բնակվող մարդկանց հասարակական ամբողջականությունը պահպանելու համար՝ իր բոլոր քաղաքացիների ամբողջական կամքի ու շահերի արտահայտման միջոցով: Հիերարխիկ կառուցվածքով բնութագրվող հասարակական բարդ համակարգի վերին շերտում տնտեսությունն է, և պետությունը, ի թիվս այլ հասարակական համակարգերի (բարոյական, իրավական, մշակույթի և այլն), կրում է տնտեսության տիրապետող ազդեցությունը:

Պետության գործունեության հիմնական ուղղությունները տնտեսության ոլորտում հետևյալներն են.

- Առաջին ուղղությունը տնտեսության գործունեության իրավական շրջանակների ձևավորումն է ու տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի անբաժան մասը հանդիսացող հաստատված կանոնների ապահովումը: Պետության՝ որպես իրավարարի, դերն ի հայտ է գալիս սեփականության իրավունքի, պայմանագրերի կետերի ապահովման ոլորտներում: Շուկայական տնտեսությունը չի կարող գործել առանց սեփականության իրավունքների պաշտպանության և առանց այն օրենքների, որոնք պարտադրում են կնքվող գործարքների պայմանների կատարումը: Սեփականության իրավունքներն անհրաժեշտ են ազատ ձեռնարկատիրական տնտեսության գործառնման ու զարգացման համար:

Պետությունը, որպես իրավարար, չեզոքացնում է արտաքին արդյունքները (externalities), կամ կողմնակի ազդեցությունները՝ դրական կամ բացասական հետևանքները, որոնք կրում են մարդիկ ապրանքների և ծառայությունների արտադրության կամ սպառման արդյունքում (երբ ապրանքի կամ ծառայության արտադրության ծախսերն ամբողջությամբ չեն վճարվում արտադրողի կամ սպառողի կողմից) : Այդ ծախսերը, կամա թե ակամա, իր վրա է կրում երրորդ կողմը՝ հասարակությունը: Եվ քանի որ շուկայական գները չեն արտահայտում կողմնակի արտաքին արդյունքների ոչ օգուտները և ոչ էլ ծախսերը, հետևաբար, չկարգավորվող շուկայական տնտեսության մեջ տեղի է ունենում ապրանքների ու ծառայությունների թերարտադրություն կողմնակի օգուտների տեսքով և գերարտադրություն՝ կողմնակի ծախսերի տեսքով, որոնք իրավական կարգավորման անհրաժեշտություն են առաջ բերում: Օրինակ՝ բնապահպանության պետական լիազոր մարմինը սահմանում և կիրառում է շրջակա միջավայրի անաղարտության չափորոշիչներ, որոնք պարտադիր են կատարման այն ձեռնարկությունների ու անհատների համար, որոնք աղտոտում են օդային կամ ջրային ավազանը:

Պետությունը ստեղծում է հաղորդակցության միջոցներ, նպաստում է դրանց գործունեությանը և տնտեսության գործունեության մասին տեղեկատվությունը հասանելի է դարձնում տնտեսվարող սուբյեկտներին, որով փոքրացվում է անորոշությունը, տնտեսական գործընթացների անկանխատեսելիությունը: Արդի պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստանում պետության՝ արտադրության գործոնների շարժունակության ապահովմանն ուղղված գործունեությունը (գրադվածության ծառայություններ, աշխատանքի ու ֆոնդային բորսաներ, ապահովագրության, տեղեկատվական կենտրոններ, լիզինգ և այլն): Ընդ որում, պետությունը, ինչպես նշվել է, կամ ինքն է հանդես գալիս այս ամենը նախաձեռնողի դերում, կամ էլ իրագործում է տնտեսության մասնավոր հատվածի կողմից այդ նախաձեռնություն-

ների համակարգումը, խթանումը, վերահսկումը: Անցյալ դարավերջի երկու տասնամյակներին բնորոշ է պետության հիմնական գործառույթների ուղղորդումը պայմաններ ստեղծելու և ոչ թե ծառայություններ իրականացնելու գործում:

- Երկրորդ ուղղությունը **ձևավորված տնտեսական հարաբերություններին և շուկայի գործունեությանը նպաստելն է:** Ազատ ձեռնարկատիրությունը միշտ չէ, որ ապահովում է շուկայական մրցակցություն, մինչդեռ առանց մրցակցության չկա ոչ մի երաշխիք, որ սահմանափակ քանակությամբ ռեսուրսներ կօգտագործվեն առավել արդյունավետ: Այսպիսով, ոչ բավարար մրցակցությունը շուկայական համակարգի գլխավոր հիմնախնդիրներից է: Գործնականում շուկայական մրցակցության պաշտպանությունը դրսևորվում է շուկայում արտադրողների ու սպառողների ազատ գործունեության ապահովմամբ՝ մենատիրության ծայրահեղ դրսևորումների սահմանափակումներով՝ իրավական կարգավորմամբ: Մենաշնորհների գոյությունը խախտում է շուկայական համակարգի ինքնակարգավորումը, մենաշնորհ գների սահմանման արդյունքում հանգեցնում գերշահույթի ստացմանը: Այս պարագաներում անխուսափելի է դառնում մրցակցության կարգավորումը (ներազդում գնագոյացման գործընթացների վրա՝ հասարակական ծառայությունների սակագների կարգավորում, որակի ստանդարտների պահպանում և այլ ուղիներ): Պետության մրցակցային գործընթացների պաշտպանության ձգտումը, տնտեսական համակարգերի էվոլյուցիայի տվյալ փուլում (երբ առկա է այնպիսի տեղեկատվություն, որը հայտնի է միայն առանձին ձեռնարկություններին, նորամուծությունների դժվար կանխատեսելիություն և այլն) արդարացված է մրցակցային հավասարակշռության պահպանման տեսանկյունից, քանի որ միայն մրցակցային միջավայրն է հնարավորություն ընձեռնում ձեռնարկություններին ինքնուրույն ընտրել օպտիմալ վարք, և դրանով նպաստել ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը: Տնտեսության մեջ պետության կարևոր դերակատարումներից մեկն էլ հանրության պաշտպանությունն է անորակ ապրանքներից կամ խաբուսիկ զովագրից: Պետության համապատասխան կառույցները պահանջում են, որ ձեռնարկությունները որևէ ապրանք կամ ծառայություն մատուցելիս պահպանեն որոշակի չափորոշիչներ, որով կապահովվեն սպառողների անվտանգությունը և արտադրանքի որակը:

- Երրորդ ուղղությունը սերտորեն փոխառնչվում է նախորդ երկուսի հետ և նպատակամղվում է **տնտեսության ենթահամակարգերի ոչ կոնֆլիկտային, համաձայնեցված զարգացմանը:** Պետությունը, որպես հասարակության բոլոր անդամների ներկայացուցիչ, շահագրգիռ է տնտեսության բոլոր ենթահամակարգերի հաշվեկշռված զարգացման մեջ: Մինչդեռ տնտեսական գործընթացներին ներազդման տնտեսական գործիքներն ու կարգավորիչները երբեմն ունենում են հակադիր, հակա-

սական ազդեցություններ: Առանձին դեպքերում կարճաժամկետ օգուտները կարող են հանգեցնել երկարաժամկետ կորուստների:

Տնտեսությունը, որպես հասարակական կյանքի տիրապետող ենթահամակարգ, ելնում է շուկայական կապերի առաջնայնությունից: Սակայն այնպիսի ճյուղերի գործունեությունը, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, գիտությունը, մշակույթը և այլն, միշտ չէ, որ ապահովում են շահութաբերություն և, հետևաբար, մասնավոր հատվածի շահագրգռությունը՝ ձեռնարկատիրական գործունեություն ծավալել այդ ոլորտներում, ընկնում է: Այդ դեպքում՝ պետությունը կամ իր վրա է վերցնում այդ ճյուղերի արդյունավետ գործառնման խնդիրները, կամ խթանում է մասնավոր հատվածին: Յուրաքանչյուր երկիր յուրովի է լուծում այդ հիմնահարցերը՝ ելնելով ստեղծված պայմաններից ու ավանդույթներից: Այս ամենը մեկ անգամ ևս ընդգծում է պետության ներուժի (ինչպիսի՞ խնդիրների լուծմանն է ի գօրու) և կառավարության գործառույթների (ինչպիսի՞ բնագծեր են հաղթահարվելու) համապատասխանեցման գերխնդիրը: Կիրառման ոլորտները բազմազան են:

Պետության տնտեսական քաղաքականությունը և սոցիալ-տնտեսական նպատակները

- Տնտեսական գործընթացների կարգավորմանն ուղղված միջոցների համախումբը բովանդակում է պետության տնտեսական քաղաքականության էությունը, որի գործադրումը հենվում է մի շարք սկզբունքային դրույթների վրա: Դրանցից կառանձնացնենք.

- Տնտեսական քաղաքականությունն իր վրա կրում է երկու ասպեկտների ազդեցություն. մի կողմից՝ տնտեսական իրավիճակի փոփոխությունների, մյուս կողմից՝ տնտեսական մտածողության փոփոխությունների: Երկուսն էլ փոխկապակցված են, բայց միևնույն ժամանակ օժտված են հարաբերական ինքնուրույնությամբ: Հասարակության զարգացման գործընթացում տնտեսական մտածողությունն անխուսափելիորեն փոխվում է, քանի որ փոխվում են պատկերացումներն արժեքների մասին: Այդ կապակցությամբ, ոչ հազվադեպ, ընդունված է նույնիսկ ավանդական խնդիրները լուծել նոր դիրքերից:
- Չարգացած երկրներում ձևավորված պրակտիկան ցույց է տալիս, որ տնտեսական քաղաքականության արդյունքը բարձր է այն դեպքում, երբ ավելի ուժեղ է իրականացվում կողմնորոշումը դեպի տվյալ երկրում առկա քաղաքական իրողությունները, այն է՝ ուժերի քաղաքական դասավորվածությունը և երկրի զարգացման մակարդակը (արտադրատեխնիկական ներուժը, սոցիալական կառուցվածքի վիճակը, համապետական և տեղական կառավարման ինստիտուցիոնալ կարգը):
- Տնտեսական քաղաքականությունը հանդիսանում է երկրի քաղաքական կուրսի աջակցման վճռորոշ միջոց: Տնտեսական քաղաքականությունը, մյուս կողմից, ներկայանում է որպես ո-


րոշակի նպատակների իրականացման գործընթաց, որի առաջատար սուբյեկտը պետությունն է:

Հասարակության զարգացմանը զուգընթաց անհրաժեշտ է հասնել բազմաթիվ նպատակների իրականացմանը: Սոցիալ-տնտեսական նպատակների հիերարխիայի բարձրակետում է ողջ հասարակության առավելագույն բարեկեցությանը հասնելու նպատակը: Այլ ենթանպատակները ծառայում են առավել բարձր մակարդակում գտնվող, միմյանց հետ փոխգործակցող, նպատակների իրականացմանը:

Նպատակների դասակարգման առաջին փորձը կատարվել է Ա.Սմիթի կողմից: Հենվելով Ֆ.Բեկոնի և Վ.Պետիի աշխատանքների վրա, առաջարկվել է հետևյալը. արտաքին անվտանգության ապահովում, իրավական կարգի ստեղծում, պետական ենթակառուցվածքների ապահովում: Ժամանակակից տեսությունը նպատակների բուրգը ներկայացնում է տարաբնույթ նպատակների աստիճանակարգված բուրգի տեսքով, (տե՛ս Գծապատկեր 1-ը):

Գծապատկեր 1

Նպատակների բուրգը



Շուկայական տնտեսության սոցիալական կարգավորումը

Սոցիալական ոլորտում պետության կողմից նվազագույն անհրաժեշտ միջոցառումներն են. հասարակական օգտագործման բարիքներով բնակչության ապահովումը, կարիքավորներին օգնելը:

- Բնակչության **սոցիալական ապահովությունը** պետության քաղաքականությունն է ուղղված մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների և երաշխիքների ապահովմանը՝ անկախ նրա բնակության վայրից, ազգությունից, կրոնական պատկանելությունից, սեռից, տարիքից և այլն: Սոցիալական ապահովությունը կոնկրետ դրսևորվում է բնակչության կենսամակարդակի բարձրացման, նվազագույն կենսամիջոցների ապահովման, աշխատանքի ու հանգստի, ծերության, հիվանդության, հաշմանդամության, առողջության պահպանման, զործազրկությունից պաշտպանության և այլ ոլորտներում մարդու իրավունքների ու երաշխիքների ապահովմանն ուղղված պետական քաղաքականությամբ:

Սոցիալական ապահովության հիմնական ձևերն են. սոցիալական ապահովագրությունը (պետական և մասնավոր), սոցիալական աջակցությունը (օգնությունը), որը ֆինանսավորվում է պետական բյուջեի կողմից, ձեռնարկությունների կողմից իրականացվող սոցիալական ծառայությունները:

- **Հասարակական (հանրային) օգտագործման բարիքների արտադրությունը**

Ինչպես նշվել է, շուկան անկարող է ապահովել հանրային բարիքների արտադրությունը: Դրանց են վերաբերում այն բարիքները, որոնց արտադրությամբ մասնավոր ընկերությունները չեն կարող կամ չեն ցանկանում զբաղվել, այդ պատճառով էլ մարդկանց դրանցով ապահովելու պարտականությունը ստիպված է կատարել պետությունը: Այդպես է ծագել հասարակական (հանրային) օգտագործման բարիքների և ծառայությունների հատվածը (պաշտպանություն, փոխադրման ենթակառուցվածքներ, բնապահպանություն և այլն): Ձեռնարկատերերը չեն ապահովում հասարակական օգտագործման բարիքների արտադրությունը երկու պատճառով.

- նախ, հեշտ չէ առանձին մարդկանցից հավաքագրել վճարումները կամ թույլ չտալ նրանց օգտվել այդ ծառայություններից (օրինակ՝ փողոցային լամպերը լուսավորում են քաղաքի փողոցները և հնարավոր չէ թույլատրել փողոցային լուսավորությունից օգտվել միայն այն մարդկանց, ովքեր վճարել են դրա դիմաց):
- երկրորդ՝ նման բարիքի (ծառայության) արտադրությունից սպասվելիք շահույթը չի փոխհատուցում ծախսերը:

• **Կարիքավորների օգնությունը**

Կառավարությունը խրախուսում է հասարակության թույլ պաշտպանված խավերի եկամուտների բարձրացման ծրագրերը և ապահովում է նրանց նոր տնտեսական հնարավորություններով.

- կարիքավորների նյութական աջակցության ծրագրեր (պետական նպաստներ և այլն),
- աղքատության և ցածր կենսամակարդակի վերացմանն ուղղված ծրագրեր (մասնագիտական վերաորակավորման դասընթացներ, աշխատանքի տեղավորման ժամանակ սեռից, տարիքից, ազգությունից կախված աշխատավարձի խտրականության վերացում և այլն), բնակչության առանձին խմբերին օգնության ծրագրեր (ձեռնարկատերերին, ազարակատերերին, գիտնականներին «հասցեագրված» օգնություն, հեղինակային իրավունքի պաշտպանություն, օտարերկրյա մրցակիցներից հայրենական արդյունաբերության պաշտպանության համար մաքսային արգելքների ստեղծում և այլն):

Շուկայական տնտեսության պետական կարգավորման հատուկ ուղղություն է առանձին սոցիալական խմբերի պաշտպանությունը: Նման պաշտպանության կարիք ունեն գործնականում բոլոր շուկայական սուբյեկտները, ներառյալ ձեռնարկատերերը, որոնց համար պետք է երաշխավորել նրանց սեփականության անձեռնմխելիությունը, եկամուտների ազատ տնօրինման իրավունքը և շուկայական տնտեսության ցանկացած ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորությունը: Ջարգացած շուկայական տնտեսություններում գերապատվելի են համարվում սոցիալական պաշտպանության հետևյալ ուղղությունները:

• **Նվազագույն աշխատավարձի երաշխիքը:** Նման երաշխիքն ունի բացառիկ սոցիալական կարևորություն, քանի որ ձևավորում է տնտեսության բոլոր ոլորտներում աշխատավարձի և կենսաթոշակների պարտադիր բազան: Նվազագույն աշխատավարձի չափերի կանոնավոր վերանայումները կազմում են պետական «եկամուտների քաղաքականության» հիմնական տարրը:

• **Ջրադվածության ապահովումը:** Շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևորագույն գործառույթ է աշխատանքի նկատմամբ ընդունակությունների իրացումը՝ աշխատանքային և ձեռնարկատիրական եկամուտների ստացման նպատակով: Այդպիսի պայմաններ են համարվում.

- մասնագիտության, աշխատանքային գործունեության ոլորտի և տեղի ազատ ընտրությունը,
- ընդհանուր և մասնագիտական կրթության ցանկալի մակարդակի ստացումը,

- արտադրության մեջ ժամանակավորապես չզբաղված աշխատուճակ տարիքի մարդկանց (գործազուրկների) նյութական աջակցումը և ուսուցման կազմակերպումը:

Զբաղվածության ոլորտում կառավարության գլխավոր նպատակն է գործազրկության «բնական մակարդակի» պահպանումը (տնտեսապես ակտիվ բնակչության թվի 4-5%-ից ոչ ավել): Դրա համար, մասնավորապես, օգտագործվում են ձեռնարկությունների հարկային արտոնությունները, որոնք ավելացնում են աշխատատեղերը, կարգավորվում է օտարերկրյա աշխատողների մուտքը, կազմակերպվում են աշխատանքի բորսաներ և այլն:

- **Հաստատուն եկամուտների դասիչավորում:** Խոսքը վերաբերում է սպառողական ապրանքների գների ինֆլյացիայի աճի հետևանքով բնակչության դրամական միջոցների կորստի փոխհատուցմանը պետության կողմից: Այդպիսի փոխհատուցումը ձեռք է բերվում հաշվարկելով հաստատուն եկամուտները մանրածախ գների դասիչին համապատասխան: Սակայն պետք է նշել, որ գների դասիչի հաշվարկն իր մեջ չի ընդգրկում բոլոր ապրանքներն ու ծառայությունները, այլ ընդգրկում է միայն այն ապրանքները և ծառայությունները, որոնք մտնում են նվազագույն սպառողական «զամբյուղի» («նվազագույն կենսամակարդակի») մեջ: Պետական հատվածում հաստատուն եկամուտների անվանական փոխհատուցումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ մասնավոր գործարարության մեջ՝ ձեռնարկատիրական շահույթի հաշվին: Դասիչավորման են ենթակա նաև բանկերում գտնվող բնակչության խնայողությունները, ինչպես նաև պետական պարտատոմսերը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱԽՈՂՈՒՄՆԵՐ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային ընտրության դպրոցի տնտեսագետները հաճախ խոսում են **պետության ձախողումների** մասին՝ զուգահեռներ տանելով շուկայի ձախողումների հետ: Սրանք այն դեպքերն են, երբ պետությունն իր սպառողների (որպես կանոն, դրանք քաղաքացիներն են) համար չի ապահովում ապրանքների և ծառայությունների (կամ ռեսուրսների) արդյունավետ տեղաբաշխում: Այս ձախողումները կարող են բացահայտվել ինչպես քաղաքական համակարգի կողմից ընդունվող և տնտեսագիտական տրամաբանությանը չդավանող որոշումներով (օրինակ՝ ձայների մեծամասնությունն ապահովելու համար անհրաժեշտ քաղաքական համաձայնությամբ), այնպես էլ տեղեկատվության անկատարությամբ և այլ խնդիրներով: Հաճախ, պետության ձախողումների փաստարկները վերաբերում են իրողությունների, որոնց հասարակությունը միշտ չէ, որ նայում է ապրանքների և ծառայությունների ապահովման տեսակետից: Օրինակ, թեև ակնհայտ ծախսային բաղադրիչի առկայությանը, մանկատնային քաղաքականությունը հա-

սարակությունը քննարկում է ոչ միայն շուկայի, այլև հասարակական կյանքի այլ ինստիտուտների (օրինակ՝ ընտանիքի) պրիզմայով:

Պետության (կառավարության) գործունեության արդյունավետությանը կարելի է մոտենալ տարբեր կողմերից՝ դիտարկելով թե՛ որոշակի նպատակների (բարձր տնտեսական աճ, կյանքի տևողության երկարեցում և այլն) հասնելը, թե՛ այդ նպատակներին հասնելու ծախսատարությունը: Ընդունելով նպատակների կարևորությունը՝ տնտեսագետները հաճախ կենտրոնանում են պետության ծախսատարության վրա՝ գնահատելով դա թե՛ անմիջական արդյունավետության և թե՛ շուկայի վրա ունեցած ազդեցության տեսակետից:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոքր պետությունն ունեցող երկրներն (օրինակ, որոնց հանրային հատվածի ծախսերը ՀՆԱ 40%-ից քիչ են) ընդհանուր առմամբ ունեն ավելի բարվոք և կայուն տնտեսական ցուցանիշներ, իսկ ավելի մեծ հանրային հատված ունեցող երկրներն ունեն եկամուտների ավելի հավասարաչափ բաշխում, ավելի քիչ բյուրոկրատական քաշքշուկ, հանրային բարիքների ավելի արդյունավետ ապահովում:

Պետության (կառավարության) գործունեության արդյունավետության հիմնախնդիրներն արժարժեք են ամենատարբեր մակարդակներում: Մասնավորապես, այն դարձել է Համաշխարհային բանկի գեկուցման թեման 1997թ. համաշխարհային զարգացման մասին, որտեղ նշվում է, որ կառավարության գործունեության արդյունավետությունը չի բնորոշվում սոսկ ՀՆԱ-ի մեջ պետական հատվածի կամ պետական ծախսերի մասնաբաժնի չափերով: Դրանք բազմաչափ են և գոյություն ունեն չորս հիմնական հարցեր.

- ինչպե՞ս է կառավարությունը կարողանում առավել արդյունավետ օգտագործել պետական ծախսերը՝ պետական ծառայությունների որակի բարձրացման համար,
- ի՞նչ խթաններ է կարողանում օգտագործել կառավարությունը, որպեսզի մասնավոր և պետական մասնաբաժին ունեցող ձեռնարկություններն ավելի ակտիվորեն մատուցեն սոցիալական համախմբմանն ուղղված ծառայությունները,
- ինչպիսի՞ արդյունավետ միջոցառումներ է կարողանում իրագործել կառավարությունը սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի տեսանկյունից, որը միաժամանակ կնպաստի տնտեսական աճին և արդարության ապահովմանը,
- ինչպիսի՞ արդյունավետ և արդարացի միջոցներ կարող է օգտագործել կառավարությունը եկամուտների ավելացման համար:

Պետության (կառավարության) դերն ու նպատակները տարբեր երկրներում և ժամանակներում զանազանվել են՝ կախված թե՛ տեխնոլոգիայի զարգացումից, թե՛ պետության վերաբերյալ հասարակության պատկերացումներից, սոցիալական ուսմունքներից և այլն: Այդ իսկ պատճառով, պետության գործունեության արդյունավետությունը պետք է գնահատել ելնելով այդ պահին տվյալ պետության դերից և նպատակներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Tullock, Gordon, Seldon, Arthur, and Brady, Gordon L., Government Failure: A Primer in Public Choice.* Washington, D.C., CATO Institute, 2002.
2. *Handler, H., Bertrand Koebel, Philipp Reiss and Margit Schratzenstaller* (2006), "The size and performance of public sector activities in Europe: An overview", *Acta Oeconomica*, 56, 399-422.
3. *Tanzi, Vito*, "The role of the State and the quality of the public sector," *Cepal Review*, 71, August 2000, pp. 7-22.
4. *Якобсон, Л. И., Государственный Сектор Экономики: экономическая теория и политика.* Москва, Высшая Школа Экономики. 2000 г.
5. *Аткинсон А., Стиглиц Дж., Лекции по экономической теории государственного сектора.* Москва: Аспект-пресс, 1995 г.
6. *Стиглиц Дж., Экономика государственного сектора.* Москва: ИНФРА-М, 1997 г.
7. Всемирный Банк. *Государство в меняющемся мире: Отчет о мировом развитии*, Москва, Всемирный Банк, 1997 г.
8. UNDP (United Nations Development Programme). *Сокращение роли государства.* Июль, 1997 г.
9. *Экономическая теория.* Под ред. *В. Д. Камаева*, Москва, 1998 г.
10. *Դավոյան Ս., Սարկոսյան Ա., Սարգսյան Դ., Վերափոխումներն անցումային երկրների տնտեսություններում*, Երևան, «Տիգրան Մեծ», 2003 թ.:

ԳՈՐԱՐ ՍԵԼԻՔԲԵԿՅԱՆ
ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ


Այսօր արդեն ակնհայտ է այն փաստը, որ կառավարումը հնագույն արվեստ է և նոր գիտություն: Նախ՝ անդրադառնանք «Կառավարում» եզրույթի պարզաբանմանը: Այն սկզբնական իմաստով նշանակում է «ծիավարում»: Անգլերեն կառավարման բառի տարբերակը “manage”-ը ծագել է լատինական “manus”-ձեռք բառից: Հետագայում այդ բառը ստացավ հետևյալ իմաստը՝ ձեռքերի տիրապետում, նաև կառքերի ղեկավարում: Ժամանակակից հասկացությամբ կառավարումը գործունեության տարբեր ձևերի համակարգումն է, այսինքն՝ պլանավորման, կազմակերպման, ղեկավարման և վերահսկողության միջոցով կազմակերպության նպատակներին հասնելու արդյունավետ գործընթացն է: Հաճախ կառավարումն ու “management” բառերը նույնացվում են, իսկ եթե անդրադառնանք Օքսֆորդ բառարանի օգնությանը, ապա “management”- մենեջմենթը սահմանվում է որպես.

- հաղորդակցման միջոց,
- իշխանության և կառավարման արվեստ,
- վարչարարության յուրահատուկ տեսակ և հմտություն,
- կառավարման մարմին և վարչական միավոր:

Սակայն մենք մենեջմենթ և կառավարում համարենք հոմանիշ բառեր:

Գծապատկեր 1

Կառավարման ենթամակարդակները



Նախ՝ քննարկենք գծապատկեր 1-ում ներկայացված յուրաքանչյուր ենթամակարդակն առանձին-առանձին:

Կառավարումը որպես գործառույթ

XVII-XVIII-րդ դարերում կառավարումն առանձնացավ որպես մարդկային գործունեության ինքնուրույն տեսակ, որպես առանձնացված գործառույթ, որն իր իրականացվող աշխատանքների բովանդակությամբ սկզբունքորեն տարբերվում է արտադրության գործառույթներից: Կառավարումն որպես գործունեության առանձին տեսակ իրականացվում է մի շարք *կառավարչական գործողությունների* միջոցով, որոնց անվանեցին կառավարման գործառույթներ: Այդ գործառույթներից կարևորների թվին են դասվում.

- կանխատեսումը,
- պլանավորումը,
- կազմակերպումը,
- համակարգումն ու կարգավորումը,
- ակտիվացումն ու խթանումը,
- հաշվառումն ու վերահսկումը:

Կառավարման դիտարկումը, որպես գործառույթ, պայմանավորված է կառավարչական գործունեության բոլոր տեսակների մշակմամբ (թե՛ բովանդակային և թե՛ կազմի առումով) ու դրանց փոխադարձ կապերով տարածության և ժամանակի մեջ: Հենց կառավարումն է ապահովում հասարակության սոցիալական և տնտեսական զարգացումը:

«Այնտեղ, որտեղ մենք ներդնում ենք միայն տնտեսական ռեսուրսները, հատկապես կապիտալի, արտադրություն խթանելու համար, մենք զարգացում չենք ունենում: Սակայն շատ դեպքերում, երբ «կարողանում ենք» կիրառել կառավարման մեխանիզմները, սկսվում է զարգացումը: Չարգացումը տվյալ դեպքում մարդկային էներգիայի ուղղորդումն է և ավելի մեծ հարստությունը, քան տնտեսական միջոցների առկայությունը: Մարդկային էներգիայի կուտակումն ու ուղղորդումը կառավարման հիմնական խնդիրն է: Կառավարումը դիտարկվում է որպես.

- շարժիչ,
- զարգացում,
- հետևանք:

Այսպես է բնորոշում կառավարումը Փիթեր Դրուքերը:

Հազվադեպ երևույթ է, երբ նոր սոցիալական գործառույթը, նոր սոցիալական ինստիտուտն այսքան արագ ստեղծվում և հատկապես զարգացում է ապրում, ինչպիսին դարձավ «կառավարումը», որն այսօր ուղղակի անփոխարինելի երևույթ է հասարակության ցանկացած ասպարեզում: Այսօր միակ հատկանիշը, ինչով տարբերվում է մի կազմակերպությունը մյուսից (նույն ոլորտի) դա տարբեր մակարդակներում կառավարման որակն է:

Կառավարումն որպես գործընթաց

Կառավարում-գործընթացը ենթադրում է պլանավորման, կազմակերպման, համակարգման, շահադրդման և վերահսկողության գործառույթների իրականացում, որի ընթացքում կառավարիչներն ապահովում են կազմակերպության աշխատողների արդյունավետ գործունեության համար բարենպաստ պայմաններ: Ուստի, կառավարման գործընթացի բովանդակությունը պայմանավորված է իր գործառույթների իրականացմամբ:

Կառավարման գործընթացային մոտեցումը թույլ է տալիս կառավարչական գործունեության բոլոր տեսակները ներառել մի ամբողջական, տրամաբանորեն շաղկապված շղթայի մեջ: Այդպիսի մոտեցումը թույլ է տալիս կառավարումը ներկայացնել որպես փոխկապակցված գործառույթների իրականացման շղթա, որոնք տարածության և ժամանակի մեջ փոփոխվում են և, որոնց նպատակը կազմակերպության խնդիրների և հիմնահարցերի լուծումն է:

Կառավարման գործընթացը նաև տեղեկատվական գործընթաց է, այսինքն՝ տեղեկատվության ձևավորման, ընկալման, փոխանակման, մշակման և պահպանման գործընթաց: Այս ամենը նշանակում է, որ կառավարումն անհմաստ է առանց վերջինիս և դրանից դուրս:

Տեղեկատվության ծագման, ստացման և օգտագործման հինգ փուլերը միշտ առկա են տարբեր մակարդակների ղեկավարների և կատարողների (ենթակամների) մոտ:

Տեղեկատվության շարժը կամ հինգ փուլերի հաջորդականության ապահովումն անհրաժեշտ պայման է կառավարման արդյունավետության ապահովման հարցում, ուստի դրանց իմացությունը նույնպես պարտադիր է:

Տեղեկատվության շարժի փուլեր են համարվում.

- ձևավորումը,
- ընկալումը,
- փոխանակումը,
- մշակումը,
- պահպանումը:

Կառավարումն որպես մարմին կամ ապարատ, առանց որի ոչ մի կազմակերպություն չի կարող հանդես գալ որպես մի ամբողջություն: Ուստի, կառավարման ապարատը կամ մարմինը ցանկացած կազմակերպության անբաժանելի մասն է: Այս մոտեցման համաձայն՝ ցանկացած կազմակերպություն կենտրոնանում է հիմնականում հիերարխիկ կառուցվածքի, կառուցվածքային տարրերի ու ստորաբաժանումների միջև կապերի, ինչպես նաև կենտրոնացման և ապակենտրոնացման, աշխատողների պատասխանատվության և լիազորությունների բաշխման ու պատվիրակման հիմնահարցերի վրա: Կառավարման ապարատի հիերարխիկ կառուցվածքի շրջանակներում էլ իրականացվում են կառավարման գործառույթները: Հիերարխիան, իր հերթին, որոշակի

արտացոլում է գտնում այս կամ այն կազմակերպության կառուցվածքում: Ըստ էության՝ կառավարման կառուցվածքը կառավարչական որոշումների ընդունման և իրականացման գործում աշխատանքի բաժանման կազմակերպչական ձևն է [2]:

Կառավարումն որպես կառավարմամբ զբաղվող մարդկանց խումբ կամ կատեգորիա

Նպատակներ սահմանելն ու իրականացնելն ըստ գիտական դպրոցի հիմնադիր Ֆ. Թեյլորի հակիրճ բնորոշման՝ ամեն ինչ իմանալու և ինչպես անելու արվեստ է: Եվ այդ արվեստին տիրապետում են միայն մարդկանց որոշակի կատեգորիա՝ կառավարիչները, որոնց ամենօրյա աշխատանքը մարդկանց ջանքերի կազմակերպումն ու ղեկավարումն է համապատասխան արդյունքներին հասնելու համար՝ որոշակի նպատակներից ելնելով: Մարդը որպես արտադրության առանցքային աղբյուր և ռեսուրս կառավարիչներից պահանջում է նաև որոշակի պայմանների ստեղծում մարդկանց ներուժի զարգացման համար: Այդ ներուժի արդյունավետ օգտագործումն ու ավելացումը կառավարման կենտրոնական խնդիրներից է: Հետևաբար, կառավարմամբ զբաղվողների համար գերխնդիր է կազմակերպության բոլոր ռեսուրսների (փող, շինություն, սարքավորում, նյութեր, աշխատանք, տեղեկատվություն) արդյունավետ օգտագործումն ու համակարգումը՝ սահմանված նպատակներին հասնելու համար: Համարյա բոլոր կազմակերպությունները նույն ռեսուրսներն ունեն, սակայն դրանց գործունեության արդյունավետությունը տարբեր է, և այն պայմանավորված է կառավարման որակով:

Կառավարումն որպես գիտություն և արվեստ

XX-րդ դարում մենեջմենթն առանձնացավ որպես գիտության առանձին ճյուղ, գիտելիքների ինքնուրույն ոլորտ, որն ունի իր առարկան, իր ուրույն խնդիրներն ու որոշումների ընդունման տարբեր մոտեցումները: Այս ճյուղի գիտական հիմքը ներկայացված է առանձին հայեցակարգերի, տեսությունների, սկզբունքների և կառավարման համակարգերի տեսքով: Այն որպես գիտություն հնարավորություն է ընձեռում ժամանակին և որակով կառավարել ոչ միայն ընթացիկ գործերը, այլ նաև կանխատեսել իրադարձությունների հնարավոր զարգացումները և դրանց համապատասխան մշակել կազմակերպության ռազմավարությունն ու քաղաքականությունը: Ուստի, կառավարման գիտությունը մշակում է իր տեսությունը, որի բովանդակությունը կազմում են այդ գործընթացի օրենքներն ու օրինաչափությունները, սկզբունքներն ու գործառույթները, մարդկային նպատակաուղղված գործունեության ձևերն ու մեթոդները:

Կառավարումը նաև որպես արվեստ դիտարկվում է այն պատճառով, քանի որ կազմակերպությունը կազմված լինելով բարդ սոցիալ-տնտեսական համակարգերից և իր վրա կրելով թե՛ արտաքին և թե՛ ներքին միջավայրի բազմաթիվ ու զանազան գործոնների ազդեցությունը, կարող է այդ արվեստին տիրապետել ոչ միայն սովորելով և

փորձ ձեռք բերելով, այլ նաև անհրաժեշտ է համապատասխան տա-
 դանդով օժտված լինել: Կառավարչական կադրերի մասնագիտական
 պատրաստումն ու վերապատրաստումը համարվում է ամենաշահա-
 վետ ներդրումը, քանի որ միայն այս խնդրի լուծմամբ հնարավոր է
 բարձրանալ տնտեսական բարձր նվաճումների մակարդակ և հաղթա-
 հարել թե՛ աղքատությունը և թե՛ ճգնաժամերը: «Լավ կառավարվող եր-
 կիրը միշտ ամաչում է աղքատությունից և չքավորությունից, իսկ վատ
 կառավարվող երկիրը՝ բարեկեցությունից ու հարստությունից», - ասել
 է Կոնֆուցիոսը 2.5 հազար տարի առաջ: Յետևաբար, արդյունավետ
 կառավարման համար անհրաժեշտ են տեսական գիտելիքների իմա-
 ցություն, գործնական հմտություններ և այս ամենը ստեղծագործաբար
 և խելամտորեն կիրառելու ընդունակություն, այսինքն՝ ընդունակ լինել
 կառավարման արվեստին տիրապետելու:

«Կառավարում» նոր և բարդ սոցիալական երևույթը հասկանալու
 համար բավականին օգտակար է անդրադառնալ դրա պատմությանը:
 Չնայած վիթխարի հեղափոխական փոփոխությունների, կառավար-
 ման զարգացումը հիմնականում էվոլյուցիոն գործընթաց է համար-
 վում: Այն բնութագրվում է կազմակերպության նպատակների, ռազմա-
 վարության և խնդիրների փոխկապակցվածությամբ: Փոխվում են
 նպատակներն ու ռազմավարությունը, փոխվում են որոշակի խնդիր-
 ները, համապատասխանաբար փոխվում են կազմակերպությունները
 և կառավարման մեթոդները:

*«Պատմության իմացությունը յուրաքանչյուր կազմակերպության
 զարգացման հիմնական գործիքներից մեկն է», - գրել է "Hewlett
 Packard" ընկերության հիմնադիր Դեյվ Փաքարդը:*

Այսպես օրինակ՝ "General Motors" –ի դեպքը.

1973 թ. սկսվեց ամերիկյան զորքերի դուրս բերումը Վիետնամից:
 Սակայն նույն թվականի հոկտեմբերից բարձրացավ վառելիքի (բենզի-
 նի) գինը և ամերիկյան շուկան սկսեց լցվել ներմուծված մեքենաներով:
 Որպեսզի հետ չմնա մրցակիցներից General Motors–ը սկսեց մշակել
 երկու նոր ավտոմեքենա: Աշխատանքի ընթացքում, նախագծի վրա
 աշխատելիս լուրջ խնդիրներ էին ծագել որակի, ինչպես նաև ժամկետ-
 ների հետ կապված: Բնականաբար, General Motors–ը մեծ վնասներ
 կրեց և արժանացավ հասարակության քննադատությանը: Մանրակր-
 կիտ վերլուծության արդյունքում ի հայտ բերվեցին աշխատանքի կազ-
 մակերպման մի շարք թերություններ: Այդ դեպքից դասեր քաղեցին և
 հասան հաջողությունների: General Motors–ը դասեր քաղեց այդ պատ-
 մությունից, սակայն մինչ օրս դժվարությամբ է հարմարվում արտաքին
 միջավայրի փոփոխություններին:

Պատմության ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի բո-
 լոր ղեկավարների համար, քանի որ խոսքը գնում է մտածելակերպի
 մասին: Պատմության իմացությունը լավագույն միջավայրն է ժամանա-
 կակից խնդիրների մեկնաբանման համար: Միայն պատմության իմա-
 ցությունը և անդրադարձը հնարավորություն է տալիս բացահայտել

կատարվածի իրական իմաստը, գնահատել իրավիճակը ու հետագա զարգացումները՝ թույլ տալով գտնել կազմակերպության զարգացման համապատասխան ուղղությունները:

Անցյալի ուսումնասիրությունը էական ներդրում է կատարել ներկան հասկանալու համար, ինչպես նաև ապագան կանխատեսելու համար: Այն նաև ուսուցման միջոց է ուրիշների սխալները տեսնելու, դրանք չկրկնելու, իսկ նվաճումները տեսնելն ու երևույթները հասկանալը հնարավորություն է տալիս կատարելագործել դրանք ապագայում: Պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ասես կողքից նայել և դիտարկել այն կազմակերպության սոցիալական, քաղաքական և տնտեսական ուժերի փոխազդեցության տեսանկյունից:

Սոցիալական ուժերը վարքի այն նորմերի, պահանջումների, արժեքների և մշակույթի ազդեցության սահմանների իմացությունն է, որն անհրաժեշտ է մարդկային փոխհարաբերությունների հաստատման և զարգացման համար: Սոցիալական ուժերը ձևավորում են այն, ինչը կոչվում է «սոցիալական պայմանագիր»։ չգրված ընդհանուր կանոններն ու մարդկանց փոխհարաբերությունների վերաբերող հասկացությունները:

Քաղաքական ուժերի իմացությունն անհրաժեշտ է հասկանալու, թե ինչպես են քաղաքական և օրենսդիր ինստիտուտներն ազդում մարդկանց ու կազմակերպությունների վրա: Անցյալ դարում սառը պատերազմի ավարտը և կապիտալիզմի լայն տարածումը կարող ենք համարել քաղաքական ուժերի ակտիվացում, որն իր էական ազդեցությունն է թողել ժամանակակից գործարարության վրա: Արտաքին միջավայրի փոփոխությունը պայմանավորված է նաև շուկայական տնտեսությանն անցում կատարած արևելյան Եվրոպայի պետություններում առկա քաղաքական իրավիճակով և ուժերի դասավորվածությամբ:

Տնտեսական ուժերը սահմանում են հասարակության ռեսուրսների մատչելիությունը, արտադրությունը և բաշխվածությունը մրցակից սպառողների միջև: Ռեսուրսներ, միջոցներ անհրաժեշտ են ցանկացած հասարակությանը և տարբեր պետական ու հասարակական ինստիտուտներին (կառավարություն, բանակ, եկեղեցի, բուհեր և այլն), քանի որ սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նախապայմանն են դրանք: Այդ ռեսուրսները սահմանափակ են, և տնտեսական ուժերը սահմանում են դրանց բաշխվածության համամասնությունները: Ռեսուրսները լինում են.

- մարդկային և նյութական,
- բնական և մարդու կողմից ստեղծված,
- ֆիզիկական և հայեցակարգային:

Ակզբնական շրջանում անգամ եթե որևէ ռեսուրս համարվում է անսահմանափակ, որոշակի ժամանակ հետո պահանջարկի ավելացմանը զուգահեռ դրանց սահմանափակությունը բերում է բաշխվածության անհրաժեշտությանը: Տնտեսական պակասուրդը հաճախ խթան է հանդիսանում տեխնոլոգիական նորամուծությունների ի հայտ գալուն՝

ուղղված մատչելի ռեսուրսների ծավալի մեծացմանը կամ դրանց օգտագործման նվազեցմանը: Այսպես, 1913 թ. Highland Park գործարանում (պատկանում է Ford ընկերությանը) հոսքային արտադրության ներդրումը հնարավորություն տվեց կրճատել մարդ-ժամ քանակը՝ 12-ից մինչև 1.5, որի արդյունքում բանվորների օրական աշխատավարձը բարձրացավ երկու անգամ (մինչև 5 դոլար) և դրա շնորհիվ էլ Ford-ը արդեն 10 տարի անց (1923 թ.) գրավեց շուկայի մոտ 57 % [6]:

Իմանալով այս ամենը՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն մոտեցմանը, որ գործնականում ապացուցված է, որ անձնակազմի, որպես կարևոր բիզնես-գործոններից մեկի, արդյունավետ գործունեությունը որոշվում է կազմակերպությունում հետևյալ ուղղություններով իրականացվող աշխատանքներով.

- որոշակի ուղղությունների մշակում՝ համադրելով աշխատողների և կազմակերպության ընդհանուր նպատակները,
- աշխատողների զարգացածության մակարդակի և առկա ու հետագա լուծելի խնդիրների միջև համապատասխանության ապահովում,
- շահադրդման համակարգերի մշակում և յուրաքանչյուր աշխատողի աշխատանքային գործունեության արդյունավետության երաշխիքների սահմանում:

ժամանակաշրջանը, որում մենք ապրում ենք, փոփոխությունների դարաշրջան է, և մեր հասարակությունը իրականացնում է բացառապես բարդ, հաճախ հակասական, բայց պատմականորեն անհրաժեշտ և անխուսափելի փոփոխություններ: Անդրադառնանք կառավարման հիմնական, ընդհանուր գործառույթներից մեկին՝ կազմակերպմանը, որն ուղղված է նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Այս գործառույթի խնդիրներն են.

- կազմակերպության կառուցվածքի ձևավորումը,
- անհրաժեշտ ռեսուրսների (ֆինանսներ, սարքավորումներ, հումք, նյութեր և աշխատուժ) ապահովումը:

Արտաքին միջավայրի պայմանների փոփոխմամբ հաճախ անհրաժեշտ է փոխել կազմակերպության կառուցվածքը, որպեսզի համապատասխանեցվի առկա պայմաններին՝ կրճատելով կամ ավելացնելով կառուցվածքային տարրերը: Կառավարման կազմակերպական բարձր մակարդակի հիմնական ցուցանիշն արտաքին միջավայրի պայմաններին արագ արձագանքելու ընդունակությունն է: «Կազմակերպում» եզրույթը (լատ. organise բառից նշանակում է դասավորել, կարգավորել, որոշակի ձև տալ) ունի երկակի իմաստ: Կառավարումը, որպես կառավարման հիմնական գործառույթ, կառավարվող համակարգի աստիճանակարգային բոլոր մակարդակներում ապահովում է կառավարչական գործունեության տեխնիկական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական և իրավական կողմերի կարգավորումը: Միաժամանակ կազմակերպությունը մարդկանց միավորումն է, որոնց համատեղ գործունեությունն ուղղված է կազմակերպության ընդհանուր նպատակներին հասնելու համար: Սակայն ցանկացած կազմակերպություն պետք է տնօրի-


նի համապատասխան ռեսուրսներ: Կառավարչական գործունեությունը կախված է հիմնականում կազմակերպչական հիմքերից, անգամ ամենախելամիտ հրամանը ընդամենը հրաման կմնա, եթե կազմակերպված չլինի նրա իրականացումը, իսկ կատարողին պարզ չի լինի նպատակը: Այսպես, դեռ Եկատերինա II օրոք այն հարցին, թե ինչու՞ է արքունիքը կատարում իր բոլոր հրամանները, նա պատասխանում էր. «որովհետև ես հրամայում եմ այն, ինչ իրենք են ուզում»:

Այսպես, ցանկացած մակարդակի վրա կառավարման կազմակերպման խնդիրն է ապահովել անցումն առկա վիճակից ցանկալիին: Այս տեսակետից հետաքրքիր են ամերիկացի գիտնականներ Թ. Փիթերսոնի և Ռ. Ուոտերմանի առաջարկությունը. կազմակերպությունը դիտարկել որպես յոթ հիմնական փոփոխականների ամբողջություն: Այս առաջարկությունը հետագայում անվանեցին «7S»-երի կանոն կամ «երջանիկ ատոմ», որտեղ երևում են կազմակերպության հիմնական բաղադրիչներն ու խնդիրները: Այդ փոփոխականներն անգլերենից թարգմանվում են հետևյալ կերպ.

1. structure – կառուցվածք,
2. strategy – ռազմավարություն,
3. systems – կառավարման համակարգեր,
4. shared values – ընդհանուր, համատեղ արժեքներ կամ արժեքային համակարգ,
5. skills – հմտություններ,
6. style – ոճ,
7. staff - անձնակազմ (տե՛ս Գծապատկեր 2-ը):

Գծապատկեր 2

Մաքինսի ընկերության «7S»-երի մոդելը



Համաշխարհային տնտեսագիտության և կառավարման տեսության մեջ բավականին շատ հայացքներ և օրինակներ կան (ընդհուպ մինչև պետության մակարդակով) կառավարչական գործունեությանն անձնակազմի մասնակցության վերաբերյալ: Մշակվել և գործնականում իրականացվել են կառավարման կազմակերպման բազմաթիվ մեթոդներ սեփականության հարցերի տարբեր մոտեցումների և հասարակության ժողովրդավարացման տարբեր աստիճանների դեպքում:

Այս ասպարեզում համաշխարհային փորձը ցույց է տվել, որ անձնակազմի կառավարման գործում կարևորն այնպիսի մոտեցումների իմացությունն է, ինչպիսիք են՝ փիլիսոփայությունը, ռազմավարությունը և մարտավարությունը, որոնք ամրագրված և արտացոլված են յուրաքանչյուր կազմակերպության համապատասխան փաստաթղթերում:

Կազմակերպության կառավարման փիլիսոփայությունն ասելով հասկանում ենք խմբային բոլոր արժեքների համադրությունը, որոնք ընդունվել են գործերի վարման ընթացքում և, որոնց հետ նույնակազմակազմում են բոլոր անդամները: Այն հաստատությունները, որոնց աշխատողները երկար ժամանակ աշխատում են հաստատուն ծրագրով, մշակում են որոշակի փիլիսոփայություն: Համաձայն այդ փիլիսոփայության մշակվում և զարգանում է իրատեսական սկզբունքների մի ամբողջություն, որն ըստ էության կոչված է համաձայնեցնելու անցյալն ու ներկան, այսինքն՝ նոր ընդունվող որոշումները համաձայնեցվում են արդեն ընդունվածների հետ, իսկ անցյալն ու ներկան՝ ապագայի հետ [1]: Պատմությունը վկայում է, որ կազմակերպության փիլիսոփայությունը, որպես աշխատողների նպատակների և վարքի կանոնների համադրություն, ի հայտ է եկել և զարգացել է ճապոնիայում, այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են՝ “Toyota”, “Mitsubishi”, “Sony”, և հետագայում նաև ԱՄՆ-ում՝ “General Motors”, “MacDonalds”, “IBM” ընկերություններում: “Sony” ընկերության նախագահ Ա. Մորիտան համարում է, որ կազմակերպության հիմնական սկզբունքները պետք է լինեն հետևյալներ.

1. հավակնող և անհավանական նպատակների ընտրություն;
2. պատերճալիզմ, այսինքն՝ այնպիսի մտածողության մշակում, որ կազմակերպության բոլոր անդամները մի ընտանիք են («ցմահ» վարձակալում, կարիերայի պլանավորում, ֆիրմային հագուստ “dress-code”);
3. ստեղծագործական մտքի խթանում և աջակցություն, խրթին պլաններից գիտակցաբար հրաժարվելու ունակություն (զուգահեռաբար հետազոտական խմբերի ստեղծում, նորարարների բացահայտում ու խթանում, հետևյալ կարգախոսի կիրառում. «Ճիշտ մարդը ճիշտ տեղում»):

Ա. Մորիտոն նոր տիպի կազմակերպությունների կառավարման փիլիսոփայական սկզբունքները ձևակերպեց հետևյալ կերպ. «Եթե հաջողվի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կստիպեն մարդկանց

միավորվել հստակ մտադրությամբ համատեղ աշխատելու և կիրառելու ընդունակությունները իրենց ցանկությունները իրականացնելու համար, ապա այդպիսի կազմակերպությունը կարող է մարդկային պահանջներին մեծ բավարարվածության ու օգտակարության գրավականը դառնալ»:

Ամերիկացի գիտնականները, վիճարկելով այդ փիլիսոփայության ձևավորման առաջնությունը, պնդում են, որ արտադրության փիլիսոփայական սկզբունքներն առաջին անգամ ձևավորել է Յ. Ֆորդը, որոնց հետևելու շնորհիվ իր նույնանուն ընկերությունը գերիշխող էր համաշխարհային ավտոմոբիլային շուկայում մինչև անցյալ դարի 30-ական թվականները:

Փորձը ցույց է տվել, որ գործում են հզոր հոգեբանական գործոններ՝ ապահովելով ընդունվող որոշումների համապատասխանությունը «կազմակերպության կառավարման փիլիսոփայությանը»: *Եթե ընդունված որոշումը դուրս է մնում այդ փիլիսոփայությունից և կասկածի տակ դնում անցյալում ընդունվածները, ապա դա պահանջում է դժվար ու բարդ ճանապարհ:*

Հարկ է նշել, որ ցանկացած կազմակերպության կառավարման փիլիսոփայության մշակման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

- աշխատողների ազգային պատկանելիությունը,
- արտադրության կամ ծառայության տեսակը,
- սեփականության ձևը,
- տնտեսության ճյուղը,
- կազմակերպության անձնակազմի թվաքանակը,
- աշխատողների բարեկեցության մակարդակը,
- անձնակազմի մշակութային առանձնահատկությունները,

կազմակերպության կառավարման գերակա ուղղությունների առկայությունը:

ԳՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. **Моритта А.**, История компании “Сони”, Прогресс, М., 1990 г.
2. **Какора Е. В.**, Актуальная кадровая информация способна влиять на успешное развитие бизнеса//Управление персоналом, 2002 г., № 12.
3. **Виханский О.С., Наумов А.И.**, Менеджмент: человек, стратегия, организации, процесс, М., МГУ, 1995 г.
4. **Виханский О.С., Наумов А.И.**, Менеджмент: Учебник. - 3-е изд. - М., Гардирики, 1999 г.
5. **Джуэлл Л.**, Индустриально-организационная психология. - СПб: Митр, 2001 г.
6. **Джордж Дж. М., Джоунс Г.Р.**, Организационное поведение. Основы управления: Учебное пособие для вузов: Пер. с англ. / **Под ред. Е.А. Климова**, М., ЮНИТИ-ДАНА, 2003 г.
7. **Златин П. А., Крекова М. М., Соколянский В. В.**, Основы управления персоналом, М., Инфра-М, 2007 г.

ЛАРИСА САВЕЛЬЕВА

*Северо-Кавказская Академия государственной службы,
аспирант, преподаватель*

КОНКУРЕНЦИЯ В СИСТЕМЕ ЗДРАВООХРАНЕНИЯ

Современное здравоохранение Российской Федерации стоит на пороге глобальных преобразований, необходимость которых обусловлена прогрессивным ухудшением показателей общественного здоровья, и неблагоприятной динамикой демографических процессов (снижение рождаемости, повышение общей, в том числе и по возрастной смертности, уменьшение средней продолжительности жизни, ухудшение физического развития детей и взрослых, рост заболеваемости). Существенное ухудшение общественного здоровья, ведущее к снижению современного и будущего трудового и оборонного потенциалов страны, на фоне нарушения исполнения специфических функций органами здравоохранения свидетельствует о кризисе существующей организации сферы медицинского обеспечения, и необходимости разрешения его в пользу удовлетворения фундаментальных потребностей общества.

Именно этому должна была служить, принятая «Концепция развития системы здравоохранения до 2020 года», где одним из приоритетных направлений государственной политики определено сохранение и укрепление здоровья населения на основе формирования здорового образа жизни и повышения доступности и качества медицинской помощи. Цели и задачи, отраженные в ней, носят долгосрочный характер и, имея большое общественное значение, требуют незамедлительного принятия мер для их достижения. Но возможно ли это? В Концепции практически полностью игнорируется система частного здравоохранения, не учитываются ее роль и возможности на рынке медицинских услуг. А ведь частная практика в данном случае является прямой альтернативой государственной и представляет собой единственную возможность конкурентного пути развития здравоохранения в стране. Странно, что в основополагающем документе подобные аспекты не учтены.

На современном этапе реформирования системы здравоохранения в России происходит ломка традиционных взглядов на оказание профессиональной медицинской помощи, как однозначную прерогативу государства, которое в течение достаточно длительного времени занимало в данной области монопольное положение. Уже сегодня можно говорить о возможности конкурентной борьбы в

данной сфере. Достаточно сильным «игроком» данного сегмента рыночных услуг может стать частное здравоохранение, которое за последние десять лет оказалось одним из самых быстрорастущих секторов российской экономики. За период с 1998 по 2008 год объем частных компаний в стране вырос в 10 раз. В среднем за последние пять лет ежегодный прирост в этой сфере составлял 25-27%. А по прогнозам аналитической компании Synopsis, темпы роста сектора не будут замедляться и 2011 году его объем может достичь 450 млрд. рублей. Свои прогнозы они обосновывали, что в стране неуклонно сокращается количество государственных лечебных учреждений. Так, по данным Росстата, в 2000 году по сравнению с началом 2008 года функционировало больше на 36% больниц, на 10% амбулаторно-клинических учреждений. Сегодня в частном здравоохранении занято около 300 тыс. медиков, что составляет почти 44% [1] от всех врачей. И не смотря на то, что многие из них являются совместителями, количество специалистов, осуществляющих коммерческую деятельность в данном направлении, характеризуется на сегодняшний день достаточно значимой цифрой. И так, конкуренция в системе здравоохранения существует. Однако можно ли считать равными условия деятельности учреждений здравоохранения, отличающихся лишь правом собственности?

Применительно к развитию частной медицины подобные аспекты можно конкретизировать следующим образом:

1. Неравенство в решении имущественных вопросов, передаче в пользование земельных участков, зданий, строений создают изначально несправедливые условия между государственными больницами и частными клиниками. Высокая арендная плата, покупка оборудования, цена сертификатов соответствия, и т.д. в дальнейшем будут включены в себестоимость оказываемых платных услуг, что не позволит достичь ценовой конкуренции. Подобные обстоятельства во многом усложняют вход на рынок лечебно-профилактических услуг и сдерживают потенциально возможную конкуренцию.

2. Различный спектр разрешенных для оказания услуг, отсутствие прозрачности в процедуре лицензирования деятельности частных клиник, завышенные требования к медико-экономическим характеристикам учреждений можно классифицировать как проявление административного уровня институционального монополизма, лоббирующего в данном случае интересы государственных компаний. Сюда же можно отнести и политику протекционизма в отношении государственных компаний фондов Обязательного медицинского страхования (ОМС), что способствует разорению частных лечебно-профилактических учреждений, особенно в усло-

виях кризиса. По данным компании Market Capital Solution (MARCS), сегмент личного страхования, которое включает Дополнительное медицинское страхование (ДМС), сократился во втором полугодии 2008 года почти в два раза с 71, 6 млрд руб. до 36 млрд. руб. (с 15% до 8%) [2], а объем ОМС, напротив, вырос. По данным аналитиков DRG, в настоящее время сектор ДМС насыщен в первую очередь корпоративными договорами – они составляют 90% портфеля страховых компаний. На долю индивидуальных клиентов приходится лишь 5-10% всех договоров. К примеру, в Москве полисом ДМС владеет лишь 4% жителей, а в Ростове-на-Дону около 1,5 [3]. В период экономического кризиса однозначно даже подобные мизерные цифры будут сокращаться. Ведь уже сейчас (апрель 2009 года) по информации Общественной палаты РФ, лишь 20% населения в состоянии оплачивать медицинские услуги. Неравенство доступа к системе обязательного медицинского страхования создает реальную угрозу развитию конкурентных процессов в данной сфере рынка, а следовательно, делает практически невозможным реализацию задачи оказания бесплатной и качественной медицинской помощи повсеместно.

3. Отсутствие четкой государственной политики в отношении частной медицины и оказания платных услуг в муниципальных и государственных медучреждениях ставит в неравные условия частно-практикующих врачей и медиков государственных и муниципальных учреждений. Платные услуги в госучреждениях фактически являются незаконными, ибо оказываются одновременно с бесплатными, одним и тем же врачом, на государственном оборудовании. В цену услуги включается лишь заработная плата персонала (без учета амортизации оборудования, аренды помещения, коммунальных услуг, которые оплачивает само государство). Подобные факты приводят к деформации рынка и дискредитации частной медицины, обвиняемой в завышении цен.

4. Неравенство в предоставлении льгот и социальных гарантий медикам учреждений различных форм собственности (предоставление отпусков, пенсий и т.д.) является сдерживающим фактором перехода большинства врачей из государственных учреждений в частные.

5. В России у частных клиник отсутствует возможность осуществлять на своей базе последипломное обучение, в рамках интернатуры или клинической ординатуры, что не позволяет им, как получать дополнительный доход, так и подобрать (вырастить) собственные кадры.

В этой связи в качестве мер, направленных на стимулировании развитие конкуренции в отрасли, необходима реализация следующих приоритетных направлений:

- Создание нормативно-правовой базы, способной обеспечить равные условия функционирования государственных и частных компаний в сфере здравоохранения (в частности принятие федерального закона «Об обязательном медицинском страховании», изменение в Положениях о лицензировании и сертификации, внесение Уточнений в правила оказания платных услуг). Выровнять на законодательном уровне возможности лечебно-профилактических учреждений различной формы собственности в образовательных (оказание услуг интернам и ординаторам) и медицинских (определение перечня, оказываемой помощи на основе материально-технической базы и уровня квалификации врачей) сферах. Ввести нормативы для оценки качества предоставляемой помощи.

- В связи с полным провалом в реализации проекта одноканального финансирования, предполагающим оплату помощи не только на основе стандартов, но и с учетом качества оказанных услуг (функционирует с 2007 года в 19 регионах страны) внести коррективы в Концепцию развития здравоохранения. Рассмотреть возможность электронных медицинских полюсов обязательного медицинского страхования, для возможности оплаты услуг в реальном режиме времени. Создание реальных условий для потребительского выбора гражданами страховщиков и медицинских учреждений.

- Запретить оказание платных услуг на базе государственных медицинских учреждений без учета амортизации оборудования, использования помещения, коммунальных затрат. При этом практикующий врач не должен использовать время работы по основному трудовому договору. Ввести жесткий контроль за деятельностью лечебно-профилактических учреждений по оказанию платных услуг, входящих в обязательное медицинское обеспечение.

- Сделать процедуру лицензирования медицинских услуг прозрачной, установить равные требования к частным и государственным (муниципальным) медицинским учреждениям, определить временные рамки получения документов, держать на контроле случаи необоснованного сдерживания открытия новых частных клиник.

- Выравнивание условий труда и приобретения льгот медицинскому персоналу в независимости от формы собственности учреждения.

Подобные меры позволят активизировать конкурентные процессы в системе здравоохранения, что в свою очередь приблизит уровень оказания медицинской помощи к международным медико-экономическим стандартам.

Обеспечение здоровой конкурентной среды на сегодняшний день является необходимым условием трансформационных преоб-

разований российского здравоохранения, результатом которых должна стать новая система, результативно функционирующая в рыночных условиях, приоритетом деятельности которой будет улучшение качества жизни путем трехэтапного оказания помощи (недопущения возникновения заболеваний, своевременного (на начальных стадиях) их выявления и адекватного лечения)

Сформированная модель будет соответствовать быстро изменяющимся реалиям современного общества, упорядочит взаимоотношения между производителями медицинских услуг и их потребителями. Сферы оказания помощи сохранения и восстановления человеческого здоровья должны градуироваться независимо от формы собственности, а формироваться лишь с учетом реальных возможностей лечебно-профилактического учреждения. Идеальным итогом конкуренции в сфере здравоохранения должен явиться крепкий тандем государственных и частных клиник по оказанию своевременной и адекватной помощи человеку.

ЛИТЕРАТУРА

1. Рассчитано по данным Росстат - <http://www.gks.ru>.
2. **Бруз Т.**, О частном по честному.\ \ Медицинский вестник, 2009 г., № 11, с. 7.
3. По данным статистического агентства ЮНКТАД - <http://stats.unctad.org/handbook>.
4. J. Industrial Organization. N.Y. 1959, **Carlin W., Schaffer M., Seabright P. A.**, Minimum of Rivalry: Evidence from Transition Economies on the Importance of Competition for Innovation and Growth, Contributions to Economic Analysis & Policy: Berkley Electronic Press \ <http://www.bepress.com/bejeap/contributions/vol3\iss1\art17>; Розанова Н.М. Конкурентный процесс в современной рыночной экономике. М: Макс Пресс, 2001 г.; **Князева И.В.** Процессы концентрации на товарных рынках и методы антимонопольного регулирования.- Новосибирск: СибУПК, 2001 г.
5. **Мизес Л.** фон. Человеческая деятельность. Трактат по экономической теории.- М.: ОАО НПО Экономика, 2000 г., с.638.
6. **В. Новиков**, «Влияние российского антимонопольного законодательства на экономическое развитие», «Вопросы экономики», 2003 г., № 9, с.33-48.
7. **Posner R.**, The Social Cost of Monopoly and Regulation.- Journal of Political Economy.- 1975,vol.83 – p.807-827.
8. **Савельева Л.В.**, Исследование теоретических основ антимонопольной политики в современной России \ Управление и общество: материалы 2 Всероссийской научно-практической конференции молодых ученых и студентов «Управление и общество»\Под. Ред. **Запорожченко О.А.** Тамбов: Изд-во Чеснокова А.В., 2007 г.

ԼԵՎՈՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի հայցորդ

**ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կառավարումն ի սկզբանե բնորոշ է հասարակությամբ: Այն անխուսափելիորեն առաջանում է այնտեղ, ուր առկա է թեկուզև մի քանի մարդկանց փոխհարաբերություն՝ նրանց համար ընդհանուր համարվող խնդրի լուծման նպատակով: Կառավարումն իրենից ներկայացնում է որոշակի հասարակական ինստիտուտ: Այն հանճարեղ պատմական ստեղծագործություն է, մշակութային արժեք, որը մարդկանց հնարավարություն է տվել դառնալու այնպիսին, ինչպիսին նրանք այսօր ներկայանում են: Դրանում արտացոլվում են մարդկության գիտելիքները, կենսափորձը, տաղանդը, երազանքները, արժեքները և նպատակները: Եվ վերջապես, կառավարումը ոչ այլ ինչ է, եթե ոչ իշխանության գործնական իրացում լայն սոցիոլոգիական իմաստով: Այն հասարակության մեջ գոյություն ունի օբյեկտիվորեն, աստիճանակարգված կազմակերպության տեսքով [1, Կ. 45]:

Կարգավորող անկախ պետական մարմինները հանրային կառավարման համակարգի առավել քիչ ուսումնասիրված, իրենց առաքելությամբ և գործառնության շահանձնահատկություններով տարբերվող կառույցներ են: Մասնագիտական գրականության մեջ այդ մարմինները հանդիպում են նաև ապակենտրոնացված պետական մասնագիտացված մարմիններ, անկախ պետական մարմիններ, անկախ կարգավորող գործակալություններ անվանումներով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում դրանք սովորաբար անվանվում են օրենքների հիման վրա ստեղծված մշտապես գործող մարմիններ(հանձնաժողով, խորհուրդ, ծառայություն) և այլն:

Անկախ պետական մարմիններն ավելի մեծ տարածում ու ազդեցություն են ձեռք բերում պետական կառավարման համակարգում: Նույն կերպ, ինչպես նախագահի ինստիտուտը չի կարելի դասել իշխանության երեք դասական ձևերից որևէ մեկին, այնպես էլ դժվար է ենթադրել անկախ պետական մարմինների պատկանելիությունը որևէ ճյուղի [2, Կ.153]: Սակայն լիազորությունների առավել խորը վերլուծությունը, ըստ էության, թույլ է տալիս դրանք «տեղավորել» գործադիր թևի շրջանակում:

Միաժամանակ հարկ է նաև նշել, որ անկախ պետական մարմնի ստեղծումն երբեմն հանգեցնում է ոչ այնքան անկախ կարգավորման, որքան պարզապես անկախ մարմնի ստեղծման [3, Կ. 452]: Այլ խոսքով, վերոնշյալ մարմինների անկախ գործելաոճի ներուժը կարող է

բավական թույլ լինել: Վերջինիս հավանականությունն ավելի է մեծանում շուկայական հարաբերությունների անցման փուլում գտնվող, իշխանության թևերի տարանջատման ապահովման հարցում դեռևս անելիքներ ունեցող այնպիսի երկրներում, ինչպիսին է Հայաստանը:

ՀՀ-ում պետական կառավարման մակարդակում այդ մարմինների թվին կարելի է դասել կենտրոնական բանկը, վերահսկիչ պալատը, դատախազությունը, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, մարդու իրավունքների պաշտպանը, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ազգային վիճակագրական ծառայությունը, քաղաքացիական ծառայության խորհուրդը, կենտրոնական ընտրական հանձնաժողովը և այլն:

Իսկ ի՞նչ է կարգավորումը: Արդյո՞ք դրանք կանոններ են, որոնք փորձում են վերահսկել և կարգավորել մարդկային վարքագիծը [4, p.1]:

Մի շարք տեսագործնական վերլուծություններում նախ և առաջ բարձրացվում է հետևյալ հարցադրումը. որքանով և արդյոք անկախ կարգավորող գործակալությունները կարող են օգտակար լինել հասարակության տեսանկյունից: Ըստ որոշ տեսաբանների՝ նման մարմինների առկայությունը և արդյունավետ գործունեությունն անհրաժեշտ պայման են ազատականացման ու ապապետականացման քաղաքականության հաջող և վստահելի իրականացման համար, մյուսները փաստում են, որ անկախությունը կարգավորողներին դարձնում է չափազանց ուժեղ ու վտանգի է ենթարկում հասարակության առջև պատասխանատվությունը:

Հետազոտողների մի խումբ էլ ենթադրում է, որ օրենսդիրը, պատվիրակելով լիազորությունները նշված մարմիններին, փորձում է մեծացնել իր սեփական ազդեցությունը: Այսպիսով, կարգավորող անկախության օգտակար կամ խնդրահարույց լինելը և այն հարցը, թե արդյոք այդպիսի անկախությունը ցանկալի է թե ոչ, շարունակում է մնալ խնդրահարույց:

Սովորաբար կարգավորող մարմինների անկախության աստիճանի որոշման համար կիրառվում են դասիչ (ինդեքս), որը ներառում է չորս հիմնական բաղկացուցիչ.

- 1) կարգավորող մարմինների անկախությունը կառավարությունից,
- 2) անկախությունը շահագրգիռ կողմերից (անգլ. stakeholders),
- 3) կարգավորողների անկախությունը որոշումներ կայացնելիս,
- 4) կառուցվածքային-կազմակերպական ինքնավարություն:

Անկախության դասիչը կարելի է կիրառել ինչպես տարբեր երկրների համանման անկախ պետական մարմինների (օրինակ՝ կենտրոնական բանկերի), այնպես էլ միևնույն երկրի տարբեր անկախ պետական մարմինների անկախության աստիճանը գնահատելու և համեմատելու համար: Օրինակ՝ համանման ուսումնասիրություն է կատարվել Համաշխարհային բանկի կողմից եվրոպական ութ երկրների էներգետիկ ոլորտը կարգավորող մարմինների անկախության աստիճանը գնահա-

տելու և վերլուծելու համար: Այնուամենայնիվ, այս ցուցանիշը դեռևս ընդունված չէ որպես անկախության աստիճանի համընդգրկուն չափորոշիչ: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են վարչական կառավարման մշակույթը և քաղաքական ոճը, դուրս են մնացել վերոնշյալ ձևաչափից: Չարկ ենք համարում նշել, որ շատ ավելի բարդ է գնահատել անկախ կարգավորող մարմինների ոչ թե ֆորմալ, այլ փաստացի անկախությունը, որը կարող է զգալիորեն տարբերվել օրենսդրությամբ նրան շնորհված անկախ կարգավիճակից: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ անկախ պետական մարմինների ընդհանուր բնութագրիչներին գումարվում են նորերը՝ պետականաշինության ոչ այնքան հարուստ փորձը, ոչ հասուն շուկայական հարաբերությունների առկայությունը և անկախ պետական մարմինների տարիքը: Գաղտնիք չէ, որ այդ երևույթները բնորոշ են ՀՀ անկախ պետական մարմիններին: Եվս մեկ հանգամանք, որը, կարծում ենք, կամբողջացնի անկախ պետական մարմինների փաստացի անկախության երևույթը. կոռուպցիան լուրջ արգելք է այդ կառույցների՝ իրենց օրենքով շնորհված լիազորությունների իրականացման, անկախության լիարժեք դրսևորման համար: Չանտեսելով հանդերձ առաջարկվող ձևաչափի բացերը՝ անկախության դասիչը կարող է ծառայել որպես արդյունավետ գործիք տեսագործնական օգտակար հետազոտությունների և եզրակացությունների համար:

Անկախ պետական մարմիններին վերաբերող մյուս առանցքային հիմնահարցը հետևյալն է. ինչից՞ ելնելով է պետությունը, ի դեմս օրենսդիր իշխանության, անկախ մարմնին պատվիրակում ինքնուրույն որոշում կայացնելու լիազորություն: Հիմնահարցը դիտարկվում է երկու տեսական հայեցակարգով. առաջինը՝ նորմատիվայինն է. արդյո՞ք անկախ պետական մարմինները կարող են օգտակար լինել սոցիալական արդարության ապահովման տեսանկյունից: Մյուս տեսական մոտեցումը շեշտը դնում է ռացիոնալ ընտրության և լիազորող-կատարող (անգլ. principal-agent) վերլուծության վրա: Այստեղ հարցադրումն հետևյալն է. ինչպիսի՞ գործոններից ելնելով է պետությունը պատվիրակում իր լիազորություններն անկախ պետական մարմիններին:

Չորնը (1995թ.) համարվում է պատվիրակման հիմնախնդրում ռացիոնալ ընտրության մոտեցման ներկայացուցիչը [5, p.17]: Որպես Չորնի վերլուծության սկզբնակետ՝ կարելի է համարել իրադրությունը, երբ օրենսդիրը նման քաղաքականություն նախաձեռնելու որոշում է կայացնում: Օրենսդիր մարմնի անդամներն ընկալվում են որպես ռացիոնալ խաղացողներ, ովքեր իրենց վերընտրության ժամանակ հասարակության որոշ խմբերից աջակցություն են ակնկալում: Համաձայն Չորնի տեսության՝ առկա է չորս գործոն, որոնք դրդում են օրենսդիրն պատվիրակել լիազորություններն անկախ կարգավորող մարմիններին.

ա) որոշման ռեսուրսներ (որոշումների կայացման գործընթացում ժամանակային և այլ ռեսուրսներ),

բ) բողոքարկման ռեսուրսներ (վերաբերում են այնպիսի ռիսկերի նվազեցմանը, երբ որոշումը կարող է չեղյալ համարվել կամ անտեսվել օրենսդրի կողմից),

գ) գործակալության ռեսուրսներ (վերաբերում են որոշման մեկնաբանումը և կիրառումը գործակալին թողնելուն),

դ) անորոշության ռեսուրսներ (կապված են որոշման արդյունքի և նրա կիրարկման հետ):

Վերոնշյալ գործոնների (ռեսուրսների) համակցությունները, ըստ Չորնի, կարող են լինել որոշիչ՝ օրենսդրի կողմից նման մարմիններին լիազորություններով օժտելու նպատակահարմարությունը գնահատելիս: Իրականում, սակայն, առկա են տարբեր տիպի գործառնության ճնշումներ, որոնք կարող են վերոնշյալ գործոնները մղել երկրորդ պլան:

Ըստ Մարկ Թետչերի (2001թ.)՝ որոշումների վստահելի իրականացումը կարող է դիտվել որպես գործառնության ճնշում: Օրենսդիրը վերոնշյալ խնդրին լուծում տալու համար կարող է ստեղծել նման կառույց և օժտել լիազորություններով՝ միաժամանակ ցույց տալով իր հավատարմությունն իշխանությունների տարանջատմանը և դրսևորել անկողմնակալություն կարգավորման գործընթացների: Թետչերն առանձնացնում է նաև երեք այլ գործառնության ճնշումներ.

- մեղքի տեղափոխում,
- կարգավորման մասնագիտական բնույթ,
- կարգավորումը որպես քաղաքականության իրականացում:

Առաջին գործառնության ճնշումը հնարավորություն է տալիս օրենսդիրին ոչ ժողովրդահաճ որոշումների կայացման և (կամ) անհաջող կենսագործման մեղքը «բարդել» անկախ կարգավորողի վրա: Այս դրույթն առկա է նաև մեկ այլ տեսաբանի՝ Դուպույիսի մոտ: Ըստ վերջինիս՝ քաղաքական գործիչները կարող են օգտագործել պատվիրակումը որպես պատասխանատվությունից խուսափելու միջոց՝ կարգավորող պետական մարմնին մեղադրելով տեղի ունեցածի կամ չունեցածի մեջ: Կարծում ենք, սակայն, որ այս դեպքում տեղին է ընդգծել կառավարման տեսության այն հայտնի դրույթը, որ պատվիրակումը չի ազատում պատասխանատվությունից:

Մասնագիտական կարգավորման՝ արհեստավարժություն ակնկալող բնույթը նույնպես կարող է գործել որպես ճնշում պատվիրակման համար, առնվազն երկու ճանապարհով. նախ և առաջ, առկա են տեղեկատվական խնդիրներ, որոնք պահանջում են մեծ փորձառություն կարգավորողի կողմից, և երկրորդ, պատվիրակելիս քաղաքական գործիչներն ազատվում են «խրթին ու ձանձրացնող», ժողովրդի հետ լայն շփում չպահանջող խնդիրների լուծումից: Պատվիրակման հիմնախնդիրն ավելի անբողջական ներկայացնելու համար պետք է հաշվի առնվեն նաև կազմակերպական ու կառուցվածքային գործոնները:

Այն երկրները, որոնց հանրային կառավարման համակարգում շեշտը դրվում է վարչական կառավարման և քաղաքականության

տարանջատման վրա, թերևս, ամենամեծ հնարավորությունն ունեն՝ ձևավորելու անկախ պետական մարմիններ:

Անկախ կարգավորող» և «կարգավորվող անկախություն» հասկացությունների համար կան մի շարք սահմանափակումներ: Ըստ Ֆեսլերի՝ կարգավորող անկախությունը հաճախ կիրառվում է որպես վերահսկողության անկախություն կառավարությունից, ինչպես նաև ոլորտի ընկերություններից [5, p.20]: Ֆեսլերի սահմանումն անկախության գաղափարը ընկալում է ոչ միակողմանի՝ ի նկատի ունենալով անկախությունը ոչ միայն կառավարությունից, այլև կարգավորվող ոլորտի ընկերություններից:

Շեշտը դնելով այնպիսի որակների վրա, ինչպիսիք են՝ ազնվությունն ու անկողմնակալությունը, Ֆեսլերը դառնում է Ստեռնի (1997թ.) և Թ. Գեյ-Քոլի (1988թ.) համախոհը, ովքեր մեծապես կարևորում են անկախ կարգավորող մարմինների դերը շահերի հավասարակշռման և բոլոր մասնակիցների համար խաղի կանոնները հասկանալի դարձնելու գործում: Ոլորտի մի շարք տեսաբաններ հստակ տարբերակում են կարգավորիչ գործառույթներ ունեցող և որոշումներ կայացնող անկախ կարգավորող մարմինները զուտ խորհրդատվական մարմիններից: Համաձայն այս տեսակետի՝ անկախ պետական մարմինները պետք է ունենան որոշումներ կայացնելու բացառիկ իրավունքներ, որոնք պարտադիր են կարգավորվող ոլորտում իրագործման համար: Լավագույն դեպքում անկախ կարգավորող մարմինները չպետք է հանդես գան որպես ծառայություններ մատուցող կամ իրականացնեն սովորական վարչական աշխատանք: Փոխարենը դրանք կոչված են սահմանել կանոններ ու կարգեր, նպաստել օրենսդրի կողմից դրված նպատակների կատարմանը: Ի լրումն վերոնշյալի՝ անկախ կարգավորող մարմինները հաճախ գործում են որպես վճիռ կայացնող խորհուրդներ: Այսպիսով, անկախ մարմինները համակցում են երեք գործառույթ, որոնք սովորաբար առանձին են. կանոնների սահմանում, որոշումների կատարում և վեճերի լուծում:

Գրիվը (2002թ.) առանձնացնում է կարգավորող անկախությանը վերաբերող հինգ հարցադրում [5, p.21].

1. արդյո՞ք առկա են հատուկ դեպքեր, երբ կառավարությունը կարող է չեղյալ համարել այդ մարմնի ընդունած որոշումը,
2. արդյո՞ք կառավարությունը կարող է ընդունել կարգավորմանն առջվող ռազմավարական որոշումներ,
3. արդյո՞ք կադրային որոշումներն ընդունվում են կենտրոնական վարչակազմի կողմից,
4. կարո՞ղ է արդյոք կառավարությունը միանձնյա քաղաքականություն սահմանել անկախ կարգավորող մարմինների համար,
5. արդյո՞ք տվյալ անկախ մարմնի բյուջետային հայտը խորհրդարան է ներկայացվում պետական բյուջեի նախագծի ոչ առանձին տողով:

Որքան շատ են վերոնշյալ հարցերի բացասական պատասխանները, այնքան մեծ է տվյալ մարմնի անկախության աստիճանը: Գրիվի սահմանման մեջ շեշտը դրվում է կառավարություն-անկախ կարգավորող հարաբերությունների վրա: Մինչդեռ դուրս են մղվում կամ անտեսվում կարգավորող-կարգավորվող ոլորտ հարաբերությունները: Վերջին գործոնը ներառված է Սմիթի (1987թ.) սահմանման մեջ: Նա անկախությունը բնորոշում է որպես երեք տարրերի համակցություն.

ա) «բավարար» հեռավորության հարաբերություններ (դիստանցիա) կարգավորվող ընկերությունների, սպառողների և այլ շահագրգիռ կողմերի հետ շփումներում,

բ) «բավարար» հեռավորության հարաբերություններ քաղաքական իշխանություններից,

գ) կազմակերպական-կառուցվածքային ինքնուրույնության բաղադրիչներ, ինչպիսիք են՝ պլանավորված բյուջեն և ընդհանուր քաղաքացիական ծառայության աշխատավարձի համակարգից տարբերվող վարձատրություն, բարձրագույն կառավարման անկախ մարմնի առկայություն:

Սմիթի սահմանումն առավելություն ունի այնքանով, որքանով նա շեշտը դնում է ինչպես քաղաքական իշխանություն-անկախ կարգավորող մարմին, այնպես էլ շահագրգիռ կողմ-անկախ կարգավորող մարմին հարաբերությունների վրա՝ չանտեսելով նաև կազմակերպական-կառուցվածքային գործոններն անկախության հարցում: Կարելի է առանձնացնել անկախության առնվազն երեք սպառնալիք.

1) առկա է ռիսկ, որ կարգավորվողը կարող է փորձել «իրենցով անել» կարգավորողներին՝ մասնավորապես կաշառելով նրանց կամ խոստանալով բարձր վարձատրվող աշխատանք պաշտոնաթողությունից հետո,

2) առկա է ռիսկ, երբ ոլորտի ներկայացուցիչները կարող են օգտագործել ոչ լիարժեք տեղեկատվությունը՝ շփոթության մեջ գցելով կարգավորողին,

3) կարգավորողի անկախությունը կարող է սահմանափակվել ուղղակի կամ անուղղակի մասնավոր ճյուղային շահերով. օրինակ, կարգավորողը սեփականության իրավունքով ունի կարգավորվող ոլորտում գործող ընկերության բաժնետոմս:

Մշակվել և զարգացվել են տեսագործնական և օրենսդրական մի շարք միջոցառումներ՝ չեզոքացնելու վերոնշյալ ռիսկերը: Մասնավորապես, առկա են օրենսդրորեն ամրագրված դրույթներ, որոնք արգելում են անկախ պետական մարմինների ղեկավարներին աշխատել կարգավորվող ոլորտում ինչպես իրենց պաշտոնավարման ժամանակ, այնպես էլ պաշտոնաթողությունից հետո: Նման սահմանափակումը նպատակ ունի արգելք ստեղծել կարգավորողի և կարգավորվողի ստվերային կապերի դեմ ու կանխել կարգավորողին՝ պաշտոնաթողությունից հետո որևէ ընկերությունում զբաղեցնել բարձր վարձատրվող պաշտոն: Չնայած այդ միջոցառումներն առաջին հայացքից կա-

րող են տեղին թվալ, սակայն դրանք գործնականում կարող են միաժամանակ դժվար կիրառելի լինել: Կարգավորվող ճյուղում նախկին կարգավորողի աշխատատեղ զբաղեցնելու սահմանափակումը կարող է լուրջ խոչընդոտ դառնալ տվյալ պետական մարմնի համար որակյալ կադրերի հավաքագրման գործում: Սահմանափակումը կարող է բացասաբար ազդել նաև մասնավոր հատվածում պաշտոնաթող կարգավորողի գիտելիքների օգտագործման համար: Հարկ է նշել, որ այս սահմանափակումը բացակայում է ՀՀ անկախ մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենքներում: Որպես ոչ այնքան խիստ միջոցառում է հանդես գալիս կարգավորողի համապատասխան վարձատրությունը: Բարձր աշխատավարձը կարող է մեծացնել անձի անկողմնակալությունն ու անկախությունը, սահմանափակել կաշառք վերցնելու հակումները, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական մարմինների կողմից:

Անկախության հասնելու ճանապարհին ոչ պակաս կարևոր գործոններ են մարմնի կառուցվածքային-կազմակերպական առանձնահատկությունները: Կազմակերպությունները մեծացնում են իրենց ինքնուրույնությունը, երբ կարողանում են առավելագույնս վերահսկել արտաքին ու ներքին միջավայրի գործոնները: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է թե՛ ֆինանսական-մյուսական, թե՛ մարդկային ռեսուրսներին:

Քննարկված միջոցառումներն ունեն ձևական (ֆորմալ) բնույթ և չեն ներառում այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ վարքականոցի նորմերը, ազգային ու մշակութային առանձնահատկությունները: Առկա են դեպքեր, երբ ձևական կանոնները ձախողվում են՝ իրենց տեղը զիջելով ոչ ձևականներին:

Գրեթե մեկ հարյուրամյակ է, ինչ ԱՄՆ-ում անկախ կարգավորող գործակալությունները կարևոր դերակատարում ունեին: Եվրոպայում դրանք կարևոր նշանակություն ունեին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ՋԼՄ-երը, տնտեսական մրցակցության, քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, սակայն դրանց դերը նվազ էր ենթակառուցվածքային ճյուղերում և ֆինանսական ոլորտում, որտեղ շարունակվում էր տիրապետող մնալ հանրային սեփականությունը: Այնուամենայնիվ, վերջին երեք տասնամյակում եվրոպական ենթակառուցվածքային ճյուղերում ազատականացման և ապապետականացման գործընթացներն օբյեկտիվորեն հանգեցրին բազմաթիվ անկախ պետական մարմինների ի հայտ գալուն Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ եվրոպական երկրներում: Հարկ է նաև նշել, որ այս գործընթացին նոր որակ հաղորդեց և բուն Եվրամիության մարմինների համակարգում նմանատիպ կառույցների ձևավորումը՝ Եվրոպական կենտրոնական բանկ, ԵՄ վերահսկիչ պալատ:

Ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու մտադրություն ունեցող ընկերություններն ակնկալում են կանխատեսելիության բարձր մակարդակ, ներդրումների պաշտպանության հստակ երաշխիքներ, արդարացի սակագներ և երաշխավորված շահույթ: Գաղտնիք

չէ, որ հանրային ծառայությունները (էներգամատակարարում, ջրամատակարարում և այլն) պահանջում են բավական լուրջ կապիտալ ներդրումներ, եզակի բնույթ ունեցող երկարաժամկետ ակտիվներ: Ոչ պակաս էական և արդյունավետ կարգավորում ակնկալող գործոններ են բնապահպանական, բնօգտագործման հիմնախնդիրները, տեղեկատվության ազատությունն ու շուկայի թափանցիկությունը:

Վերոնշյալ մարմինների եվրոպացի ջատագովները մասնավորապես փաստում են դրանց առավելություններն այլ տիպի կարգավորող կառույցների նկատմամբ՝ շեշտը դնելով մասնագիտական փորձառության և ճկունության վրա: Լինելով քաղաքականապես չեզոք՝ դրանք կոչված են խթանելու նաև ակտիվ հասարակական բանավեճերը և լսումները, փոխադարձ շփումները քաղաքացիական հասարակության այլ կառույցների հետ՝ դրանք դարձնելով ավելի դյուրին և թափանցիկ:

Այսպիսով, կարգավորող անկախ պետական կառույցները կոչված են մեծացնելու վստահությունը կարգավորման նկատմամբ և վերածել այն արդյունավետ և գործուն համակարգի բարեփոխումների գործընթացի հաջողության ապահովման գործում:

Որպես անկախ պետական մարմինների անկախության կողմ և դեմ փաստարկներ բերվում են վերահսկողությունը, տեղեկատվական ոչ լիարժեքությունը, պատասխանատվությունը, օրինականությունը, անկողմնակալությունը, ինչպես նաև կապն անկախության և կարգավորող ոլորտի ինստիտուցիոնալ հատկանիշների միջև: Մի շարք հեղինակներ կարծում են, որ անկախ կարգավորողները հատկապես խոցելի են դառնում այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է մարմնի կառավարման կազմակերպական կառուցվածքի և դրա նկատմամբ վերահսկողությանը: Պատասխանատվության տեսանկյունից կարևորվում է այդ մարմինների բարձրագույն կառավարման բնույթը՝ կոլեգիալ, թե միանձնյա:

Տեսաբաններ Սեյոնը, Յոլսկոտտը և Յուդը ընդգծում են, որ անկախ կարգավորողի հայեցակարգը կարող է էականորեն տարբերվել իրականությունից: Եթե նույնիսկ իրականում տեսականորեն չվերահսկվեն այդ մարմինները, վերջիններս պարտավոր են և ստիպված են համագործակցել ոլորտի մասնակիցների հետ, ներառյալ պետական մարմինները և ոլորտի կարգավորվող (վերահսկվող) ներկայացուցիչները: Հարկ է նշել նաև, որ անկախությունը և պատասխանատվությունը բոլորովին էլ անհամատեղելի հասկացություններ չեն: Թերևս չկա պատասխանատվություն առանց անկախության, և հակառակը: Որպես պատասխանատվության ամենակարևոր աղբյուր է դիտվում տվյալ մարմնին կամ մարմիններին առնչվող օրենքները, որոնք, ճիշտ է, սահմանելով որոշակի պետական մարմնի անկախությունը, միևնույն ժամանակ փաստում են սահմանափակումների և պատասխանատվության մասին: Կարևոր է նաև անդրադառնալ պատասխանատվության ոչ ֆորմալ մեթոդներին: Գաղտնիք չէ, որ տվյալ ոլորտի փորձագետ-

տի հեղինակությունը շատ հաճախ ավելի կարևոր է հասարակության համար, քան ձևական օրինականությունն ու անկախությունը: Ստեռնը և Թետչերն ընդգծում են թափանցիկության և հաշվետու լինելու կառուցակարգերը որպես պատասխանատվության հասնելու լավագույն ռազմավարություններ: Անկախ փորձագետները որոշումներ պետք է կայացնեն ռացիոնալության, հակադիր շահերի հավասարակշռման հիման վրա և, ի վերջո, օժանդակեն հանրային շահին:

Կարգավորող անկախ պետական մարմինների ինստիտուցիոնալ և կառուցվածքային տեսքն ունի մեծ կարևորություն: Միաժամանակ հնարավոր չէ նշել համընդհանուր և իդեալական կազմակերպական կառուցվածք: Օրինակ՝ փոքր երկրներում, որոնք ունեն կարգավորող ճյուղին առնչվող մի քանի տարվա կենսագրություն, դա կարող է լինել անհնարին, պարզապես սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսների պատճառով: Կարևոր է նաև, որ կազմակերպական կառուցվածք ընտրելիս համընդհանուր սկզբունքները դիտարկվեն՝ հաշվի առնելով տվյալ երկրի առանձնահատկությունները: Չվիճարկելով, որ անկախությունը կարող է ունենալ ինչպես օգտակար, այնպես էլ խնդրահարույց հետևանքներ՝ չափազանց կարևոր է մտցնել անկախության խելամիտ և համակարգային սահմանափակումներ՝ կարևորելով, թե ինչպես դա անել:

Ենթակառուցվածքների ոլորտում գործող կարգավորող անկախ պետական մարմինները կոչված են ներդաշնակեցնել արտադրող-սպառող-պետություն-հասարակություն՝ հաճախ հակադիր շահեր ունեցող համակարգերի հարաբերությունները: Հաճախ անկախ մարմինները փոխարինում են կառավարությանը վերահսկողության հարցում: Պետության՝ որպես սեփականատիրոջ կամ կոմունալ ծառայությունների պոտենցիալ մատակարարի և որպես կարգավորողի դերերի տարանջատումը չափազանց կարևոր է ազատականացման գործընթացի հուսալիության համար: Անկախ պետական մարմինների ջատագովները հաճախ են ընդգծում, որ դրանք կարող են սահմանափակել քաղաքական միջամտությունը գործարար որոշումներում և կարգավորման խնդիրներում:

Անկախ պետական մարմինները հաճախ դիտվում են որպես սահմանադրական շեղումներ՝ անոմալիաներ: Անկախ կարգավորող կառույցների մեծ մասը միաժամանակ օժտված են այնպիսի լիազորություններով, որոնք կարող են կրել ինչպես օրենսդիր և գործադիր, այնպես էլ դատական բնույթ: Անկախ պետական մարմինների գործունեության մասին տասնամյակներ շարունակ եղել են ինչպես բացասական, այնպես էլ դրական գնահատականներ ու կարծիքներ: Մի շարք փորձագետներ էլ առաջարկում են այդ մարմինները պարզապես վերացնել՝ առաջնորդվելով այն մտքով, որ դրանք կարող են ձախողել տնտեսության կարգավորման ավանդական մեխանիզմը: ակնհայտ է, որ, անկախ տեսակետների բազմազանությունից, կարգավորող մարմինների գործառույթները ենթակա են անընդհատ կատարելագործ-

ման: Չպետք է թերագնահատել նաև անկախ կարգավորող մարմինների դերը ինչպես տնտեսական ճգնաժամերը կանխելու, այնպես էլ դրանց հետևանքները մեղմելու և հաղթահարելու գործում: Այս կարևոր կառույցների կայացումը, գործունեության իրական երաշխիքների ապահովումը լուրջ նախադրյալ է անցումային փուլում գտնվող երկրներում երկրորդ սերնդի տնտեսական բարեփոխումների հաջող իրականացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Административное право, *под ред. Атаманчука Г.В.*, М., 2003 г., с. 45.
2. Государственное управление, *под ред В.А. Козбаненко*, М., 2002 г., Т.1, с.153.
3. **James Q. Willson**, American Government, Massachusetts, 1992, p.452.
4. Why Regulatory governance matters, CRC Policy Brief, Number 2, 2004 г., p. 1.
- 6/ **Katja Sanden Johannsen**, Regulatory Independence in theory and Practice, A Survey of Independent Energy Regulators in Eight European countries, World Bank working paper, 2003. !
4. և 5. աղբյուրը`www.worldbank.org.

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ինչպես հայտնի է, դեռևս մերկանտիլիստական տեսության ժամանակներից յուրաքանչյուր երկրի զարգացման հիմնական գրավականներից մեկը դիտվել է արտահանման ծավալների բարձր մակարդակի ապահովումը, որը կհանգեցնեի այդ երկրի բարեկեցության ընդհանուր աճին: Այդ պատճառով դարեր շարունակ ցանկացած պետության հիմնական մտահոգություններից եղել է արտահանման համար նպաստավոր պայմանների ստեղծումը և համապատասխան կառուցակարգերի մշակումը, որոնց ձևերը տարիների ընթացքում փոփոխվել ու կատարելագործվել են: Այժմ այլ պետությունների կողմից կիրառվում են արտահանման խթանման մի շարք ձևեր, որոնք կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ խմբերի մեջ.

- արտահանման վարկավորում,
- արտահանման երաշխավորություն և ապահովագրություն,
- արտահանողների գործառական ծախսերի նվազեցում:

Դիտարկենք մի շարք երկրների՝ վերոնշյալ ուղղություններով իրականացվող ծրագրերը: Այսպես՝ արտահանման վարկավորման և ապահովագրության նշանակալի ինստիտուցիոնալ համակարգ է գործում ԱՀԿ անդամ գրեթե բոլոր զարգացած երկրներում՝ ներառյալ ԵՄ անդամ պետություններում, որի միջոցով արտահանողները իրենց գործունեության իրականացման համար կարող են զգալի ֆինանսական աջակցություն ստանալ: Չեխիայի օրինակով դիտարկենք այդ մարմինների կողմից տրամադրվող ծրագրերը: Երկրում գործում են արտահանման վարկավորման և ապահովագրության հետևյալ կառույցները.

- Չեխիայի արտահանման բանկ, որը պետական կազմակերպություն է և տրամադրում է արտահանման վարկեր ու ֆինանսավորում դրանք, ինչպես նաև տրամադրում է այլ ծառայություններ չեխական արտահանողներին,
- արտահանման երաշխավորության ու ապահովագրության կազմակերպություն, որը նույնպես պետական կազմակերպություն է, և որի նպատակն է ապահովագրել արտահանման վարկերը Չեխիայից ապրանքների ու ծառայությունների արտահանման ընթացքում:

Չեխիայի արտահանման բանկը հիմնադրվել է 1995 թվականին և հանդիսանում է արտահանման քաղաքականության անբաժանելի մասը: Բանկի ծառայություններից կարող են օգտվել ինչպես արտահանման ներուժ ունեցող տեղական արտադրողն ու արտահանողը, այնպես էլ արտասահմանյան գործընկերը: Չեխիայի արտահանման բանկի կողմից չեխական արտահանողներին տրամադրվող հիմնական ծրագրերից են.

1. արտահանմանն ուղղված ապրանքների արտադրության վարկ, որը տրվում է՝

- հումքի, նյութերի և այլ բաղադրիչների ձեռքբերման,
- հումքի և նյութերի նախնական առաքման,
- անուղղակի ծախսերի,
- անհատական ծախսերի (աշխատավարձ, սոցիալական և առողջապահական ապահովագրություն),
- հիմնական կապիտալի ձեռքբերման համար,

2. առաքողին տրվող արտահանման ուղղակի վարկ,

3. սպառողին (ստացողին) տրվող արտահանման ուղղակի վարկ,

4. արտասահմանում ներդրում իրականացնելու համար վարկ և

այլն [1]:


Արտահանման երաշխավորության ու ապահովագրության կազմակերպությունը, հիմնադրված 1992 թվականին, առաջարկում է չեխական արտահանողների համար մի շարք ապահովագրական ծրագրեր՝ ուղղված պաշտպանելու նրանց քաղաքական և առևտրային ռիսկերից: Այսպես՝ կազմակերպության կողմից առաջարկվող ծրագրերը հիմնականում համահունչ են Չեխիայի արտահանման բանկի կողմից տրամադրվող գործիքներին: Ստորև բերված զծապատկերում ներկայացված են կազմակերպության կողմից 2008 թվականին առանձին ծրագրերի մասնաբաժիններն ընդհանուր մատուցված ծառայություններում [2]:

2008 թվականին Արտահանման բանկի և Արտահանման երաշխավորության ու ապահովագրության կազմակերպության ակտիվները կազմել են համապատասխանաբար \$ 2490 մլն [3] և \$ 919 մլն [4], ինչը կազմում է 2008 թ. Չեխիայի արտահանման ավելի քան 2%-ը, որը 2008 թվականին կազմել էր \$ 144,3 մլրդ [5]:

Վարկավորման և ապահովագրության նման ծրագրեր առաջարկվում են ոչ միայն Եվրամիության անդամ պետությունների, այլ նաև այլ երկրների կողմից: Այսպես՝ ճապոնիան իր արտահանողներին առաջարկում է միջինժամկետ և երկարաժամկետ արտահանման վարկեր: Այդ ծրագրերն իրականացվում են Միջազգային համագործակցության ճապոնական բանկի և Nippon արտահանման և ներդրումային ապահովագրության կազմակերպության կողմից: Բանկի կողմից առաջարկվող հիմնական ծրագրերն են մատակարարին և գնորդին տրվող վարկերը: 2005 թվականին ճապոնիան տրամադրեց գրեթե \$ 6 մլրդ վերոնշյալ ծրագրերի ուղղությամբ [6]:

Գծապատկեր

Չեխիայի արտահանման երաշխավորության ու ապահովագրության կազմակերպության կողմից մատուցված ծառայությունները (2008 թ.)



Նման ծրագրեր առաջարկում է նաև Թուրքիայի արտահանման վարկավորման բանկի (Էքսիմբանկի) միջոցով, որը 1987 թվականին հիմնադրված պետական հաստատություն է և երկրի արտահանման վարկավորմամբ զբաղվող միակ պաշտոնական կառույցն է: Էքսիմբանկի հիմնական նպատակներն են.

- թուրքական արտահանումների ծավալի ավելացումը,
- արտահանման համար նոր շուկաների ձևավորումը,
- միջազգային առևտրում թուրքական արտահանողների տեսակարար կշռի մեծացումը,
- ապրանքների և ծառայությունների արտահանման դիվերսիֆիկացումը,
- թուրքական արտահանողներին, ներդրողներին և արտասահմանյան գործընկերներին աջակցության ցուցաբերումը:

Էքսիմբանկն իր տարեկան ծրագրերը ներկայացնում է Խորհրդատվական և վարկային ուղղորդման գերագույն կոմիտե, որի նախագահն է բանկի գործունեության համար պատասխանատու պետնախարարը: Կոմիտեն սահմանում է բանկի կողմից տրամադրվող վարկերի, թողարկվող երաշխավորությունների և ապահովագրական գործարքների համար առավելագույն մակարդակ՝ ընդհանուր գումարով, կամ ըստ երկրների, հատվածների և ծրագրերի: Ծրագրերը կարող են վերանայվել, դադարեցվել կամ երկարաձգվել՝ ըստ թուրքական արտահանողների և միջազգային կանոնների պահանջների [7]: 2006 թվականին Էքսիմբանկի վարկային ծրագրերով նախատեսված գումարը կազ-

մեկ է \$ 7.8 մլն: Նշված ծրագրերից ֆինանսական աջակցություն է ստացել Թուրքիայի տարեկան արտահանման ավելի քան 9 %-ը [8]:

Էքսիմբանկն աջակցում է արտահանողներին, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրողներին և արտասահմանյան ներդրողներին կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ արտահանման վարկավորման ծրագրերի միջոցով: Ավելին, արտահանման սպասվող հասույթի դիմաց ֆինանսավորումը տրվում է ավելի ցածր գնով՝ հետաձգված վճարման պայմաններով վաճառքը խթանելու և արտահանման ծավալն ընդլայնելու համար: Արտահանողների համար կարճաժամկետ ֆինանսական աջակցությունը հասանելի է նախաառաքումային և հետառաքումային փուլերում և տրվում է 360 օրով՝ նոր թուրքական լիրայով վարկերի համար, և 540 օրով՝ արտարժույթով վարկերի համար: Նախաառաքումային ֆինանսավորումը պահանջվում է շրջանառու կապիտալը համալրելու համար, մինչդեռ հետառաքումային ֆինանսավորումն անհրաժեշտ է՝ հետաձգված վճարման պայմաններով վաճառք առաջարկելու համար՝ միջազգային շուկաներում մրցակցության պատճառով: Վարկերը տրամադրվում են թուրքական առևտրային բանկերի կամ էլ անմիջապես էքսիմբանկի միջոցով: Եթե վարկը տրամադրվում է առևտրային բանկի միջոցով, ապա բանկերը պատասխանատու են վարկառուի ռիսկի համար, իսկ եթե վարկը տրամադրվում է անմիջապես էքսիմբանկի կողմից, ապա պահանջվում է գրավ կամ երաշխավորություն: Առևտրային բանկերին թույլատրվում է գանձել տարեկան մինչև 1% տարբերավճար (spread)՝ ՆԹԼ-ով վարկերի համար, և 0.5% տարբերավճար՝ արտարժույթով վարկերի համար: 2006 թվականին ընդհանուր վարկերի 67%-ը տրվել է առևտրային բանկերի, և 33%-ը՝ էքսիմբանկի միջոցով: 2006 թվականի տարեվերջին արտահանման կարճաժամկետ վարկերը կազմել էին էքսիմբանկի ընդհանուր վարկերի 90%-ը: Ըստ ոլորտների տրված վարկերի բաշխվածությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին էքսիմբանկն առավել շատ վարկ է տվել տեքստիլի բնագավառում գործող կազմակերպություններին, թեպետ այդ թիվն ունի նվազման միտում (տես Աղյուսակ 1): Միևնույն ժամանակ, աստիճանաբար աճում է մեքենաներ և սարքավորումներ արտադրող/արտահանող կազմակերպություններին տրվող վարկերի թիվը:

Էքսիմբանկի ֆինանսական աջակցության միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերը մշակվել են հիմնականում կապիտալ ապրանքների արտահանման և այն անմիջական գործարկման ներդրումային նախագծերի համար, որոնք պետք է իրականացվեն թուրք և Թուրքիայում հաստատված կապալառուների կողմից: Այս ծրագրերի մեծ մասը ֆինանսավորում է տրամադրում Թուրքիայից դուրս գտնվող գնորդների թուրքական ապրանքների կամ ծառայությունների գնումների համար:

Աղյուսակ 1

Էքսիմբանկի կողմից տրված կարճաժամկետ վարկերի բաշխվածությունն ըստ տնտեսության հատվածների, 2003-2007թթ. (%) [9]

| | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|--|------|------|------|------|------|
| Տեքստիլ, պատրաստի հագուստ, կաշվե իրեր | 42 | 42 | 37 | 33 | 32 |
| Մեքենաներ/էլեկտրական սարքավորումներ | 12 | 12 | 16 | 17 | 17 |
| Երկաթ և պողպատ | 8 | 7 | 10 | 9 | 8 |
| Սննդամթերք, գյուղատնտեսական արտադրանք | 9 | 8 | 7 | 10 | 10 |
| Հանքարդյունաբերություն, երկաթե արտադրանք | 9 | 9 | 7 | 7 | 9 |
| Այլ | 20 | 22 | 23 | 24 | 24 |

Էքսիմբանկը թուրք արտահանողների, ներդրողների ու արտասահմանյան կապալառուների համար առաջարկում է նաև առևտրային և քաղաքական ռիսկերից ապահովագրման մի շարք ծրագրեր: Առևտրային ռիսկերն ապահովվում են Էքսիմբանկի սեփական միջոցներով, մինչդեռ քաղաքական ռիսկերը սկզբունքորեն ապահովվում են կառավարության կողմից: 2000 թվականից կարճաժամկետ քաղաքական ռիսկերը նույնպես զիջվել են վերաապահովագրությանը՝ ըստ երկրների որոշ սահմանափակումներով: Ապահովագրական վճարները տատանվում են 0.19%-ից մինչև 4%՝ առևտրային և քաղաքական ռիսկերի համար համատեղ, կամ 0.05%-ից մինչև 4%՝ միայն քաղաքական ռիսկերի համար: Ապահովագրական վճարների չափը կախված է գնորդի երկրի ռիսկային խմբից, վճարման ժամկետներից և գնորդի կարգավիճակից (մասնավոր կամ պետական):

Բազմաթիվ են այն երկրները, որոնք մեծ ուշադրություն են դարձնում իրենց արտահանող կազմակերպությունների համար ֆինանսական պաշարների մատչելիության ապահովմանը: Հայաստանում նման ծրագրեր դեռևս գոյություն չունեն, ինչը զգալիորեն բարդացնում է հայ արտահանողների կողմից վարկային և ապահովագրական պաշարներից օգտվելը: Ուստի, նպատակահարմար ենք գտնում մշակել հայ արտահանողների համար վարկավորման և ապահովագրության ծրագրեր և ապահովել դրանց արդյունավետ իրականացումը: Ծրագրերի իրականացման գործառույթը կարող է տրամադրվել «Ձարգացման հայկական գործակալություն» պետական փակ բաժնետիրական ընկերությանը:

Խիստ կարևոր է դիտարկել նաև պետության կողմից արտահանող ձեռնարկությունների գործառական ծախսերի նվազեցմանն ուղղված աջակցությունը: Այս խնդիրը հատկապես կարևորվում է փոքր և միջին

ձեռնարկությունների համար, որոնց ընդհանուր ծախսերում գործառնական ծախսերն ավելի մեծ մասնաբաժին են կազմում, քան մեծ ձեռնարկությունների ծախսերում: Դիտարկելով բազմաթիվ երկրների օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերը՝ ընդհանուր առմամբ այս ոլորտում պետական միջոցառումները կարելի է միավորել հետևյալ խմբերի մեջ.

1. կազմակերպությունների կողմից իրականացվող հետազոտության և զարգացման ծրագրերի ֆինանսավորում,

2. արտասահմանյան և տեղական ցուցահանդեսներին մասնակցելու համար տրվող պետական աջակցություն,

3. հավաստագրման հետ կապված ծախսերի մասնակի կամ ամբողջական ծածկում,

4. շուկայի ուսումնասիրությանը և արտասահմանյան նոր շուկաների հայտնաբերմանն ուղղված պետական աջակցություն (օրինակ՝ շուկաների ուսումնասիրության նախագծերի, հաշվետվությունների և վիճակագրական տվյալների գնումներ, արտասահմանում առևտրական առաքելությունների մասնակցող ընկերությունների համար և արտասահմանում ապրանքների շուկայահանման նպատակով B2B համացանցային կայքերի անդամ դառնալու համար ֆինանսական աջակցություն),

5. արտասահմանյան շուկաներում ապրանքների առաջխաղացմանը, հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև բրենդի ձևավորմանն ուղղված ծախսերի ֆինանսավորում (օրինակ՝ արտասահմանում խանութների գործարկման ծախսերի մասնակի կամ ամբողջական ծածկում, ապրանքանիշերի գրանցման հետ կապված ծախսերի ֆինանսավորում) և այլն:

Թեպետ Հայաստանում գոյություն ունեն մի շարք կառույցներ, որոնք տրամադրում են պետական աջակցության վերոնշյալ տեսակներից որոշները, սակայն դրանք ուղղված չեն հենց արտահանող կազմակերպություններին, ինչպես նաև դրանց ծավալը խիստ անբավարար է՝ զգալի արդյունք ստանալու համար: Այսպես, ՓՄՁ-ներին պետական աջակցությունից բացի՝ Հայաստանում պետական աջակցություն է տրամադրվում նաև գյուղատնտեսությանը, ազգային հեռուստաընկերությանը, առողջապահությանը, կրթությանը, տպագիր մամուլին: ԵՄ-ի երկրների համեմատ, որտեղ պետական աջակցությունը կազմում է ընդհանուր ՀՆԱ-ի 0.6%-ը, Հայաստանում այդ ցուցանիշը 2006 թվականին [10] կազմել է 6.6%, ինչը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսությանը տրամադրած պետական աջակցության ծավալներով: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ-ում պետական աջակցության ծավալները՝ ըստ ուղղությունների [11]:

ՀՀ-ում պետական աջակցության ծավալներն
ըստ ուղղությունների (2006 թ.)

| Ոլորտ | Ծավալ (մլն. դրամ) | Ծավալ (%) |
|------------------------------|----------------------|--------------|
| ՓՄՁ | 350,0 | |
| Գազի մատակարարում | 17 858,1 | |
| Գյուղատնտեսություն | 111 900,0 | |
| Պետական հեռուստաընկերություն | 2 317,7 | |
| Հրատարակչություն | 26,4 | |
| Ընդամենը | 132 452,2 | |
| ՀՆԱ-ի | | 4,9 |
| Կրթական համակարգ | 3 328,5 | |
| Առողջապահություն | 39 436,0 | |
| Ընդամենը | 42 764,5 | |
| ՀՆԱ-ի | | 1,6 |
| Ընդհանուր աջակցություն | 175 216,7 | |
| ՀՆԱ-ի | 6,6 | 6,6 |

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը կազմում է ընդհանուր ընդամենը 0.2%-ը: Եթե հաշվի առնենք այն, որ մնացած ուղղություններով տրամադրվող պետական աջակցությունը կրում է մեծ մասամբ սոցիալական բնույթ, ապա կարելի է փաստել, որ գործարարության զարգացմանն ուղղվող պետական աջակցության ծավալները խիստ փոքր են, իսկ դրանցում արտահանողներին պետական աջակցության մասնաբաժինը՝ գրեթե աննշան:

Կարծում են, որ այս խնդիրը ՀՀ կառավարության կողմից պետք է արժանանա առանձնակի ուշադրություն, ուր քայլեր կձեռնարկվեն արտահանող կազմակերպություններին պետական աջակցության ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական աջակցության վերաբերյալ հայեցակարգի ընդունումը, ուր ուշադրություն կդարձվի արտահանող կազմակերպություններին տրվող պետական աջակցությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.ceb.cz/content/view/36/15/>, Չեխիայի արտահանման բանկի պաշտոնական համացանցային կայք, Չեխիայի արտահանման բանկի կողմից առաջարկվող ծառայություններ:
2. www.egap.cz/statni-podpora-exportu/index.php, Չեխիայի արտահանման երաշխավորության ու ապահովագրության կազմակերպության պաշտոնական համացանցային կայք:
3. <http://www.ceb.cz/content/view/171/77/>, Չեխիայի արտահանման բանկ, 2008 թ. տարեկան հաշվետվություն:
4. <http://www.egap.cz/vysledky-hospodareni/index-en.php> - Չեխիայի արտահանման երաշխավորության ու ապահովագրության կազմակերպություն, 2008 թ. տարեկան հաշվետվություն:
5. Հաշվարկները կատարված են՝ ելնելով 1 չեխական կրոն = 0,05860 ԱՄՆ դոլար փոխարժեքից (16.11.2009 թ.):
6. “Trade Policy Review, Japan” Report by Secretariat, WT/TPR/S/211, 14 January 2009.
7. ԱՀԿ հմ. G/SCM/N/123/TUR փաստաթուղթ, 12.01.2006 թ.:
8. 1996 թվականին էքսիմբանկը վերափոխեց իր կարճաժամկետ վարկային ծրագրերը՝ դրանք «Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին» ԱՀԿ համաձայնագրին համապատասխանեցնելու համար:
9. <http://www.eximbank.gov.tr/eng/engindex.htm>, Թուրքական էքսիմբանկի պաշտոնական համացանցային կայք:
10. 2006 թվականին պետական աջակցություն էր տրամադրվում նաև գազի մատակարարմանը, որը ներկայումս դադարեցվել է:
11. Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը մրցակցության և պետական աջակցության բնագավառներում, AEPLAC, հուլիս 2007 թ.:

ՀՈՎՍԵՓ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ

ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Եվրոպական միության օրենսդրական գործընթացը բարդ և բավական ինքնատիպ ընթացք ունի: Լիսաբոնյան համաձայնագրով նախատեսված փոփոխություններից հետո նախատեսվում են երկու խումբ օրենսդրական ընթացակարգեր՝

- սովորական օրենսդրական ընթացակարգ (նախկին համատեղ որոշումների ընդունման ընթացակարգը), որը ենթակա է կիրառման դեպքերի մեծամասնությունում,
- հատուկ օրենսդրական ընթացակարգ: Այս խումբն ընդգրկում է խորհրդատվական ընթացակարգը և համաձայնության ընթացակարգը: Այս ընթացակարգերը բավականին հազվադեպ են կիրառվում:

Օրենսդրական ընթացակարգերն ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ՝ տարբերություններ: Նմանությունների թվին կարելի է դասել բոլոր ընթացակարգերում միևնույն սուբյեկտների մասնակցությունը¹, ինչպես նաև նույն փուլերի առկայությունը: Այդ փուլերն են՝

- օրենսդրական նախաձեռնության,
- որոշման նախագծի քննարկման,
- որոշման ընդունման:

Ընդ որում օրենսդրական ընթացակարգերի հիմնական տարբերությունները դրսևորվում են երկրորդ՝ քննարկման փուլում:

Օրենսդրական նախաձեռնության փուլը բոլոր ընթացակարգերի կիրառման դեպքում նույնն է:

Ցանկացած օրենսդրական ակտի առաջարկը պետք է հիմնված լինի համաձայնագրի որոշակի հոդվածի վրա՝ հղում կատարելով որպես առաջարկի իրավական հիմք: Այն սահմանում է, թե որ օրենսդրական ընթացակարգը պետք է կիրառվի, հետևաբար ի՞նչ ինստիտուտներ պետք է մասնակցեն, ակտի ի՞նչ տեսակ պետք է ընդունվի, խորհուրդը ձայների ինչպիսի՞ քանակությամբ պետք է որոշում կայացնի և այլ հարցեր:

¹ Որպես ընդհանուր կանոն՝ Եվրոպական Հանձնաժողովը մշակում է օրենսդրական ակտի նախագիծը, իսկ ակտն ընդունվում է խորհրդի և Եվրախորհրդարանի կողմից կիրառման ենթակա օրենսդրական ընթացակարգի շրջանակներում նախատեսված ուժերի հարաբերակցությամբ: Այլ ինստիտուտներն ու մարմինները երկրորդական դեր են կատարում:

Ինչպես Ֆոսթերն է նշում իր աշխատություններից մեկում, համապատասխան հողվածը հանդիսանում է կիրառման ենթակա օրենսդրական ընթացակարգի բանալին [1, p. 107]:

Պետք է նշել, որ օրենսդրական ակտի իրավական հիմքի ճիշտ ընտրությունը չափազանց կարևոր է: Այն ընտրվում է Հանձնաժողովի կողմից առաջարկությունը ներկայացնելիս: Խորհուրդը և Եվրախորհրդարանը կարող են դիմել Հանձնաժողովին ակտի իրավական հիմքը փոխելու կապակցությամբ, եթե գտնում են, որ այն սխալ է ընտրված: Եթե ակտի իրավական հիմքը սխալ է ընտրված, այն անվավեր կճանաչվի Դատարանի կողմից¹:

Իրավական հիմքի սխալ ընտրության դեպքում կարող են ծագել բարդություններ: Եթե ակտի իրավական հիմքը սխալ ընտրվի, կարող է կիրառվել սխալ ընթացակարգ, կարող են ոտնահարվել որոշակի ինստիտուտների իրավունքները, ինստիտուտները կարող են որոշում կայացնել ձայների ոչ ճիշտ հարաբերակցությամբ, կարող է ընդունվել ոչ ճիշտ ակտի տեսակը: Դա է պատճառը, որ ակտի իրավական հիմքի ճիշտ ընտրությանն այդչափ կարևոր նշանակություն է տրվում:

Օրենսդրական նախաձեռնության գրեթե բացառիկ իրավունքը Եվրոպական Հանձնաժողովին է: Հենց Եվրահանձնաժողովի նախաձեռնությամբ են ընդունվում Միության նորմատիվ իրավական ակտերի գերակշիռ մասը:

Ինչպես իր աշխատություններից մեկում նշում է Մոսիսը, Հանձնաժողովի ընտրությունն այս առումով պայմանավորված է 2 հանգամանքով՝ նախ՝ Հանձնաժողովը բաղկացած է բոլոր երկրների ներկայացուցիչներից, երկրորդ՝ այն չի ղեկավարվում և վերահսկվում որևէ ազգային իշխանության կողմից [2, p. 47]:

Հիմնադիր պայմանագրերում որևէ տեղ նախկինում սահմանված չէր Հանձնաժողովի օրենսդրական նախաձեռնության իրավունքը՝ որպես ընդհանուր սկզբունք: Սակայն պայմանագրերի հողվածների մեծամասնությունը, որոնք իրավական հիմք են ծառայում օրենսդրական գործընթացի համար, սահմանում էին, որ օրենսդրական ակտը նախաձեռնում է Հանձնաժողովը:

Սակայն Լիսաբոնյան պայմանագրով ամրագրվեց, որ Միության օրենսդրական ակտերը կարող են ընդունվել միայն Հանձնաժողովի առաջարկությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնադիր պայմանագրերով այլ բան է նախատեսված:

Լիսաբոնյան պայմանագրով ամրագրվեց նաև, որ հիմնադիր պայմանագրերով նախատեսված առանձնահատուկ դեպքերում օրենսդրական ակտերը կարող են ընդունվել անդամ պետությունների խմբի կամ Եվրոպական Խորհրդարանի նախաձեռնությամբ, Եվրոպական

¹ Կարելի է բերել մի շարք գործերի օրինակներ, որոնցում Դատարանի կողմից անվավեր են ճանաչվել սխալ իրավական հիմքի հիման վրա ընդունված ակտերը: Օր. Commission v. Council (Tariff Preferences case) Case 45/86, [1987] ECR 1493, կամ Commission v. Council (Titanium Dioxide case) Case C-300/89, [1991] ECR I-2867 գործերը:

կենտրոնական բանկի առաջարկությամբ կամ Արդարադատության դատարանի կամ Եվրոպական ներդրման բանկի խնդրանքով: Ձևակերպումից արդեն իսկ երևում է, որ այս դեպքերը կիրառվում են առանձնահատուկ պայմաններում և բացառություն են ընդհանուր կանոնից, իսկ օրենսդրական ակտերի հիմնական նախաձեռնողը Եվրոպական Հանձնաժողովն է: Այս մոտեցումը գալիս է հնուց և իր արդյունավետությունն ապացուցել է երկար տարիների ընթացքում:

Այսինքն՝ կարելի է փաստել, որ Հանձնաժողովից է սկսվում օրենսդրական գործընթացը [3, p. 19]:

Հանձնաժողովն ինքն է որոշում, թե ինչ օրենսդրական ակտի նախագիծ ներկայացնի, կամ էլ երբ այն ներկայացնի: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հիմնադիր պայմանագրերով հստակ ժամկետ է սահմանված Հանձնաժողովի կողմից որևէ առաջարկություն ներկայացնելու համար: Նման դրույթներ, որպես կանոն, սահմանվում են անցումնային շրջաններում:

Օրենսդրական ակտի նախագծումը բավականին բարդ գործընթաց է, որի ընթացքում Հանձնաժողովին օժանդակում են ինչպես Միության, այնպես էլ անդամ պետությունների մի շարք կառույցներ: Այսինքն՝ պետք չէ ենթադրել, որ Հանձնաժողովը գործում է այլ կառույցներից առանձնացած:

Որպես կանոն, մինչև Հանձնաժողովի կողմից որոշակի նախագծի ձևավորումն ու ներկայացումը, տեղի են ունենում բավականին նախապատրաստական աշխատանքներ: Նախ՝ Հանձնաժողովը համապատասխան ուսումնասիրություններ է կատարում, հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ պարզելու, թե օրենսդրական ակտը տվյալ հարցի լուծման լավագույն տարբերակն է արդյոք:

Նորմատիվ իրավական ակտի նախագիծը պատրաստվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումներում՝ գլխավոր դիրեկտորատներում: Եթե հարցը վերաբերում է մի քանի բնագավառների, նախագծման աշխատանքներին մասնակցում են մի քանի գլխավոր դիրեկտորատներ համատեղ: Նախագիծը համաձայնեցվում է նաև այլ շահագրգիռ ստորաբաժանումների, և պարտադիր կերպով իրավաբանական ծառայության հետ: Առանց իրավաբանական ծառայության կողմից տրված դրական եզրակացության ոչ մի փաստաթուղթ չի կարող վեր շարժվել Հանձնաժողովի հիերարխիկ բուրգով:

Նախագծի մշակման ժամանակ խորհրդակցություններ են անցկացվում Միության այլ ինստիտուտների, անդամ պետությունների, հասարակական և այլ պետական ու ոչ պետական մասնագիտացված կազմակերպությունների հետ: Հաճախ խորհրդակցություններ են անցկացվում 2 խորհրդատվական մարմինների՝ Տնտեսական և սոցիալական կոմիտեի ու Տարածաշրջանների կոմիտեի հետ: Նախագծի մշակմանը ներգրավվում են տարբեր բնագավառների փորձագետներ ու մասնագետներ, որոնք ձևավորում են նախագծի մշակման համար անհրաժեշտ աշխատանքային խմբեր:

Հանձնաժողովը հաճախ կազմակերպում է օրենսդրական նախագծի բաց խորհրդակցություններ, որոնց կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կազմակերպությունները: Այդ կազմակերպություններն ապահովվում են անհրաժեշտ տեղեկատվությամբ և փաստաթղթերով: Նրանք հնարավորություն են ստանում ներկայացնելու իրենց առաջարկությունները և դիտողությունները: Սակայն նման բաց խորհրդակցությունների անցկացումը պարտադիր բնույթ չի կրում: Դրանց կազմակերպման հարցը, ըստ էության, թողնված է Հանձնաժողովի հայեցողությանը (այս մասին մանրամասն տե՛ս [4]):

Բացի նման բաց խորհրդակցություններից, Հանձնաժողովի գլխավոր դիրեկտորատների կողմից կազմակերպվում են նաև առանձին հանդիպումներ տարաբնույթ կազմակերպությունների հետ, որոնց ընթացքում նույնպես քննարկվում են տարբեր նախագծեր:

Նման կազմակերպությունների կողմից հաճախ Հանձնաժողովին են ներկայացվում օրենսդրական ակտերի նախագծեր, որոնց ճակատագիրը, բնականաբար, կախված է Եվրահանձնաժողովի հայեցողությունից:

Վերոնշյալ խորհրդակցությունները չափազանց կարևոր նշանակություն ունեն և հաճախ հանգեցնում են նախագծում որոշ փոփոխությունների, իսկ երբեմն էլ անգամ նախագիծը հետ կանչելուն:

Աշխատանքների նախնական փուլում բավականին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում բազմաթիվ լոբբիստական կազմակերպություններ, որոնք գրանցված են Բրյուսելում: Այդ կազմակերպությունների իրավական կարգավիճակը հստակեցվում է հատուկ ընդունված նորմատիվ իրավական ակտերով, որոնցով կարգավորվում են վերջիններիս գրանցման կարգը և բազմաթիվ այլ հարցեր: Լոբբիստական կազմակերպություններն ուղղակիորեն մասնակցում են անցկացվող խորհրդակցություններին և ընդունվելիք որոշումների ուսումնասիրություններին, օժանդակում են փորձագետների և աշխատանքային խմբերի նիստերի անցկացմանը՝ հաճախ որոշիչ դեր խաղալով դրանց հրավիրման գործում (Միությունում լոբբիզմի դերի, ինչպես նաև դրա տարբեր ձևերի մասին տե՛ս [5]):

Լոբբիստները փորձում են իրենց ազդեցությունն ունենալ օրենսդրական գործընթացի փուլերում՝ սկսած Հանձնաժողովի կողմից նախագիծը ներկայացնելուց, մինչև Խորհրդի և Եվրախորհրդարանի կողմից որոշում կայացնելը:

Եվրոպական լոբբիստները տարաբնույթ են: Դրանց կազմի մեջ ընդգրկվում են մասնագիտացված միություններ, Եվրոպական Կլոր սեղանը, ազդեցիկ կազմակերպությունների պատասխանատու ներկայացուցչություններ, իրավաբանական ծառայություններ, ինչպես նաև մասնագիտացված լոբբիստներ:

Լոբբիստական կազմակերպությունների առկայությունը կարևոր է, առավել ևս, որ Միության կազմի մեջ է մտնում 27 պետություն՝ տարբեր սովորույթներով և առանձնահատկություններով: Իսկ լոբբիզմը

հնարավորություն է տալիս հաշվի առնել տարաբնույթ կազմակերպությունների շահերն այդ բոլոր տարբերություններով հանդերձ:

Օրենսդրական գործընթացի վրա որոշակի ազդեցություն կարող են ունենալ նաև առանձին միջազգային կազմակերպությունները, օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, որի անդամն է հանդիսանում Միությունը և, բնականաբար, ստանձնել է որոշակի պարտականություն [6, p. 1-30]:

Մշակված նախագիծը համապատասխան կոմիսարի կողմից քննարկման է դրվում Հանձնաժողովի կոլեգիալ նիստում: Հանձնաժողովի կողմից հավանության արժանանալուց հետո նախագիծն ուղարկվում է օրենսդիրներին, որոնք, համապատասխան ընթացակարգի շրջանակներում, ձեռնամուխ են լինում իրենց գործունեությանը:

Ինչպես տեսնում ենք, նախագծերի մշակումը բավականին երկարատև և մանրազնին աշխատանքի արդյունք է: Դա կոչված է հաշվի առնելու հնարավոր շատ տեսակետներ և ապահովելու Միության ապագա ակտերի բարձր որակը: Տարաբնույթ կարծիքներ լսելը և դրանք հաշվի առնելն երաշխիքն են նրան, որ ներկայացվող նախագիծն իրապես համապատասխանում է Միության շահերին և տվյալ ժամանակահատվածի համար հարցի լուծման արդյունավետ տարբերակն է:

Օրենսդրական նախաձեռնություններ ներկայացնելիս Հանձնաժողովը պետք է հաշվի առնի նաև համապատասխան նախագծերը Միության կողմից սեփական միջոցների հաշվին ֆինանսավորելու կարողությունը: Չնայած հաշվի առնելով Միության բյուջեի չափերը՝ այս կապակցությամբ հազիվ թե հաճախակի դժվարություններ ծագեն:

Ամեն տարի Հանձնաժողովը հրապարակում է տարեկան ծրագիր, որում նշվում են օրենսդրական ծրագրերը՝ առանձնացնելով առավել նախապատվելիները տվյալ տարվա համար:

Հանձնաժողովը պետք է նաև մանրազնին կերպով հաշվարկի օրենսդրական նախագծի սոցիալական, բնապահպանական և այլ հնարավոր հետևանքները:

Ո՛չ Խորհուրդը, ո՛չ Եվրախորհրդարանը, չնայած որ Միության 2 օրենսդիրներն են, օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չեն: Նրանք կարող են դիմել Հանձնաժողովին համապատասխան առաջարկություն ներկայացնելու կապակցությամբ: Հանձնաժողովը պարտավոր չէ ներկայացնել այդ առաջարկությունը: Սակայն նա պարտավոր է կատարել համապատասխան ուսումնասիրություն: Ըստ Լիսաբոնյան պայմանագրի՝ Հանձնաժողովը պարտավոր է Եվրախորհրդարանին և Խորհրդին տեղյակ պահել առաջարկությունը չներկայացնելու պատճառների մասին, ինչը կարելի է առաջընթաց համարել:

Պրակտիկայում հաճախ է պատահում, երբ Հանձնաժողովը նախագիծ է ներկայացնում Խորհրդի կամ Խորհրդարանի առաջարկությամբ: Երբեմն Հանձնաժողովի համար քաղաքական առումով դժվար է լինում մերժելու նման առաջարկությունը: Չպետք է մոռանալ, որ այս ինստիտուտները ոչ թե մրցակիցներ են, այլ կոչված են համագործակ-

ցելու իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և հանուն ընդհանուր շահերի: Բոլոր դեպքերում, որևէ մեկը չի կարող Եվրահանձնաժողովին թելադրել իր կողմից ներկայացվող օրենսդրական նախաձեռնությունների բովանդակությունը:

Կարծում են՝ անընդունելի է այն մոտեցումը, որ Միության օրենսդիրներն օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չեն: Ըստ իս, անհրաժեշտ է նրանց վերապահել նման իրավունք՝ հիմնադիր պայմանագրերում համապատասխան դրույթ մտցնելով:

Միության օրենսդրական գործընթացը մանրակրկիտ կերպով ուսումնասիրության ենթարկած գիտնականներն եկան այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից Խորհրդին ներկայացված առաջարկությունների միայն մի փոքր մասն են հանդիսանում Հանձնաժողովի աշխատանքի արդյունք: Այդ տվյալների համաձայն՝ օրենսդրական նախաձեռնությունների միայն 1/4-ը ներկայացվել են Խորհրդի միջնորդությամբ, 30%-ը՝ նախկինում ընդունված ծրագրերի՝ «սպիտակ» և «կանաչ» գրքերի տեսքով կամ հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով: Նույն չափով առաջարկությունների ներկայացումը պայմանավորված էր Միության միջազգային համաձայնագրերի իրականացման պահանջով և մոտավորապես 17%-ը՝ Դատարանի որոշումներն իրագործելու նպատակով [7, էջ 283-284]:

Զնոռանանք նաև Եվրոպական Խորհրդին, որը սահմանում է Միության զարգացման չափորոշիչները և, անշուշտ, լուրջ ազդեցություն կարող է ունենալ Հանձնաժողովի կողմից օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցում: Եվրոպական Խորհրդի կողմից սահմանված դրույթներն իրենց արտացոլումն են գտնում Հանձնաժողովի կողմից մշակված իրավական ակտերի նախագծերում, և դժվար է պատկերացնել, որ Հանձնաժողովի կիսկադրվի Եվրոպական Խորհրդին:

Լիսաբոնյան համաձայնագրով նախատեսվեց Միության բնակչության կողմից Հանձնաժողովին օրենսդրական ակտի նախագիծ ներկայացնելու հնարավորություն: Այս ինստիտուտը հայտնի է որպես քաղաքացիական նախաձեռնություն, ինչը չպետք է խառնել ժողովրդական օրենսդրական նախաձեռնության ինստիտուտի հետ, որը ենթադրում է ժողովրդի կողմից օրենսդրական ակտի նախագծի ներկայացում անմիջապես Խորհրդարան:

Նախկինում նույնպես փորձեր են արվել Միությունում ներմուծել քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը: Մասնավորապես, նման առաջարկություն է արվել Ամստերդամի պայմանագրի մշակման ժամանակ, որը, սակայն, հավանության չի արժանացել: Այն նախատեսվում էր նաև Սահմանադրության նախագծով:

Ժողովրդի կողմից ներկայացվող նախագիծը պետք է բավարարի միանգամից 2 պահանջի՝ այն պետք է արժանանա առնվազն Միության 1000000 քաղաքացիների հավանությանը, և նրանք պետք է ներկայացնեն անդամ պետությունների նշանակալի քանակ: Նախագծի

ճակատագիրը կախված է Հանձնաժողովից, որը կարող է հավանության արժանացնել այն, սակայն պարտավոր չէ գործել վերջինիս համապատասխան: Հետագայում նախատեսվում է ընդունել օրենսդրական ակտ, որը մանրամասն կկարգավորի այս ընթացակարգը:

Այս ինստիտուտը հերթական քայլն է Միությունում ժողովրդավարական պակասուրդի նվազեցման ուղղությամբ:

Այս ինստիտուտի ներմուծման վերաբերյալ տեսակետները տարբեր են: Որոշ մտածողներ այն ընդունեցին մեծ ոգևորությամբ, իսկ մյուսները դրանից առանձնակի սպասելիքներ չունեն (այս մասին մանրամասն տես [8]): Թե ի՞նչ ազդեցություն այն կունենա Միության կյանքի վրա, կարծում եմ՝ ցույց կտա միայն ժամանակը:

Օրենսդրական նախաձեռնության իրավունքը հանդիսանում է Հանձնաժողովի կարևոր լիազորություններից մեկը և կարևոր գործիք է հանդիսանում Միության քաղաքականության վրա ազդելու համար: Այս իրավազորությունը հնարավորություն է տալիս Հանձնաժողովին կարևոր դեր խաղալ օրենսդրական գործընթացում՝ չհանդիսանալով օրենսդիր: Հանձնաժողովի օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը Միությունում զսպումների և հակակշիռների կառուցակարգի յուրահատուկ դրսևորում է, ինչի կապակցությամբ Հանձնաժողովին անվանում են «Միության շարժիչ»:

Ինչպես տեսնում ենք՝ Միության օրենսդրական ակտերի հիմնական նախաձեռնողն է հանդիսանում Եվրոպական Հանձնաժողովը: Այս մոտեցումը գալիս է հնուց և վստահաբար կարելի է նշել, որ դրանից չեն հրաժարվի նաև ապագայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Foster N.*, Foster on EU Law. Oxford University Press. 2006, p. 462.
2. *Moussis N.*, Access to European Union. 16th edition. European Study Service, 2007, p. 561.
3. *Hartley T.C.*, European Union law in a global context. Text, cases and materials. Cambridge University Press, 2004, p. 434.
4. *Israel De Jesus Butler*, Non-governmental organization participation in the EU law-making process: the example of social non-governmental organizations at the Commission, Parliament and Council./ European Law Journal. Volume 14, issue 5. September 2008, p. 558-583.
5. *Ralph H. Folsom, Ralph B. Lake, Ved P. Nanda*, European Union law after Maastricht. A practical guide for lawyers outside the Common Market. Kluwer Law International, 1994, p. 745:
6. *Grainne De Burca and Joanne Scott*, The EU and the WTO. Legal and constitutional issues. OXFORD – PORTLAND OREGON, 2003, p. 332.
7. *Ղազինյան Ա.Գ.*, Եվրոպական Հանձնաժողով, իրավական կարգավիճակի հիմնահարցեր: Երևանի պետ. համալս. - Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2003 թ., 304 էջ:
8. *Ferro Miguel Sousa*, Popular legislative initiative in the EU. Yearbook of European Law, 2007, Oxford University Press. p. 355-387.
9. Լիսաբոնյան համաձայնագիր ԵՄ պայմանագրում և ԵՀ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի քաղաքական կառավարման
և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ,
քաղաքական գիտությունների դոկտոր*

ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

*Հայաստանի տնտեսագիտական համալսարանի
հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ՆԱՐԵԿՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

XXI դար թևակոխած մարդկությունն ականատես է իրենց չափերով առեւելի փոփոխությունների, որոնք իրենց տարածական հարթություններում մարտահրավերներ են նետել քաղաքական արդիականացման և զագացման գործընթացում գտնվող ժողովուրդների ինքնությամբ: Տարաբնույթ քաղաքական ժամանակի և տարածության մեջ ձևավորված էթնոմշակութային, սոցիոմշակութային, դավանաբանական արժեքային համակարգի բնականոն արդիականացումը հնարավորություն է տալիս ժողովուրդներին առկա մարտահրավերներին պատասխանել նպատակամետ՝ անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ բացահայտելով ինքնության արդիականացման հիմնախնդիրներն անվտանգության ապահովման համատեքստում: Այս բարդ ու բազմաշերտ գործընթացներին բնորոշ է հակասականություն, որոնցից հատկանշական են .

ա. համամարդկային և ազգային շահերի, գլոբալացման և նույնականացման ձգտումների, ինչպես նաև ազգերի, հասարակությունների և անհատների միջև ինքնորոշման մասին ունեցած պատկերացումների աններդաշնակությունը,

բ. տարաբնույթ քաղաքակրթությունների միջև ծավալվող բախումների, երկխոսությունների, դաշինքների համատեղելիության կամ անհամատեղելիության հիմնախնդիրները, որոնք ավելի ակնառու են գլոբալացման գործընթացում նրանց անվտանգության ապահովման համակարգի ռազմավարության իրականացման ցանցային կառուցակարգերում: Այս առումով ուշագրավ է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար արժեքների՝ անկախության, պետության և ժողովրդի պաշտպանվածության, խաղաղության և միջազգային հա-

մագործակցության, բարեկեցության հետ համատեղ կարևորվում է նաև հայապահպանության հիմնախնդիրը: Վերջինս՝ որպես համակարգված ամբողջություն, ենթադրում է. «...Ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ապահովող և ազգային ինքնությունը մարմնավորող գործոնների զարգացում» [1, էջ 16]:

Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում, հետադարձ հայացք նետելով հայ ինքնության արդիականացման հիմնախնդիրն, նորովի դիտարկել Մ. Խորենացու և Գ. Նարեկացու կողմից համակարգված ազգային մշակութային այն տեքստերը, որոնք պատմական հոլովություն հնարավորություն են տալիս, տառապանքի քառուղիներով և ժամանակի փորձություններով անցած ժողովրդին ներկայիս մարտահրավերներին պատասխանելով, կերտել ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական, իրավական պետություն՝ Տունը Հայոց: Յուրաքանչյուր պատմական ժամանակ Հայոց Տան կերտման իր արժեքաբանական տեքստն ունի, սակայն հայ ինքնության անվտանգության ապահովման առումով ելակետային ենք համարում X դարը:

X դարը՝ աստվածակենտրոնությունից դեպի մարդակենտրոնություն դրսևորումներով, սոցիալական ընդլզումներով, գահակալական նկրտումներով, մարդուն դրել էր իրականության բազմաչափ ընկալման այնպիսի իրավիճակում, որը, նրան օտարելով սոցիալական իրականությունից, իր անհանդուրժողական, հավակնոտ, աստվածամերժ վարքաբանությամբ, անվտանգ կեցության ապահովման ակնկալիքով մղել էր նյութապաշտության: Այս համատեքստում Գր. Նարեկացու ստեղծագործությունները, մասնավորապես՝ «Մատյան ողբերգության» պոեմը, արտահայտելով ժամանակի սոցիալական, քաղաքական, մշակութային և գիտական հիմնախնդիրներ, ձևավորեց նարեկյան մշակույթը: Այսօր էլ՝ երրորդ հազարամյակի առաջին տասնամյակին, Մարդու՝ անվտանգության ապահովման հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության առումով այն պահպանել է իր արդիականությունը՝ կիզակետում ունենալով տարածաշրջանում հայ տեսակի գոյաբանական և իմացաբանական խնդիրներ՝ հանուն նրա անվտանգության ապահովման:

X դարն իր արժեքային բազմաչափությամբ տրոհել էր հայ մարդու պատկերացումները սեփական գոյության և հարատևման խնդիրների մասին. մի կողմից Բագրատունիների, մյուս կողմից Արծրունիների թագավորությունները, գերիշխանության համար նրանց միջև ծավալված սուր հակասությունների տիրույթներում ինքնությունը կորցրած ավատատիրական տները, լայն թափ ստացած թոնդրակյան շարժումը, Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից հրահրվող բանսարկությունները: Այս ամենը երկատել էր հայ մարդուն, և նա դարձնել էր աշխարհի նյութական սկզբի, ծանր հարկերի, սահմանային պատերազմների, աստվածամերժ մտայնության զոհ: Լինե-

¹ «Մարդ» բառը գրել ենք մեծատառով՝ նկատի ունենալով հավաքական ամբողջություն:

լով իր ժամանակի կրթված և մարդասիրական արժեքներ որդեգրած մարդկանցից մեկը՝ Գր. Նարեկացին, իր ստեղծագործություններում՝ մասնավորապես «Մատյան ողբերգության» պոեմում, ստեղծեց Մարդու ինքնակառավարման, ինքնաիրացման, ինքնահաստատման մի այնպիսի արժեքային համակարգ, որը, դարերի հոլովույթում քննություն բռնելով, հնարավորություն է տալիս մարդ էակին ոգեղենության, մարդասիրության, սիրո և բարու բարձր արժեքները համադրել նյութականության հետ: Այս նկատառումները հիմք ընդունելով էլ կարող ենք հավաստել, որ Նարեկացին հայ Վերածննդի գաղափարախոսության մունետիկն է և, որպես այդպիսին, ներկայանում է բարենորոգչական առաքելությամբ: Ինչպես վկայում է Վ. Չալոյանը՝ Նարեկացու բարենորոգչություններն այդ ժամանակաշրջանում ընթանում էին թոնդրակյան շարժման շրջանակներում. «...որոնք VIII - IX դարերում ժողովրդական շարժման մի հսկայական պոռթկում առաջացրին ավատատիրական կեղեքման դեմ, ինչպես և օտար հարստահարիչների, մասնավորապես՝ Բյուզանդիայի տիրապետության դեմ» [2, էջ 57]:

Մեր համոզմամբ այս համատեքստում էլ Գր. Նարեկացին, մեկնաբանելով հարաբերական անկախության մեջ գտնվող ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակը, մշակեց Աստված-Մարդ, Մարդ-Մարդ, Մարդ-բնություն հարաբերությունների բարեփոխման նոր համակարգ, ուր առկա հակամարտություններն արդյունք էին ես-ի՝ ինչպես սեփական ժամանակի և տարածության, այնպես էլ ժամանակի և՛ ներդաշնակ , և՛ աններդաշնակ տիեզերաբանական ընկալումների:

Նախ անդրադառնանք ես-ի մակարդակում հակամարտության ձևավորմանը՝ ճշտելով նրա դերը և՛ արտաքին, և՛ ներքին Մարդու ձևավորման գործում: Իրականության մեկնության հենց այս մոտեցումներն էլ հիմք ընդունելով՝ գտնում ենք, որ պահպանելով համակեցության կանոնները՝ ես-ը անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ ինքնադրսևորվում է՝ գոյապահպանման և հարատևման հզոր լիցք հաղորդելով սերունդներին: Այդ առումով կարևոր է հակամարտության փոխակերպման ուսումնասիրությունը, նրա շարժումը և կենսալիցքը: Նման պարագայում կարևորվում են Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում առկա մտածողության այնպիսի դրսևորումները, ինչպիսիք են՝ ծնունդը, այրությունը, մահը՝ նորի ստեղծման ակնկալիքով: Սակայն նշված հասկացությունները ևս, ինչպես ստորև կփորձենք ներկայացնել, կարող են ես-ի համար կամ ապակողմնորոշիչ, կամ էլ առնվազն իշխանության իրականացմամբ պայմանավորված գործոններ լինել: Նարեկյան մշակույթը, որի հիմնաքարը քաղաքակրթության տիեզերաբանությունն է, ոչ միայն ես-ի ներքին և արտաքին հակամարտության կենսաշրջանն է, այլև հակամարտության մեջ նրա փոխակերպման նախապայմանը: Անդրադառնալով փոփոխությունների մասնակիցների կամ այլ ես-երի կողմից այս գործոնի կարևորության մակարդակին՝ կարծում ենք, որ այն արդյունքի վրա էական ազդեցություն ունի, քանի որ, համաձայն մեր պատկերացումների, տիեզերաբանությամբ

յունն իր արմատներով ձգվում է ես-մենք նույնականացման ձգտող ենթագիտակցության: Այս առումով էլ կարևորվում է նարեկյան մշակույթի համակարգում առկա ես-երի հակամարտության ուսումնասիրությունը (ես-Աստված, ես-բնություն, ես-Քրիստոս, ես-մարդ, ես-չար, ես-բարի, ես-լույս, ես-խավար և այլն): Ես-ի բազմաչափ դիտարկվող մակարդակները հայ քրիստոնեական² մշակույթի հիմքն են, որի նարեկյան դրսևորումներն արդյունք են ժամանակի հակամարտության կենսաշրջանների՝ ես-ի և՛ ինքնահաստատման, և՛ ինքնադրսևորման կառուցակարգային առանձնահատկությունների: Նարեկյան մշակույթի մասին «Մատյան ողբերգություն» պոեմում ամբողջական պատկերացում կազմելու նպատակով հատկապես կարևորում ենք Աստծուն ուղղված հակամարտության փոխակերպման դրվագները: Բազմադեմ Աստծո նարեկյան պատկերացումներում միանգամայն հստակ ներկայացված են և՛ երկրային աններդաշնակությունը, և՛ մարդկային ավերող սկիզբը, որոնց նկատմամբ կարելի է հաղթանակ տանել միայն Տիրոջ զորությամբ:

Քանզի զիա օրո՞ ոչ արդեւք չքնաղ քան զբան

Եւ ի մթութենէ երկեւանութեան խաւարի զտեալ,

Եւ աստուծով աւժանդակեալ եւ աւզնեալ սիրտ մեղաւորի,

Որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպէս,

Որ թէպէտ եւ յամբարձմանէ բարձրութեան գերագունիցն կայից

Ստորասուզեալ ծանրութեամբ յանդնդային վիին խորխորատ

զբոյն կործանման՝

Նորագիւտ մեղաւքն անջրելեալք,

Ունի եւ նշխար նշողից փրկութեան կենաց հպաւոր,

Իբր կայծակն լուսոյ՝ պահեցեալ ի միտս եւ յոգի... (ԺԱ - Բ)

[3, էջ 285]:

Նարեկացին համոզված է, որ երկրային աններդաշնակությունը և մարդկային ապակառուցողականությունն արդյունք են քրիստոնեական պատվիրանների շրջանցման: Աստված-բնություն-Մարդ ներդաշնակությունը ստեղծվում է միայն այն դեպքում, երբ ոչ միայն չեն անտեսվում Բարձրյալի պատվիրանները և Մարդը հավատարիմ է մնում դրանց, այլև գրողը վստահ է, որ այդ կարգացույցների պահպանումը և դրանց հանդեպ հավատարմությունն օգնում են մարդուն տեսնել, զգալ, ընդունել, հասկանալ ու հավատալ Աստծուն, որը ոչ միայն ամենագետ ու ամենագոր է, այլև մարդ արարածի դատավորը: չէ՞ որ իր բոլոր արարքների համար մահկանացուն պատասխանատու է Երկնային Թագավորին: Մարդու բոլոր գործերի **մարդասիրական հանրագումարը** ենթադրում է ինքնահաշվետու դարձնող պատճառահետևանքա-

² Նարեկացին ներկայանում է որպես ջատագով հայ առաքելական քրիստոնեության՝ հիմք ընդունելով Քաղբեդոնի (451թ.), Դվինի (649թ.) եկեղեցական ժողովները, որոնցով հայերն իրենց հայտարարեցին միաբնակ:

յին փոխապայմանավորվածություն և համակեցություն, քանի որ նրա բոլոր խոսքերն ու արարքները՝ չար կամ բարի, իրեն են վերադառնում. «Մի՛ դատիր, որ չդատվես», «Ոգիդ մի՛ հիվանդացրու չարով», «Մի՛ մոռացիր, որ չարը, գայթակղելով քեզ, մղում է թվացյալ հաղթանակների՝ քեզ զրկելով արարչության շնորհից»: Մարդն անվերապահ ընդունում է արարչությունը որպես հավատո հանգանակ, իսկ նրա մարդասիրությունն էլ համապատասխան պարտավորություններ է թելադրում.

Արա՛ փրկութիւն նիւթոյ խորանիս՝ որդւոյս դառնութեան,

Որ եկիր խնդրել եւ կեցուցանել զիս՝ զկորուսեալս:

Զի քո է մեծութիւն, յաղթութիւն եւ զաւրութիւն,

Եւ դու ես քաւութիւն եւ բժշկութիւն, նորոգութիւն եւ երանութիւն,

Եւ քեզ վայել է փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս:

Ամէն (ԼԵ-Գ) [3, էջ 395]:

Այս իմաստով էլ նարեկյան մշակույթի մարդասիրական հենքը Սուրբ Երրորդության սկիզբ ունի. Հայր Աստծով սկսած և Հիսուս Քրիստոսով ու Սուրբ Հոգով ամբողջացած քրիստոնեությունը՝ որպես ազգային հավատի և պատվիրանների բացահայտման օրենք, ձևավորեց ամբողջական Մարդու կերպարը: Մի դեպքում Մարդն անցյալ-ներկա-ապագա եռաչափության կրողն է, այլ դեպքում, քրիստոնեական արժեքաբանությամբ պայմանավորված՝ արարիչ: Այս երկակիությունն էլ նրան հնարավորինս զերծ է պահում անօրենությունից, մարդատյացությունից, որոնք կարող են ես-ին դարձնել աններդաշնակ և բախումներ հրահրել ընդունված կարգուկանոնի, սահմանված օրենքների դեմ: Այս նկատառումներից ելնելով էլ Նարեկացին գտնում է, որ Աստծո նկատմամբ ունեցած բացարձակ և անվերապահ հավատը Մարդուն ուղղում է գիտակցված գործողությունների ոլորտ, հույսով, որ իրեն՝ որպես հանուրի մասնիկի, այն անվտանգ կեցության հնարավորություն է ընձեռում և ապահովում:

Նարեկյան մշակույթը քրիստոնեությունը դիտում է երևույթների շղթայական ամբողջության մեջ, համաձայն որի՝ քրիստոնեական հավատը մեղքերի, Աստծուն հնազանդության, խոստովանության, զղջման, ապաշխարանքի, պարբերական գայթակղությունների և քավության, Տիրոջ կողմից հնարավոր թողություն ստանալու բարդ ու բազմաչափ շղթա է: Այդ շարքի ավարտն էլ հարաբերական է, քանի որ մեղսագործ ապաշխարող և գայթակղվող Մարդուն ներելու կամ չներելու իրավունքը միայն Աստծունն է, և Մարդն ի սկզբանե պետք է պատրաստ լինի դրանց: Նման մոտեցման հիմքում էլ ամենագո ուղղահայացության գիտակցումն ու պահպանումն է, որը Մարդու բնականոն զարգացման երաշխավորն է՝ իր արժեքային բազմազանությամբ: Աստված իրավունք է տալիս Մարդու վարքի քրիստոնեական կերպը քննել և հորիզոնական (ցանցային), և՛ ուղղահայաց (ստորակարգ) ձևերով: Նարեկյան մշակույթում Մարդը՝ որպես հանուրի անդամ, ներկայանում է ամենագո ուղղահայացության մեջ: Մեղք գործելը նշանակում է հակադրվել Աստծո Որդուն, Տիրոջ օրենքին. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ո-

րովհետև իմ այս փոքր եղբայրներից մեկին արիք, ինձ արիք» (Ավետարան ըստ Մաթևոսի, ԻԵ 40, ԻԵ 45): Մարդու՝ Աստծո հանդեպ ունեցած հավատը, հույսն ու սերը պետք է լինեն անվերապահ ու բացարձակ: Այս սկզբունքով են թելադրված Մարդու բոլոր արարքները և մարդասիրական չափանիշները: Ըստ էության Մարդու բոլոր արարքների հիմքում Բարձրյալի հանդեպ ունեցած վերաբերմունքն է, քանի որ խախտել օրենքը՝ նշանակում է ոտնձգություն կատարել Տիրոջ կողմից արարված էակի՝ Մարդու հանդեպ: Այս տրամաբանությամբ էլ նարեկյան մշակույթը ներառում է նեոպլատոնական իմաստասիրությունը՝ «Պահպանի՛ր կարգը, որ կարգն էլ քեզ պահպանի» կարգախոսով: Համաձայն Նարեկացու՝ Մարդու հակամարտության գործընթացն սկսվում է մահկանացուի մեղսագործությունից և ավարտվում Աստծո ողորմածության դրսևորումներով: Նարեկյան մշակույթի ձևավորման ընթացքում ի սկզբանե հեղինակին զբաղեցնող խնդիրների կիզակետում օրինազանց մեղսագործն է, իսկ մնացածը սոսկ համատեքստ է:

Կյանքը թատերաբեմ է, ուր յուրաքանչյուր Մարդ իր դերն է կատարում. մեղք է գործում, հետո ապաշխարում ու ներվում, իսկ Տիրոջ ողորմությանն արժանանում են միայն ապաշխարողները.

Աղիողորմ հեծե՛ծանաց՝ ի բարձունս աղաղակելոյ.

Ընկալ՝ քաղցրութեամբ, տէր աստուած հզաւր, զդառնացողիս զաղաչանս,

Մատի՛ր գթութեամբ առ պատկառեալս դիմաւք,
Փարատեա՛, ամենապարգել, զամաւթական տխրութիւնս,
Բա՛րձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս,
Անջրպետեա՛, հնարաւոր, զմահացու կրթութիւնս,
Աւարեա՛, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս,
Բացադրեա՛, վերնային, զմուլելոյն մառախուղ,
Կնքեա՛, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս,
Ցրուեա՛, ծածկատես, զըմբռնողին չար գտմունս,
Խորտակեա՛, անքնին, զմարտողին դիմեցմունս (ԺԲ-Գ) [3, էջ 291]:

Նարեկյան մշակույթի ներման, Տիրոջ թողտվության այս արարողակարգը, բնականաբար, որևէ առնչություն չունի կաթոլիկ եկեղեցու կողմից մեղքերի քավության գործընթացին, երբ հնարավոր է համարվում մեղքից ազատվել դրան վճարելով, կամ էլ եկեղեցականի հետ բանավոր երկխոսություն վարելով:

Նարեկյան մշակույթին բնորոշ է նաև հետևյալ իրողությունը. Մարդն ուսումնասիրվում է պարուրածև տեղեկատվական հաղորդակցության միջոցով, այսինքն, թե նա ինչպես կարողացավ մեղանչել աստվածային արարչության դեմ, և ինչպես է հնարավոր այն սրբագրել՝ անընդհատ կատարելագործելով, փորձության ենթարկելով և՛ իրեն, և՛ Աստծուն (վերստին հանցանք է գործել, կրկին պետք է ապաշխարի): Այս գործընթացն էլ քրիստոնեական բազմաչափություն (միաբնակ, երկաբնակ) է ենթադրում, որի հանդեպ վերաբերմունքն էլ մարդկանց կարող է և՛ միավորել, և՛ բաժանել:

Մատյանում Նարեկացին քննության է ենթարկում ոչ թե Մարդ-Մարդ միջանձնային հարաբերությունները, այլ առաջնորդվում Մարդ-Աստված, ներքին և արտաքին Մարդ, Մարդ-բնություն փոխհարաբերությունների նկարագրությամբ: Նարեկյան մշակույթի արժեքաբանության կենտրոնը Մարդն է՝ բոլոր ժամանակների հանճարեղ ստեղծագործողն ու փիլիսոփան, որը պարտավոր է ըստ արժանվույն գնահատել ոչ միայն Արարչին, այլև իր նախորդների վաստակը: Մեծն Նարեկացին այն համոզմանն էր, որ տիեզերական տարածության և ժամանակի բազմաչափության մեջ Մարդու հիմնախնդիրը միանշանակ չի կարելի մեկնաբանել. չէ՞ որ Հիսուսի մատնության գիշերը Պետրոս Առաքյալը երեք անգամ ուրացավ Քրիստոսին (Մատթ. ԻԶ, 69-75), չէ՞ որ հրեաները Բարաբային գերադասեցին Քրիստոսից, չէ՞ որ Տիրոջ աշակերտները չէին հավատում, որ իրենց Ուսուցիչը «հարյավ ի մեռելոց»:

Իր մեջ ներառելով դարերի հոլովություն ձևավորված ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ նարեկյան մշակույթը, այնուհանդերձ, այդ իրականության կերպարային վերլուծությանը չի անդրադառնում, քանի որ առաքելական-քրիստոնեական հայ տեքստը ի սկզբանե՝ Մ. Խորենացուց սկսած՝ «...ամեն կողմից խռովություն... ամբարիշտներին խաղաղություն չկա» [4, 316 էջ] մտայնության հարազատությամբ հնարավորություն էր տվել գրողին տրոհված հայ սոցիալ-քաղաքական իրականության մեջ ապրող Մարդու ուշադրությունը սևեռել ինչպես անվտանգության ապահովման, այնպես էլ համամարդկային խնդիրների վրա: Գրողն այն համոզմանն է, որ սա է այն ուղին, որին ձգտելով էլ հայը ինչպես ազգային, այնպես էլ վերազգային սոցիալ-քաղաքական իրականության մեջ երկրի, իր տեսակի ապահովման ակնկալիքով, արդիականացնում է իր ինքնությունը՝ դառնալով դերակատարը ոչ միայն ողբի, այլև՝ արարման: Նարեկյան մշակույթի հենքը կազմող ողբն իր բնությով համամարդկային է՝ ներառելով Երեմիա Մարգարեի ողբասացությունը. Նարեկացին ողբում է նաև Մարդ արարածի՝ Աստծո ստեղծածի մեղքերը:

Ե՛վ Խորենացու, և՛ Նարեկացու ողբերն իրենց ակունքներով առնչվում են Երեմիա Մարգարեին, սակայն կարծում ենք, եթե Խորենացին ծրագրել և կառուցակարգել էր հայի տեսակի ինքնության հարատևության ուղին, որի նախանշման համար էլ նա, քննելով հայ հեթանոսական մտայնությունը, վերլուծել է ազգի հավաքական ես-ը, ապա Նարեկացին քննում-արձանագրում է Մարդու ես-ը ընդհանրապես և եզրակացնում, որ Մարդը պարտավոր է ժամանակի իրադարձությունների հենքի վրա կերպափոխվել՝ հանուն իր տեսակի անվտանգության ապահովման: Եթե Խորենացու ժամանակներում հայ ազգի ես-ը չկարողացավ, ի գորու չեղավ պահպանելու հայրենիքի ազատությունն ու պետականությունը՝ իբրև ամենակարևոր, գերակա քաղաքական արժեք, ապա Նարեկացին, Մարդու ես-ը քննելով որպես համակարգված ամբողջություն, փորձում է հային սովորեցնել, նրան կրթել և տերը դարձնել այնպիսի գաղափարախոսության, որն իր ճանաչողության,

համակեցության կանոնների պահպանման և երևույթների մեջ կապը տեսնելու ունակությամբ երկրի և ժողովրդի համար օրհասական ժամանակներում կարողանա չարին դիմակայել: Նարեկացին նոր աստիճանի բարձրացրեց Խորենացու ընկալումները և դրանց նոր հնչեղություն հաղորդեց: Խորենացին ճիշտ էր իր ժամանակի համար, Նարեկացին՝ իր, իսկ նրանց գերխնդիրը հայի անվտանգության տեսակի ապահովումն էր, քանի որ պավլիկյան և թոնդրակյան շարժումների մեջ դրսևորվող տարաբնույթ աղանդավորական շարժումները հայի դեմ էին ուղղված: Մատյանը՝ որպես բազմաժանր ստեղծագործություն, հետամուտ է նաև հետևյալ նպատակի. ողբի գերակայության միջոցով հեղինակը հայ ես-ին հաղորդակից է դարձնում տիեզերական ժամանակին և տարածությանը՝ դրանք դարձնելով իրեն զբաղեցնող խնդրի լուծման բաղկացուցիչ:

Լինելով իր ժամանակի զարգացած անհատականություններից մեկը՝ Նարեկացին չէր կարող տեղյակ չլինել նաև հարևան երկրներում, մասնավորապես՝ Բյուզանդական կայսրության արքունիքում իրենց գործունեությունը ծավալած հայազգի քաղաքական, հոգևոր-մշակութային, գիմվորական նշանավոր գործիչների մասին, և գրողի ողբի ենթատեքստն իր մեջ է ներառում նաև հետևյալ մտայնությունը. այդ գործիչներն անտարբեր են իրենց հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ: Լինելով կոսմոպոլիտ մտայնության տեր՝ նրանք Մարդ են, սակայն ոչ հայ քրիստոնյա: Նարեկացու ողբը, ներընկալելով Մարդու ունայն կյանքի վախճանի մասին մտորումները, ստանում է համամարդկային հնչեղություն, քանի որ այն լուսաբանում է Մարդու առաքելության ինչպես նյութական, այնպես էլ ոգեղենության սկիզբը:

Քրիստոնեական աշխարհայեցողությանը Մարդու անբարեհույս կործանման ու ողբի մտայնությանն անհարիր է, ուստի «ողբ» բառը հարկ է հասկանալ հունարեն ոչ թե «տրագեդիա», «ողբերգություն», «նոխազերգություն» իմաստներով, այլ՝ սգերգ, ողբ՝ համոզված, որ այդ ողբին բնորոշ է «...եւ գլուսոյն նվազն խառնեալ» [5, 87 էջ], այսինքն՝ հուսալ Տիրոջը և սպասել՝ ապավինելով փրկության լույսին: Ամենաբարձրյալ Երկնակալի լույսի կարիքն ունեն և նրան տեսնում են նրանք, ովքեր կարողանում են չտարվել նյութով, հավատալ, որ Աստված իրենց արարել է որոշակի առաքելությամբ: Այս հանձնարարականի շրջանցումը Մարդուն հնարավորություն չի տալիս ապրել Աստծո հանդեպ ունեցած հավատի, սպասման հույսի և սիրո ներդաշնակության մեջ, իր ներքին և արտաքին ես-ով: Հենց այս հանգամանքով պայմանավորված էլ նարեկյան մշակություն մարդու ես-ի կայացման բարդ համակարգն ուղեկցվում է ճանաչողության բազմաչափությամբ՝ պայմանավորված մեծ ու փոքր ողբերով:

Դժվար է կանխատեսել, թե ապագա գրականության մեջ Մարդու հիմնահարցն ինչպիսի արժեքային չափումներով կարծարծվի, սակայն տիեզերական ժամանակի և տարածության մեջ ապրող հային երբեք

չպետք է անցյալ-ներկա-ապագայի մեջ լքի իր լավատեսությունը, հոռետեսությունն ու իրատեսությունը: Այս ենթատեքստով էլ ներկայացնում է նարեկյան ներքին և արտաքին Մարդու կայացման հենքը՝ ողբերգության և կատակերգության զուգամիտումով: Ողբը թափառող սյուժե է. Մարդը, բնության մեջ ապրելով, սարսափում է մահից, ողբում իր անցողիկությունն ու անզորությունը, քանի որ չի կարողանում հետ բերել ու կանգնեցնել ժամանակը: Անդառնալի ժամանակը և անդարձ կորուստներն իրենց հետքն են թողնում Մարդու ոչ միայն արտաքինի վրա, այլև քայքայում նրա ներքին ես-ը, և նա չի կարողանում հաշտվել իր ժամանակավոր գոյության հետ:

Նարեկացու Մատյանը՝ իր սյուժեի բազմաչափությամբ պայմանավորված, գերակայությամբ ողբերգություն է, որի օգնությամբ էլ հեղինակը ի մի է բերում մարդու կայացման համար անհրաժեշտ եզրերը՝ ոգեղեն արարման պահանջը, նյութական կարիքները, սպառման ցանկությունը և Մարդ արարածի հանդուրժողականությունը: Ողբի փիլիսոփայության մեջ Նարեկացին ներմուծում է այն ամենը, ինչը կարևորագույնն է Մ. Խորենացու «Ողբ»-ում: «Ցեղի պատմական գոյաբանությունը, – գրում է Մ. Մարգարյանը, – նման կառուցակարգի մեջ անհրաժեշտ է դիտարկել որպես արարչագործ անհատի ե՛լ ստեղծագործական ինքնաիրացում, ե՛լ մշակութաստեղծ կարողությունների դրսևորում: Այսօրինակ դիտարկումից ազգային մտահայեցողութան հենքում որոշիչ են դառնում պատմական անձի արժեքահամակարգող գաղափարները եւ պատկերացումները մի դեպքում որպես «ես»-ի կողմից Տեղի հոգեւոր ընկալման, իրացման աստիճան, այլ դեպքում՝ որպես ինքնորոշման, ինքնաճանաչողութան տեսութիւն, որը հանրոյթին զերծ է պահում քառսից» [6, 195 էջ]: Եթե Խորենացու ողբի հենքը հայ պետականության և Գր. Լուսավորչի կաթողիկոսական տան կործանումն է, ապա նարեկյան մշակույթի ողբի հիմքը մարդակենտրոնությունն է, ասել կուզի՝ այն միտում է ժամանակի և տարածության մեջ Մարդու գոյաբանական հիմնախնդրի լուսաբանմանը, Մարդ, որն ի վերուստ իրեն տրված պարտականություններից հրաժարվել փորձելու դեպքում պատժվում է Արարչի կողմից: Այս առումով էլ Նարեկացու ողբը լրացնում և ամբողջացնում է Խորենացու ողբը, քանի որ առնչվում է պատմական հոլովույթում ձևավորված հայ Մարդու գոյաբանության, համակեցության և անվտանգության խնդիրներին:

Դեռևս V դարում Խորենացին և Եղիշեն հայ իմացական աշխարհում արմատավորեցին ուրույն մտայնություն. երկրի հասարակական-քաղաքական դժբախտությունը կարելի է ծառայեցնել հայրենասիրական զգացումների հաղթահարման բարոյախոսությանը, և դժբախտության ու նահատակման մեկնաբանությունը հիմք դարձրին միասնության, եղբայրության ու վարքի գիտակցված կանոնների առաջադրման համար: Մարդու և հանրության տարբեր տեսակի պարտությունները նրանց մեկնաբանությամբ ստացան հասարակայնորեն ուրույն զարգացումներ՝ հատկապես հասարակական գիտակցության և ինք-

նագիտակցության բարձրացման, նոր դիրքորոշումների որոնման և առաջադրման առումներով: Գր.Նարեկացին յուրովի շարունակեց հենց այդ ավանդույթները, և Մարդու ու մարդկայինի հավաքական ողբերգական վիճակը հիմք դարձրեց ինքնաճանաչման, ինքնամաքրման միջոցով հասնելու Մարդ էակի կատարելագործմանը.

Ճանապարհ կենաց,

Որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ վերին:

Ձեռնկալու մեծ վստահութեան,

Որ ոչ թողացուցանես գայթակղելոյս ի վայր կործանել:

Յուսոյ կերպարան,

Եշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ,

Ապաւինութիւն հանգստեան,

Որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան:

Ազատութիւն շնորհածիր,

Որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց:

Առատութիւն աննախանձելի,

Որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես (Դ-Բ 603):

Նարեկյան դպրոցի հանճարեղ սանը, հիմք ընդունելով Խորենացու ողբը, այն բարձրացրել է նոր աստիճանի: Նարեկյան մշակույթը հայ իրականության մեջ ողբի առաջին դրսևորումներից է, և այս եզրահանգումը ցանկանում ենք հիմնավորել՝ անդրադառնալով ռուս մեծ գրականագետ Մ.Բախտինին, համաձայն որի՝ «Գեղարվեստական դիտողականությունը, նոր ձևերը նախապատրաստվում են... դարերի ընթացքում, դարաշրջանը միմիայն բարենպաստ պայմաններ է ստեղծում նոր ձևերի վերջնական հասունացման և իրականացման համար» [7, էջ 43]: Համաձայնելով ռուս գրականագետի հետ՝ հավելենք, որ հայ կյանքում ողբն առանձնահատուկ ուշադրության է արժանացել ժողովրդի, հայրենիքի և Մարդու՝ եռաչափ մակարդակով պայմանավորված, և այն թելադրված է հայ հասարակական-քաղաքական իրավիճակով: Ողբի ժանրը նպաստում է, որ հայ անհատը, անվտանգության ապահովման դիրքերից ելնելով, ժամանակի հիմնախնդիրները քննի եռամակարդակ: Ազգային կյանքում սա նարեկյան ձեռքբերումն է, իսկ «Մատյան ողբերգության» պոեմը՝ «բանավոր պատարագը»՝ «ԱՆԱՐՅՈՒՆ ՁՈՂԸ»՝ հայոց ողբերի թագն ու պսակը [8, էջ 252]:

Նարեկյան մշակույթը համակեցության օրենքների պահպանման միջոցով Մարդու զարգացման այնպիսի համակարգված արժեքների ամբողջություն է, որը նպաստում է նաև Մարդու մարմնի, մտքի և ոգու առողջացմանը: Պոեմը եզակի ստեղծագործություն է, որը հնարավորություն է տալիս Մարդուն լինել աշխարհաքաղաքացի՝ հանուր մարդկության մասնիկը՝ սեփական տեսակի անվտանգության հարատևությունն ապահովելով: Թերևս դա է պատճառը, որ ազգային գրականության մեջ չկա մի մեծ բանաստեղծ, որը չկրի նրա ստեղծագործական

ազդեցությունը՝ միջնադարյան տաղերգուներից¹մինչև Խ. Աբովյան, Պ. Սևակ: Այս ամենով էլ պայմանավորված է նարեկյան մշակույթի խորաթափանցությունը, խորհրդավորությունը, նրա աստվածաշնչյան իմաստությունը, որով և «Մատյան ողբերգության» պոեմը դառնում է հայի ինքնության, անվտանգության ապահովման ուղենիշ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, Եր., «Հայկական բանակ», 2007 թ., էջ 16:
2. **Վ. Չալոյան**, Հայկական ռենեսանս, Եր., 1964 թ., էջ 57:
3. **Գր. Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի, Ա. Ա. Ղազինյանի, Եր. , 1985 թ.:
4. **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., 1981 թ., էջ 316:
5. **Առաքել Սիւնեցի**, Յաղագս քերականութեան համառօտ լուծմունք, Լոս Անճելոս, 1982, էջ 87:
6. **Մ. Մարգարյան**, Հոգևոր Հայաստանի գաղափարախոսությունն արդիականացման գործընթացում: Բազմավէպ, 2004 թ., N 1-4, էջ 195:
7. **М.М.Бахтин**, Проблемы поэтики Достоевского, М., 1979 г., с. 43.
8. **Պարույր Սևակ**, Թրի դեմ գրիչ., Երկ. ժող. 6 հ., հ. V, Եր., 1974 թ., էջ 252:

¹ «Եթե հայոց բանաստեղծության մեջ, ներառյալ հոգևոր երգը, ողբը հույսի շաղախով, երբեք չի դադարել, և ընդհակառակը դարձել է առավել հնչեղ ու տարածուն, ապա դրա ակունքը «Մատեանն» է: Նարեկացու ողբերգության կախարդական հնչյունները միահյուսված... Մ.Խորենացու «Հայոց պատմության» Ողբի ձայնին, XVIII դարում նոր արձագանք են ստանում»: Շ. Նազարյան, Ողբի և սթափման բանաստեղծություն XVIII դար, Եր., 1992, էջ 72:

Խմբագիր՝ **ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՁՈՅԱՆ**
Համակարգչային շարվածքը
և ձևավորումը՝ **ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ**

Չափսը՝ 70x100^{1/16}, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,
ծավալը՝ 8.9 մամուլ, տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)